

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԶՈՐԻ ԼԵՌՆԻԿԻ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ի.Կ.Կարապետյան

Երևան- 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3-10

ԳԼՈՒԽ 1. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

**1.1 «Ակադեմիական գրագրություն» դասընթացի ուսումնասիրման
հիմնախնդիրը**

լեզվաբանական բուհում.....11-32

1.2 Ակադեմիական գրավոր խոսույթի
առանձնահատկությունները.....33-57

1.3 Ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական
մոտեցումները.....58-68

**ԳԼՈՒԽ 2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՆՐԱ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ**

2.1. Ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները.....69-89

2.2. Ակադեմիական գրագրության ուսուցման վարժությունների համակարգը..90-99

2.3. Ակադեմիական գրագրության ուսուցման մոդելի արդյունավետության
փորձարարական հիմնավորումը.....100-119

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....120-123

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....124-131

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....132-188

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Արդի փուլում ակադեմիական գրագրությանը՝ որպես գրավոր հաղորդակցության միջոցի, տրվում է առանձնահատուկ կարևորություն: «Ակադեմիական գրագրություն» դասընթացն ընդունված է միջազգային չափանիշներով: Այն բազում տարիներ գոյություն է ունեցել Եվրոպայի և Ամերիկայի առաջավոր երկրներում՝ ուսումնական հաստատություններում, նրա տարրերը մասամբ ուսումնասիրվել են ՀՀ բուհական համակարգում:

Արդի փուլում օտարալեզու ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական թերությունն այն է, որ այն իրականացվում է առավելապես քերականական որոշակի կառույցների յուրացման նպատակով: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակադեմիական գրագրության ուսուցման տարբեր խնդիրները մշտապես եղել են լեզվաբանների, մեթոդիստների տեսադաշտում: Կարելի է առանձնացնել գրավոր խոսքի զարգացման վարժություններին (Մ. Գ. Աստվածատրյան 1985, 2015, С. Ф Шатилов 1986, Н. Д. Галькова 2003, В. Л. Скалкин 1983 և այլք), գիտական ոճին (Ս. Գ. Աբրահամյան 1982, Լ. Կ. Եզեկյան 2007, Հ. Յ. Պետրոսյան 2014, Н.А Буре, М.В. Быстрых, С.А. Вишнякова 2006, И.Б. Короткина 2011, Г. Б. Пospelова 2012, Н. И. Колесникова 2006, М. П. Сенкевич 1976, D. Biber 2006 և այլք), գիտական տեքստի կառուցվածքին (Հ.Յ. Պետրոսյան, Ա. Թ. Մարտիրոսյան 2009, И. В. Воробьева, Т. А. Лукашова 2010, А. Apresyan, R. Badeyan, N. Gasparyan 2010 և այլք), գրավոր խոսքի ժանրային առանձնահատկությունների բացահայտմանը (R. Badger & G. White 2000, С. Bazerman 1988, V. K. Bhatia 1993, M. Callaghan, P. Knapp, G. Noble 1993, H. Kay & T. Dudley-Evans 1998, D. Nunan 2008, J. Swales 1990 և այլք), գրավոր խոսքի ուսուցման ռազմավարություններին (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ/Ուսումնառություն, Դասավանդում, Գնահատում 2005, С. Neville 2010, J. C. Bean, D. Drenk & F. D. Lee 1982, B. Abbs 1984, J. Hartley & A. Branthwaite 1989, I. Leki 1998, A. Oshima, A. Hogue 1999 և այլք), ակադեմիական գրագրության ուսուցմանը (Հ.Յ. Պետրոսյան, Ա. Թ. Մարտիրոսյան 2009, Ն. Հովհաննիսյան, Ն. Գալստյան, Մ. Սողոմոնյան, Մ. Մալխասյան 2014, Е.А. Княжева 1999, И.Б. Короткина 2011, А. Г.

Мартынова 2006, D. Biber & B. Gray 2010, A. Brooks & P. Grundy 1991, H. Glasman-Deal 2010, B. Gray & V. Cortes 2011, M. Hairston 1998, J. Harmer 2005, L. L. Irvin 2010, H. Johnson 1996, R. R. Jordan 1997, 1999, B. Kamler & P. Thomson 2006, I. Leki 1998, A. Penrose & K. Steven 2004, D. W. Smit 2004, J. Swales & C. Freak 2012, M. Terry & J. Wilson 2010, J. Trzeciak & S. E. Mackay 1994 և այլք), խոսութային վերլուծությանը (M. McCarthy 1991, D. Nunan 1993, 2008 և այլք), ակադեմիական բառապաշարի ուսուցմանը (M. McCarthy 2008, A. Penrose & K. Steven 2004, S. Thomas & T. P. Hawes 1994 և այլք) նվիրված աշխատանքները:

Որոշ մեթոդիստներ հավասարության նշան են դնում օտարալեզու ակադեմիական գրագրության և քերականության ուսուցման միջև: Հիմնական պատճառն այն է, որ օտարալեզու ակադեմիական խոսքի ուսուցումն ենթադրում է հստակ պատկերացում ունենալ օտարալեզու ակադեմիական գրավոր խոսքի գործառական ոճերի մասին: Այստեղ խոսք է գնում նաև ոճաժանրային փոխներթափանցման մասին, քանի որ ուսանողները ներակա կամ արտակա համեմատում են մայրենի և օտար լեզուների գրավոր խոսքը ոճաժանրային կտրվածքով:

Ավանդաբար օտար լեզվի ապագա ուսուցիչների համար կարևորվում են ընթերցելու, խոսելու և ունկնդրելու հմտությունների ձեռքբերումը: Ակադեմիական գրագրությունը պետք է իր արժանի տեղը գտնի նշված լեզվական հմտությունների շարքում:

Ակադեմիական գրագրությունը գիտական ոճի ենթաոճ է, և նրան բնորոշ է գիտական ոճի հիմնական բնութագրերը: Գիտական ոճը բավականին լայն հասկացություն է: Ըստ էության, այն ներառում է տարատեսակ նշանակությամբ և բովանդակությամբ ժանրերի մի ամբողջ շարք՝ գիտական հոդված, ատենախոսություն, ռեֆերատ և այլն: Մեր դեպքում խոսքը օտարալեզու ակադեմիական գրագրության կոմպետենցիայի ձևավորման և զարգացման, ինչպես նաև ակադեմիական գրագրական կարողություններին ուղղված վարժությունների, տեխնոլոգիաների մշակման ու գործադրման մասին է, որոնց նպատակն ու խնդիրները տարբեր դասընթացներում փոփոխվում են:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է անգլերենի ակադեմիական գրագրության կարևորության, այն կազմող տարրերի ոչ պատշաճ կերպով հետազոտվածության, ակադեմիական գրագրության ուսուցման նոր ծրագրերի մշակման, ուսուցման մոդելների, տեխնոլոգիաների և ռազմավարությունների ընտրության և կիրառման անհրաժեշտությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ուսումնասիրել ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները, մշակել ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման օրինակելի մեթոդական կադապար, որն արդյունավետորեն կկիրառվի ակադեմիական գրավոր խոսքի ուսուցման դասընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆ անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցումն է լեզվաբանական ուղղվածություն ունեցող բուհում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԱԿԱՆ ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաների կիրառման մեթոդական համակարգն է մասնագիտական անգլերենի դասընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ. Օտարալեզու ակադեմիական գրագրության մասնագիտական դասընթացի արդյունավետությունը կարելի է բարձրացնել, եթե հաշվի առնվեն օտարալեզու ակադեմիական գրագրության ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմքերը, արտերկրում կուտակված հարուստ փորձը, ինչպես նաև բուն ակադեմիական գրագրության, գործնական անգլերենի դասընթացների նպատակն ու խնդիրները և ըստ այդմ ստեղծվի անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցման դինամիկ կադապար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Հետազոտության նպատակով և գիտական վարկածով պայմանավորված՝ անհրաժեշտ է եղել լուծելու հետևյալ խնդիրները.

1. վերլուծել տվյալ հիմնախնդրին վերաբերող գիտամանկավարժական և մեթոդական գրականություն,
2. բացահայտել ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում հանդիպող տիպական դժվարությունները,

3. ճշգրտել օտարալեզու ակադեմիական գրագրության դասընթացի նպատակն ու խնդիրները՝ հաշվի առնելով թե՛ բուն դասընթացը, թե՛ անգլերենի ուսուցման գործնական դասընթացները,
4. հստակեցնել ակադեմիական գրագրության ուսուցման ժամանակակից ռազմավարություններն և տեխնոլոգիաները գրելու պլանավորման, նախագծման, վերանայման, վերստուգման փուլերում,
5. մշակել օտարալեզու ակադեմիական գրագրության ուսուցման, գրավոր ակադեմիական կոմպետենցիայի ձևավորմանը նպաստող վարժությունների համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ.

- խոսույթի վերլուծության (A. Г. Мартынова 2006, E. Hatch 1992, D. Nunan 1993, 2008. M. McCarthy 1991),
- գրավոր խոսքի ժանրային վերլուծության (R. Badger & G. White 2000, V.K. Bhatia 1993, M. Callaghan, P. Knapp, G. Noble 1993, H. Kay & T. Dudley-Evans 1998),
- ակադեմիական գրագրության ռազմավարությունների մշակման և կիրառման (I. Leki 1998, J. C. Bean, D. Drenk & F. D. Lee 1982),
- գիտական հետազոտական գրավոր խոսքի ուսուցման (H. Glasman-Deal 2010, J. Swales 1990),
- ակադեմիական գրավոր խոսքի վերլուծության (D. Atkinson 2003, M. Hairston 1998, T. Hedge 1988, L. L. Irvin 2010),
- գրավոր խոսքի ռեգիստրի վերլուծության (D. Biber 2006, D. Nunan 2008),
- ակադեմիական նպատակներով անգլերենի ուսուցման (R. R. Jordan 1999, A. Kay 1996, A. Oshima, A. Hogue 1999, J. Swales & C.Freak 2012, J. Trzeciak & S. E. Mackay 1994) տեսությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Առաջադիր խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. *Տեսական*՝ հիմնախնդրին վերաբերող դիդակտիկական, լեզվաբանական և մեթոդական գրականության ուսումնասիրություն, ակադեմիական

գրագրության ուսուցման ոլորտին վերաբերող տեքստերի և խոսույթների վերլուծություն:

2. *Էմպիրիկ* հետազոտության մեթոդներ.

ա) *դիփում*. տվյալներ և փաստեր ենք հավաքագրել և մշակել թեմայի ուսումնասիրման և գործնական կիրառման համար,

բ) *թեստավորում*. բացահայտել ենք գիտափորձին մասնակցած սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, մանկավարժության սուբյեկտների անձնային և մասնագիտական որակները, պարզել թեմայի լեզվաբանական առանձնահատկությունները,

գ) *փորձարկում*, որ նպաստել է մեր հետազոտական թեմայի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների գործնական կիրառմանը:

3. *Վիճակագրական՝* փորձարարական ուսուցման արդյունքների տվյալների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ այն է, որ

- ստեղծվել է վերջնարդյունքի, գործընթացի և ժանրի վրա հիմնված մոտեցումների համեմատական վերլուծությամբ ակադեմիական գրագրության ուսուցման դինամիկ, քառաստիճան մոդել /ռեֆերատ-կուրսային աշխատանք-ավարտական աշխատանք-հոդված/,
- ուսումնասիրվել և դասակարգվել են ակադեմիական բնագրերի և խոսույթների ընտրության, նրանց միջոցով ակադեմիական գրագրության ուսուցման սկզբունքները և մեթոդները:
- մշակվել է նշված մոդելի շրջանակներում ակադեմիական բնագրերի և խոսույթների շուրջ աշխատանքի մեթոդական համակարգ, որի արդյունավետությունը հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում և նրա արդյունքների վերլուծությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

- ուսումնասիրվել են ակադեմիական գրագրության ուսուցմանը վերաբերող մեթոդական տեսությունները,

- բացահայտվել են ակադեմիական գրագրության ուսուցման առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական դասընթացում,
- հստակեցվել է ակադեմիական գրագրության ուսուցման բովանդակային և գործառական բնութագրերը մասնագիտական անգլերենի դաընթացում,
- ստեղծվել է ակադեմիական գրագրության ուսուցման արդյունավետ կաղապար, որն ընկած է առաջարկվող մեթոդական համակարգի հիմքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

- Ակադեմիական բնագիր տեքստերի և նրանց շուրջ աշխատանքի համար մշակված վարժությունների համակարգը կարող է հիմք հանդիսանալ սովորողների ակադեմիական գրավոր խոսք կառուցելու կարողության և հմտության զարգացման և ձևավորման համար:
- Ներկայացվող ակադեմիական գրագրության ուսուցման մեթոդական համակարգը և գործնական բնույթի հանձնարարականները կարող են կիրառվել նաև անգլերեն լեզվի տարբեր տեսանկյուններ զարգացնելու համար:
- Ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական մոտեցումների հիմքում ընկած որոշակի ցուցումներ և երաշխավորություններ կարող են օգտագործվել ինչպես անգլերեն լեզվի մասնագետների, այնպես էլ անգլերենի ոճաբանության, բառագիտության և դասավանդման մեթոդիկայի հարցերով զբաղվող անհատների կողմից առարկայական ծրագրեր կազմելու, ինչպես նաև սեմինարների, անգլերեն լեզվի մասնագետների վերապատրաստումներ իրականացնելու ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ: Գիտահետազոտական աշխատանքն իրականացվել է երեք փուլով:

- Առաջին (2012–2013 թթ.) փուլում որոշվել է հետազոտության թեման, շարադրանքի պլանը, հստակեցվել են հետազոտության հիմնական հասկացությունները և կարգերը, առաջադրվել են վարկածն ու խնդիրները:
- Երկրորդ (2013–2014 թթ.) փուլում հավաքագրվել և ուսումնասիրվել է հիմնական գրականությունը, շարադրվել է առաջին գլուխը, ուսումնասիրվել

են ՀՀ-ում և արտերկրի զարգացած կրթական ավանդույթներ ունեցող բուհերում սովորողների ակադեմիական գրագրության կարողության ձևավորման ծրագրերը, մոտեցումները, ռազմավարությունները:

- Երրորդ (2014-2015 թթ.) փուլում իրականացվել է փորձարարական ուսուցում, որի նպատակն է եղել ակադեմիական գրագրության գոյություն ունեցող դասընթացների ուսումնասիրությամբ բացահայտել դրանց կազմակերպման թերությունները և բարելավել դրանք՝ կիրառելով ակադեմիական գրագրության ուսուցման նոր ռազմավարություններ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև հիմնավորել առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում են կիրառված հիմնադրույթներով և տեսականորեն ու գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ՝

1. Ակադեմիական գրագրության մշակույթի ձևավորման կարևոր պայման է գրագրողության նկատմամբ համապատասխան վերաբերմունքի առկայությունը, գրագրողությունից խուսափելու ռազմավարություններին ու միջոցներին տիրապետելը:

2. Գործընթացային մոտեցման տեսանկյունից առաջնային է գրավոր տեքստի կամ խոսույթի ստեղծումը, որի համար հեղինակը պետք է կարողանա պլանավորել գրավոր խոսքի ստեղծման գործընթացը, խմբագրել փուլ առ փուլ, հստակեցնել հասցեատիրոջը՝ պահպանելով գրավոր խոսույթի կառուցման նորմերը:

3. Նույն տրամաբանությամբ՝ դասավանդողները պետք է հաշվի առնեն ուսանողների և լեզվակիրների լեզվամտածողության, մտածելակերպի, ինչպես նաև ճանաչողական տարբերությունները, ինչպես նաև այն, թե ինչ (վերջնարդյունքի, գործընթացի և ժանրի վրա հիմնված) մոտեցումներով է ուսուցանվում ակադեմիական գրագրությունը: Նշված մոտեցումների հստակեցումը կարևոր է թե՛ դասընթացը

նախագծելիս, թե՛ ուսուցման մեթոդական գործիքակազմն ընտրելիս, թե՛ ուսուցման ռազմավարությունները և ընթացակարգերը որոշելիս և կիրառելիս:

4. Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում փոխներգործուն, անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների, ռազմավարությունների մեթոդների, հնարների կիրառումը կարող է լինել արդյունավետ, եթե ապահովվում է սովորողների ակադեմիական գրագրության կոմպետենցիայի շարունակականությունը և անընդհատությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ իրականացվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի» ամբիոնում, հրատարակված աշխատանքներում, Երևանի պետական համալսարանի V միջազգային գիտաժողովում և փորձարարական ուսուցման բազա հանդիսացող օտար լեզուների ֆակուլտետի համապատասխան խմբերում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են տպագրված հրապարակումներում (տե՛ս ատենախոսության սեղմագրի վերջում ներկայացված հրապարակումների անվանացանկը):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է 135 համակարգչային էջից: Այն ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ, 5 աղյուսակ և 8 գծապատկեր:

ԳԼՈՒԽ 1. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1.1 «Ակադեմիական գրագրություն» դասընթացի ուսումնասիրման հիմնախնդիրը լեզվաբանական բուհում

Արտասահմանի հարուստ ավանդույթեր ունեցող բուհերում «Ակադեմիական գրագրություն» դասընթացը ուսումնական ծրագրերի կարևոր բաղադրիչ է: Այն ներառվում է թե՛ պարտադիր, թե՛ ընտրովի դասընթացներում: Ինչ վերաբերում է ուսուցման նորագույն ռազմավարությունների և տեխնոլոգիաների կիրառմանը, ապա դրանք շարունակաբար վերանայվում և թարմացվում են: Նույնը վերաբերում է ուսումնամեթոդական գրականությանը, դասագրքերին, ուսումնական ձեռնարկներին և այլն: Ավելին, ինչպես նշում է Ի.Բ. Կորոտկինան. «Արևմուտքում այն կենտրոնական տեղ է զբաղեցնում ակադեմիական հմտությունների զարգացմանն ուղղված այլ հմտությունների շարքում, ինչպիսիք են ակադեմիական ընթերցանությունը, ակադեմիական ունկնդրումը և ակադեմիական բանավոր խոսքը» (Короткина 2011):

Անկասկած, ՀՀ-ի բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական գրագրությունն այս կամ այն տեսքով վաղուց մտել է ուսումնական ծրագրերի մեջ, սակայն կրթական նոր իրավիճակում ակադեմիական գրագրության ուսուցման կայացումը դեռևս նախնական փուլում է գտնվում և դրա համակողմանի ուսումնասիրության և զարգացման համար պահանջվում է ուսումնասիրել արտերկրյա հարուստ փորձը, ՀՀ-ի լեզվական բուհերին ներկայացվող արդի պահանջները, ինչպես նաև գրավոր խոսքի ուսուցման հայրենական ավանդույթները:

Ինչպես հայտնի է, ժամանակակից տեղեկատվական դարում ակադեմիական գրագրության ուսուցումն օգնում է ուսանողներին, նախ և առաջ, արագ և ճիշտ ընտրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ավելին, տեղեկատվության հսկայաձավալ հոսքում ուսանողները պետք է ոչ միայն պասիվորեն յուրացնեն ընտրված նյութը, այլև

կարողանան այն մշակել, համադրել, վերլուծություն կատարել, առանձնացնել առաջնայինը երկրորդականից և քննադատաբար մոտենալ դրան: Այս նպատակով նրանք պետք է համապատասխան հմտություններ զարգացնեն, որտեղ առանցքային է ակադեմիական գրագրության զարգացման հիմնախնդիրը: Անկախ այն բանից, թե ուսանող ես, դասավանդող, թե գործարար, ակադեմիական գրագրության հմտությունները խիստ անհրաժեշտ են մարդկանց կենսագործունեության տարբեր ոլորտներում: Ակնարկները /Էսսեները/, զեկուցումները, ամփոփումները /անոտացիաներ/, հաղորդումները, ելույթները, գիտական պարբերականներում ընդգրկված բազմաբնույթ նյութերը ակադեմիական ոճով գրված փաստաթղթերի մի փոքր մասն են կազմում: Վերոհիշյալով չեն սպառվում ակադեմիական ոճով գրված փաստաթղթերի շարքը, այն շատ ավելի բազմազան է ու ընդգրկուն:

Ինչ վերաբերում է օտար լեզվով «Ակադեմիական գրագրություն» առարկայի դասավանդմանը, ապա այստեղ ևս կան բազում խնդիրներ, որոնք անպայման պետք է հաշվի առնվեն դասավանդման ընթացքում: Այստեղ, նախ, պետք է հաշվի առնել այն տիպաբանական բնույթի դժվարությունները, որոնք առաջ են գալիս ոչ միայն բառային, քերականական, այլև մշակութային, միջմշակութային, խոսույթային փոխներթափանցման հաղթահարման գործընթացում:

«Ակադեմիական գրագրություն» դասընթացի ուսումնասիրման գործընթացում ուսանողները տարբեր բնույթի դժվարություններ են հաղթահարում: Դա, նախ և առաջ, վերաբերում է ընդհանուր լեզվական ունակությունների ցածր մակարդակին: Մասնավորապես, գրավոր խոսքի կամ գրագրական հմտությունները, որպես կանոն, զգալիորեն հետ են մնում խոսքային գործունեության մյուս տեսակների զարգացման մակարդակից: Դրանով պայմանավորված՝ մասնագիտական մակարդակում օտար լեզու ուսումնասիրող ուսանողները լուրջ դժվարություններ են հաղթահարում ուսուցման տարբեր փուլերում ռեֆերատներ, զեկուցումներ, հաշվետվություններ գրելիս: Պատահական չէ, որ մագիստրոսական կրթության ավարտական փուլում և անգամ ասպիրանտուրայում լուրջ խնդիրներ են առաջ գալիս թեզիսներ, հոդվածներ գրելիս:

Ակադեմիական գրագրությունն առնչվում է գիտահետազոտական, ուսումնառական գործունեությանը և միտված է սովորողների հետազոտական կարողություններն ու հմտությունները զարգացնելուն և ձևավորելուն:

Ընդհանուր առմամբ, ակադեմիական գրագրությունը գիտական ոճի ենթաոճ է, և նրան բնորոշ է գիտական ոճի հիմնական բնութագրերը, որի բնորոշ հատկանիշներն են ընդհանրականությունը, նորմատիվությունը, ճշգրտությունը, շեշտված տրամաբանությունը (Кожина, Дускаева, Салимовский 2008): Այս բնութագրերը ընդհանուր են ցանկացած լեզվի համար: Բացի վերը նշված հատկանիշներից գիտական ոճին խիստ բնորոշ է նաև շարադրման պաշտոնական ոճը, ինչը ենթադրում է ակադեմիական բառապաշարի գործածում, առաջին դեմքի փոխարեն երրորդ դեմքի դերանվան կիրառում, բառերի հստակ ընտրություն և ոճի հղկվածություն: Պրոֆ. Գաբրիելյանը նշում է, որ գիտական գրավոր խոսքում բառերը պետք է գործածվեն իրենց ուղղակի, առաջնային, եզրույթային իմաստով՝ խուսափելով փոխաբերական իմաստներից, բազմիմաստությունից, հուզարտահայտչական երանգավորումից (Գաբրիելյան 2007):

Ինչպես հայտնի է, մարդն իր կյանքի ընթացքում այս կամ այն կերպ առնչվում է տարբեր ոճերի, որոնք կիրառվում են և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում: Ակադեմիական գրավոր խոսույթի հանգամանակից վերլուծության համար, նախ և առաջ, անհրաժեշտ է համապարփակ պատկերացում ունենալ գործառական ոճերի վերաբերյալ, ինչը թույլ կտա դիտարկել ակադեմիական գրավոր խոսույթի առանձնահատկություններն այլ ոճերի համեմատությամբ: Ընդունված է տարբերել հինգ գործառական ոճ՝ գիտական, պաշտոնական կամ վարչագործարարական, հրապարակախոսական, գեղարվեստական և առօրյա կամ առօրյա- խոսակցական, ժողովրդախոսակցական (Աբրահամյան 1982):

Պաշտոնական ոճը գործադրվում է բոլոր տեսակի պաշտոնական փաստաթղթերում: Պաշտոնական ոճի լեզվական կարևոր հատկանիշն արտահայտման անդիմությունն է, քանի որ հաղորդակցումն իրականացվում է ոչ թե խոսողի անունից և հասցեագրվում որոշակի խոսակցի, այլ ունենում է ընդհանրական բնույթ (Պետրոսյան 2014): Բնորոշ հատանիշներից են շարադրանքի սեղմությունն ու

ձևակերպումների ճշգրտությունն ու միանշանակությունը: Հրապարակախոսական ոճը հրապարակախոսության լեզուն է, հետևաբար, աչքի է ընկնում իր քարոզչական բնույթով: Լեզվական կարևոր հատկանիշներից են սեղմությունը, անհարկի մանրամասնություններից խուսափելը և ներգործության լեզվական միջոցների գործադրումը, պարզությունը և հանրամատչելիությունը (Պետրոսյան 2014): Գեղարվեստական ոճի գործածության ոլորտը գեղարվեստական գրականություն է: Այստեղ առատորեն գործածվում են պատկերավորման ու արտահայտչական տարաբնույթ միջոցներ՝ մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ: Այս ոճն աչքի է ընկնում նաև լեզվական միջոցների օգտագործման բազմազանությամբ: Գեղարվեստական խոսքում կարող են գործածվել լեզվական մյուս տարբերակներին բնորոշ լեզվական ու ոճական միջոցներ, լեզվի ոճական տարբեր շերտերին պատկանող բառեր ու արտահայտություններ: Ելնելով աշխատանքի նպատակադրումից առավել մանրամասն անդրադառնանք գիտական ոճին: Գիտական ոճը կիրառվում է գիտահետազոտական աշխատանքի բնագավառում՝ գիտական տարբեր ճյուղերում, տեխնիկայում, գիտական մենագրություններում, ատենախոսություններում, դասախոսությունների ժամանակ: Գիտական շարադրանքում գրեթե չեն գործածվում պատկերավորման միջոցներ, լեզվի հուզաարտահայտչական տարրեր: Դա բացատրվում է նրանով, որ այն աչքի է ընկնում շարադրանքի օբյեկտիվությամբ, այսինքն՝ գիտնականը, գիտական աշխատանքի հեղինակը նյութը շարադրելիս ձգտում է բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը՝ փաստերի ցուցադրման և ապացուցման մեթոդով: Հետևաբար, գիտական ոճի բնորոշ կողմը դրույթների, ճշմարտությունների ապացուցումն է դատողությունների միջոցով: Գիտական ոճում մտածողությանը հատուկ են վերացարկումն ու ընդհանրացումը: Գիտական ոճի այս հատկանիշին մեծապես նպաստում են եզրույթների առատ կիրառությունը, որոնք, որպես կանոն, մենիմաստ են (Մարության 2000): Գիտական ոճ հասկացության ընդգրկունությունը ենթադրում է բազմաբնույթ բովանդակային առանձնահատկություններով ու գործառույթներով ժանրային մի ամբողջ շարք՝ գիտական հոդվածից մինչև արտադրատեխնիկական գրականություն: Ժանրերի այսպիսի բազմազանությունը պետք է որ ենթադրի գիտական ոճի ենթաբաժանումներ՝

ըստ գիտության տարբեր բնագավառների: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տարբեր բաժանումներ ըստ ենթատեսակների: Ռոզենտալը նշում է, որ գիտական ոճն ունի իր տարատեսակները՝ ենթաոճերը: Դրանք են՝ գիտահանրամատչելի, գիտահրապարակախոսական, ուսումնագիտական, գիտատեխնիկական (Розенталь 1987): Իսկ Կոլեսնիկովան առանձնացնում է հետևյալ ենթաոճերը՝ բուն գիտական, ուսումնագիտական, գիտահանրամատչելի, գիտատեղեկատվական (Колесникова 2006): Սենկևիչը տալիս է հետևյալ տարաբաժանումը՝ բուն գիտական/ակադեմիական/, գիտական-տեղեկատվական, գիտական-ուղեցուցային, ուսումնագիտական և գիտահանրամատչելի (Сенкевич 1984): Նույն հեղինակը կարծում է, որ վերջին երկուսը դժվար է համարել բուն գիտական ենթաոճեր, քանի որ առաջինն ունի ուսուցողական բնույթ, իսկ երկրորդում շարադրանքը մոտ է գեղարվեստականին: Հաշվի առնելով գիտական ոճի ենթաոճերի բազմազանությունն ու տարաբնույթ տարաբաժանումները՝ կարելի է ընդունել հետևյալ տարաբաժանումը՝ բուն գիտական, ուսումնագիտական, գիտահանրամատչելի: Հայ իրականության մեջ Ջահուկյանն ու Խլղաթյանը ևս ընդունում են հետևյալ տարաբաժանումը՝ բուն գիտական կամ ակադեմիական, գիտաուսումնական և գիտահանրամատչելի (Ջահուկյան, Խլղաթյան 2007): Բուն գիտական ենթաոճը գործադրվում է մասնագետներին հասցեագրված այնպիսի գիտահետազոտական աշխատություններում, ինչպիսիք են գիտական հոդվածը, հաշվետվությունը, թեկնածուական ատենախոսությունը, մենագրությունը և այլն: Որպես գիտական ոճի բուն, առանցքային հատկանիշներ առանձնացվում են տեղեկատվության ճշգրտությունը, փաստարկների ապացուցողականությունը, շարադրանքի տրամաբանական կառուցումը, ձևերի հակիրճությունը (Ворожьёва, Лукашова 2000): Քանի որ այս ենթաոճով գրված աշխատությունները հասցեագրված են որոշակի մասնագետների, այսինքն՝ նախատեսված չեն ընթերցողների լայն շրջանակների համար, ուստի բովանդակության մատչելիությունն ոչ պարտադիր պայման է: Սակայն, բուն գիտական ոճում պարտադիր ու անհրաժեշտ պայման է խոսքի հստակությունը, մաքրությունը, ճշգրտությունը, պարզությունը: Այս ենթաոճի բառաշերտը կազմում են մասնագիտական բառերը, եզրույթները, եզրույթային կապակցությունները, որոնք

կիրառվում են իրենց անվանողական, բառարանային նեղ իմաստով՝ առանց փոխաբերական, հուզական երանգների: Ուսումնագիտական կամ գիտաուսումնական ենթաոճը գործադրվում է ուսումնական բնույթի աշխատություններում՝ դասագիրք, ուսումնական ձեռնարկ, ուսումնական դասախոսություն (Ջահուկյան, Խլղաթյան 2007): Այս ենթաոճին բնութագրական են նաև ուսումնառական տեքստերը՝ ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանք և այլն: Այս ենթաոճում նյութի շարադրանքն ուսուցողական է: Տրվում են օրինակների լուսաբանումներ, համեմատություններ, մեկնաբանություններ (Воробьева, Лукашова 2000): Նյութի շարադրման ձևը նկարագրությունն է, մեջբերումները քիչ են: Թույլատրելի են նյութի կրկնություններ, սակայն մեկ այլ մակարդակում՝ ուսուցման մեկ այլ խնդիր իրագործելու համար: Ուսումնագիտական ենթաոճի համար պարտադիր պայմաններ են հստակությունը, պարզությունը, ինչպես նաև նյութի մատչելիությունը՝ ուսումնառողների նախնական գիտելիքներին համապատասխան: Գիտահանրամատչելի ենթաոճը նախատեսված է ընթերցողների լայն զանգվածների համար, հետևաբար, այն պետք է լինի գիտական ոճի պարզեցված շարադրանքը: Տվյալ ոճն ունի տեղեկատվական գործառույթ, իսկ նպատակն ընթերցողին հետաքրքրելն է:

Գիտական ոճն իր ենթաոճերով առանձնանում է գեղարվեստական, հրապարակախոսական, գրական-խոսակցական, ժարգոնային-խոսակցական և խոսքի այլ տեսակներից: Չնայած այն հանգամանքի, որ գիտության բոլոր բնագավառներում գիտական գրավոր խոսքին ներկայացվող ընդհանրական պահանջները նույնական են՝ այդուհանդերձ, գիտության լեզուն, ըստ էության, տարանջատված է: Օրինակ՝ ֆիզիկայի և լեզվաբանության ոլորտներին նվիրված աշխատություններն իրենց լեզվաոճական առանձնահատկություններով խիստ տարբեր են: Դրա հետ մեկտեղ, գիտական գրագրության բոլոր տեսակներն ընդհանրություն ունեն: Առաջին ընդհանրությունը եզրույթների գործածությունն է, որով ապահովվում է գիտական աշխատանքի գիտականության սկզբունքը: Երկրորդ ընդհանրությունը գիտական գրավոր խոսքի հեղինակի և հասցեատիրոջ երկմիասնությունն է, այսինքն՝ այն թե ում է ուղղված գրավոր խոսքը կամ խոսույթը: Օրինակ՝ ինքնին հասկանալի է, որ լեզվաբանական համակարգի օրինաչափություններով չհետաքրքրվող մեկը չի

կարող որևէ կերպ ներառվի լեզվաբանական խոսույթի մեջ: Այստեղ կարևորը այն է, որ կողմերը լիարժեքորեն ներառված լինեն տվյալ խոսույթային հանրության մեջ, այլապես խոսույթը չի կայանա: Սակայն որքան էլ շեշտենք հեղինակի և հասցեատիրոջ ներգրավածության գաղափարը մեկ խոսույթային միավորի մեջ, այնուամենայնիվ մեծ է գիտական աշխատանքի հեղինակի պատասխանատվությունը: Գիտական հաղորդման, գրավոր թե՛ բանավոր, հեղինակը պարտավոր է սեփական մտքերն առավելագույնս հստակ ձևակերպելու համար ընտրել այնպիսի բառապաշար, ոճական հնարներ, քերականական կառույցներ, որոնք չեն նպաստի իմաստային կորուստների, աղավաղումների ու թյուրըմբռնման: Բացի լեզվաոճական միջոցների պատշաճ ընտրությունից՝ հեղինակը պարտավոր է նաև զանազան տեխնիկական պահանջների շնորհիվ/թավ, շեղատառ, գծապատկերներ, աղյուսակներ/ ապահովել արդեն հայտնի նյութից նորին անցնելը/թեմա-ռեմա/, նյութի կարևոր հատվածները առանձնացնելը, վերնագրերը, գլուխները, ենթագլուխները հստակեցնելը և այլն: Ըստ էության, այստեղ մենք գործ ունենք հարատեքստային միջոցների տեղին գործադրման հետ:

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում այս կամ այն չափով առնչվում է գիտական ոճի ենթատեսակներից մեկին, որ կիրառվում է և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում: Սակայն գիտական ոճը սովորաբար հանդիպում է գրավոր խոսքում, ուստի անհրաժեշտ է, որ գոյություն ունենան այնպիսի չափանիշներ, ակադեմիական գրավոր խոսույթի բովանդակությանը ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնցով կառանձնանա տվյալ ոճը այլ ոճերից: Ակադեմիական գրավոր խոսույթ ասելով, նախ և առաջ, հասկանում ենք բուն գիտական և ուսումնագիտական տեքստերի վերլուծություն և դրանց առանձնահատկությունների վերհանում: Ուստի, Բուրեն առանձնացնում է ակադեմիական գրավոր խոսույթի բովանդակային հետևյալ առանձնահատկությունները (Byre и др. 2003):

1. Կապակցվածությունը՝ նախադասությունների և տեքստի հատվածների միջև կապակցող միավորների գործածությունն է: Անգլերենում առկա է նախադասությունների և տեքստի հատվածների միջև կապակցող միջոցների մի քանի տեսակներ (Halliday 1976):

❖ Հղում (reference). լինում է ներտեքստային և արտատեքստային: Ներտեքստային հղման դեպքում գործածվում են հետևյալ բառային միավորները՝ it, he, him, this, that, here, there, որոնք կա՛մ փոխարինում, կա՛մ մատնանշում են այլ բառեր և/կամ տեքստի հատվածներ: Օրինակ՝ The most common reasons given were that computers made writing ‘easier’, facilitated the correction of spelling and punctuation mistakes, were ‘modern’, ‘useful’, ‘interesting’, and ‘faster’ than writing by hand. **This** corroborates conclusions from other researchers who report that CMC in the second language classroom facilitates general communication and the revision process (Gray et al 2011) Նախաբերության դեպքում հղում է կատարվում տեքստում նախապես ասվածին/ասվածը, վերոհիշյալը/, իսկ հետաբերության դեպքում՝ հետագա ասելիքին/ստորև բերվող, այսուհետ/:

❖ Փոխարինում (substitution). բառի կամ արտահայտության փոխարինումն է իմաստով մոտ մեկ այլ լեզվական միավորով: Օրինակ՝ Apparently, incinerators can be considered the best way of getting rid of non-recyclable rubbish so the council intends to install **one** here. Նմանօրինակ փոխարինող միավորներ են ones, so, do և այլն:

❖ Բառային միջոցներով արտահայտվող կապակցվածություն (lexical cohesion). միևնույն երևույթը կամ առարկան մեկ այլ բառով կամ բառակապակցությամբ արտահայտելու եղանակ է, և/կամ իմաստային կապակցվածությունն արտահայտվում է ընդհանրացնող կամ մասնավորեցնող տարրերի միջոցով: Օրինակ՝ Researchers have found that individuals who are skilled at music tend to have a number of positive **features**. These include **qualities** such as creativity, energy, and the ability to work well. (Terry et al 2010) The country is facing a range of **problems** including inflation and high unemployment. /problem բառով ընդհանրացվում են թվարկվող մյուս խնդիրները/

2. Համակարգվածություն՝ տեքստին առանձին հատվածների փոխկապակցվածությունն է (coherence): Օրինակ՝ Synonyms, words that have the same basic meaning, do not always have the same emotional meaning. For example, the words stingy and frugal both mean ‘careful with money’. However, calling someone stingy is an insult, but calling frugal is a compliment. Similarly, a person wants to be slender but not skinny, aggressive but not pushy. Therefore, you should be careful in choosing words

because many so-called synonyms are not really synonymous at all. (Oshima & Hogue 2009)

Օրինակից պարզ է, որ պարբերությունն ունի հետևյալ կառուցվածքը՝ ա. ենթահիմք, որը հաղորդման ելակետն է, սակավ տեղեկություն պարունակող մասը, բ. ասույթ, որը հաղորդման հիմնական բովանդակությունը պարունակող մասն է, գ. ամփոփում, որը ի մի է բերում հաղորդման ասելիքը: Այսպիսով՝ պարբերությունն ունի ենթահիմք-ասույթ-ամփոփում հաջորդականությունը, որը համապատասխանում է պարբերության կառուցման դասական կանոններին:

3. Ամբողջականությունը՝ տեքստը կազմող մասերի փոխկապակցվածությամբ ասելիքն ավարտին հասցնելու, ամբողջացնելու հմտությունն է: Գործադրվում են համապատասխան ամփոփող, ընդհանրացնող բառային միավորներ և արտահայտություններ՝ «այսպիսով», «ամփոփելով» և այլն (Буре и др. 2003):

Պետրոսյանն այս շարքին ավելացնում է «վերացարկվածություն» հասկացությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գիտական ոճում մտածողության իրականացման ձևը դատողություններն ու մտահանգումներն են, որոնք ներկայացվում են վերացարկված ու ընդհանրացված: Գիտական գործունեության մեջ սա արտահայտվում է մակաժման, արտաժման, մտովի մոդելավորման, ձևայնացման, իդեալականացման և վերացարկման մյուս գործողությունների կիրառմամբ: Լեզվական մակարդակում վերացարկվածությունն արտահայտվում է վերացական հասկացություններ արտահայտող գոյականների առատ կիրառման միջոցով/innovation, acknowledgement/: Մյուս հասկացությունը ճշգրտությունը և եզրույթային հազեցվածությունն է: Ոճի այս հատկությունը պահանջում է տեղեկույթի ճշգրիտ և լիակատար լուսաբանում, որն ենթադրում է տվյալ խոսքի բովանդակության արտահայտում ստույգ դատողություններով և ճշգրիտ հասկացություններով: Գիտական դատողությունների հիմքում ընկած են հասկացությունները, հետևապես գիտական շարադրանքի հենքը հասկացություններ նշանակող եզրույթներն են: Եվ կարևոր չէ, թե գիտական շարադրանքում նույն եզրույթը քանի անգամ կարող է հանդիպել, կարևորն այն է, որ առանց դրանց գիտական աշխատությունը չի կարող կառուցվել: Միջին հաշվարկով գիտական շարադրանքի ընդհանուր բառապաշարի 15-25% կազմում են եզրույթները (Розенталь 1987):

Կարևոր հասկացություն է օբյեկտիվությունը, որը պահանջում է օբյեկտիվ շարադրանք՝ առանց հեղինակային վերաբերմունքի դրսևորման/ in my opinion, to my mind/: Հեղինակային վերաբերմունքը կարծիքի կամ համոզմունքի ձևով դրսևորվում է, երբ հեղինակը քննական-քննադատական մոտեցմամբ սկզբնաղբյուրները վերլուծում է, սակայն առանց հուզազգացական երանգների: Չեզոք շարադրանքն ևս ընթերցողի մեջ կարող է առաջացնել հույզեր, բայց դրանք ոչ թե հեղինակային հույզերի պատասխանն են, այլ գիտական փաստերը գիտակցելու և դրանց արձագանքելու ձև: Գիտական շարադրանքում լեզվական առումով օբյեկտիվությունն ապահովվում է անդեմ նախադասությունների կիրառմամբ/it is known that..., it can be concluded that...../, ինչպես նաև I, you անձնական դերանունների բացառմամբ: Գիտական շարադրանքում հեղինակի տեսակետը սովորաբար արտահայտվում է we, our, us դերանունների օգնությամբ, ինչպես նաև մի շարք բառաքերականական միավորների միջոցով, որոնք անուղղակիորեն, թաքնված կերպով «ակնարկում» են հեղինակի դիրքորոշումների մասին: Այս երևույթը առավել հայտնի է հեջինգ/hedging/ եզրույթով, որի մասին կխոսվի մեր հետագա շարադրանքում:

Գիտական շարադրանքի ճշգրտությունն ապահովվում է գիտական բառապաշարի տերմինաբանությամբ և եզրույթների ստույգությամբ, ինչպես և բառերն իրենց ուղիղ, անվանողական իմաստներով գործածելով: Ճշգրտության պահանջն այս ոճում բացառում է նաև լեզվական պատկերավորման միջոցների/ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, չափազանցություն/ գործածությունը: Դրանցից թերևս համեմատությունը միայն կարող է խիստ հազվադեպ հանդիպել գիտական ոճում՝ համոզականություն, պարզություն ու մատչելիություն ապահովելու նպատակով: Ճիշտ է, այսպես գիտական խոսքը դառնում է ոճականորեն միապաղաղ, սակայն դա նրա առանձնահատկությունն է և ոչ թե թերությունը:

Ակադեմիական գրավոր խոսույթի կարևոր բնութագիր է սեղմությունը: Սա ոճի այն հատկությունն է, որ պահանջում է տվյալ բովանդակությունն արտահայտել լեզվական համեմատաբար ավելի քիչ միավորներով: Սեղմության առումով գիտական ոճի առանձնահատկություններից է տեղեկույթը նշանների տեսքով՝ գիտությանը բնորոշ ձևայնացված լեզվով ներկայացնելը, որն ընդգրկում է գծապատկերեն, գծագրեր,

նկարներ, տրամագրեր, բանաձևեր և այլն: Բացի վերընշված պահանջներից գիտական շարադրանքի սեղմությունն ապահովող միջոցներից են՝ գոյականով կազմված բառակապակցությունները /productivity increase, quality improvement, baggage inspection procedure/, ինչպես նաև ածական+գոյական բառակապակցությունները /an unusual circumstances, a large number/, դերբայական դարձվածով կառույցներ/companies supplying energy, greenhouse gas emission driven by a surge in coal use/, նախդիրավոր կապակցություններում /to determine the effect of salt on the growth and development of paddy, the first step in seeking quicker treatment/, ներդրյալ կառույցներ /In four cohorts(Athens, Keio, Mayo, and Florence), investigators stated that...../ (Biber 2010): Ներդրյալ արտահայտությունների առատ գործածությունը բխում է գիտական շարադրանքի բնույթից: Դրանք ունեն հավելյալ լրացումների արժեք, ուստի գիտական խոսքում դրանց գործածությունն ոչ միայն կարևոր, այլև պարտադիր է (Մարության 2000): Ներդրյալ արտահայտություններին իրենց գործառույթով մոտ են բաղիյուսական (copulative) կապակցությունները, քանի որ ունեն մեկնական, հավելական, մակաբերական իմաստներ: Մեկնական իմաստներ են արտահայտում հետևյալ բառային միավորները՝ that is to say, that is why, so, քանի որ բացատրում են նախորդի միտքը: Մակաբերական իմաստ են արտահայտում hence, therefore, thus, for this reason, consequently, as a result, it follows that, to this end բառային միավորները, քանի որ հաջորդ նախադասության միտքը բխեցնում են նախորդից: Հավելական իմաստ են արտահայտում and, but, also, besides, moreover, furthermore, too, in addition, firstly, քանի որ արտահայտում են լրացուցիչ տեղեկություն արտահայտող միտք:

Ակադեմիական գրավոր խոսույթը պետք է ոճական առումով լինի պարզ, որը պահանջում է տվյալ բովանդակությունն արտահայտել առավել պարզ ու հստակ լեզվական կառույցներով: Երբին խոսքն ոչ միայն անհասկանալի է, այլև՝ պակաս ազդեցիկ: Նույնքան կարևոր է ապահովել գրավոր խոսույթի մաքրությունը, կանոնավորությունը: Ոճի կանոնավորությունը պահանջում է, որ խստիվ պահապանվեն գրական լեզվի օրինաչափությունները, քերականական կանոնները: Մաքրությունը պահանջում է գրական-գիտական բառապաշարի գործածություն,

լեզվական մերժելի միջոցների՝ ժարգոնի, արգոյի, գոեհկաբանության, մակաբույծ բառերի բացառում (Պետրոսյան 2014): Ակադեմիական գրավոր խոսքում հանդիպում են նաև հետևյալ մաքրամոլության դրսևորումները՝

- բառապաշարի առավել պաշտոնական տարրեր՝ accord/convention - agreement, adjudicate-judge, albeit-although, appeal for-ask for, virtually-almost, more or less, administer-give, advocate-support, encourage, improper-wrong, pledge-promise, rest on-be based on, in respect of/with respect to-with regard to, as far as X is concerned, inappropriate-unsuitable, recently-lately, dispose of-get rid of, in excess of-over, higher than, good - positive, bad - negative, big - considerable.

- անդեմ կառույցներ՝ There is a substantial difference.... . It is obvious... .

- թեական, երկբայական իմաստով բառային միավորներ և եղանակավորող բայեր՝ possibly, probably, seem to, appear, may, might: Տվյալ բառային միավորների գործադրմամբ ակադեմիական գրավոր խոսքում հեղինակը խուսափում է «ուղիղ» պատասխաններ տալուց/hedging/:

- կրավորական նախադասություններ՝ The values were measured automatically by the control system. The stability of the process is enhanced by co-operation. The precise mechanism responsible for this antagonism cannot be elucidated.

Այսպիսով, հնարավոր չէ իրականացնել ակադեմիական գրագրություն առանց փաստարկման և վերլուծական ընթացակարգերի պահպանման: Այդ առումով Լ. Իրվինը նշում է, որ ակադեմիական գրագրությունը, լինելով փաստարկման կամ ապացուցողական (argumentative), պետք է զարգացնի վերլուծական կարողություններ: Նա գրում է, «...ակադեմիական գրագրությունը, նախ և առաջ, վերլուծություն է ... : Այս վերլուծությունը «խարխլում է» ուսումնասիրվող թեման և հնարավորություն է տալիս ավելի մանրազնին շոշափել այն, և այդ իսկ «զննության» արդյունքում երևան են գալիս նոր գաղափարներ» (Irvin 2010):

Ինչպես հայտնի է, ակադեմիական գրագրության հիմքը գրական լեզուն է: Դրանով պայմանավորված՝ գիտնականները համակարծիք են, որ գրական լեզվի բառապաշարից ու նորմերից շեղումները հնարավորինս պետք է բացառել: Շարադրանքն ունի ապացուցողական, փաստարկված բնույթ: Նախադասությունների

շարադասությունը կայուն է: Առատորեն կիրառվում են երկկազմ, բարդ ստորադասական նախադասություններ, որտեղ նախադասությունների կապակցությունը շաղկապավոր է, սովորաբար նպատակ, հետևանք, պատճառ ցույց տվող շաղկապներով, որոնցով և ապահովվում է գիտական շարադրանքի տրամաբանական, պատճառահետևանքային կապը (Եզեկյան 2007): Օգտագործվում են մեծ քանակությամբ կապեր և շաղկապներ, որոնց կիրառմամբ հնարավոր է դառնում կապակցել նախադասությունները, պարբերությունները՝ ընդգծելով դրանց պատճառահետևանքային կապերը: Ակադեմիական գրագրության սկզբունքներից մեկն այն է, որ գործածվում են հիմնականում պատմողական բնույթի նախադասություններ, իսկ հարցական ու բացականչական նախադասությունները բնորոշ են միայն հասարակական գիտություններից գրականագիտությանը, պատմագիտությանը, քաղաքագիտությանը և այլն, որտեղ հեղինակային և գնահատողական վերաբերմունքի անհրաժեշտություն կա (Պետրոսյան, Մարտիրոսյան 2009): Ակնհայտ է, որ ակադեմիական բառապաշարի անհրաժեշտ պաշար չունեցող անձը չի կարող հասնել ցանկալի արդյունքի տվյալ գիտության ոլորտում: Ուստի, նպատակահարմար է ներմուծել գիտական բառապաշարը՝ ըստ խոսքի մասերի: Ակադեմիական գրավոր խոսքում հաճախադեպ հանդիպող գոյականներից են՝ subject, theme, topic, issue, theory, model, nature, principle, aspect, feature, scope, pattern, standpoint և այլն: Նպատակահարմար է նաև ներմուծել բառապաշարը՝ դրա համագործակցական կամ չեզոք և գրական-գիտական տարբերակների համեմատությամբ: Քանի որ անգլերեն ակադեմիական գրավոր խոսքում կա միտում գոյականների առատ կիրառության, ուստի խորհուրդ է տրվում հնարավորինս բայերը փոխարինել գոյականներով: Այս նպատակին է ծառայում բայ + գոյական կառույցը (verb+noun): Օրինակ՝ explain=to give/provide/offer explanation of, for; explore=carry out an exploration of; emphasis=place/put emphasis on; describe=give/provide a description of; classify=make/provide classification of; illustrate=provide an illustration of. (Տե՛ս հավելված 1)

Ակադեմիական բառապաշարի յուրացման կարևոր պայման է ակադեմիական գրագրության ուսուցման աստիճանական, փուլային ուսուցումը:

Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում դիդակտիկական մատչելիության սկզբունքն այլ բովանդակային բնութագրեր է ձեռք բերում: Ըստ այդմ՝ գիտական աշխատությունը պետք է լինի չափազանց պարզ և հասկանալի. այն պահպանելով զուտ գիտական շարադրանքը՝ պետք է լինի ոչ թե անշունչ, միօրինակ, կաղապարային, այլ ինքնատիպ, խոսուն և գրավիչ (Պետրոսյան, Մարտիրոսյան 2009):

Անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցման կարևոր և հայտնի կանոններից կամ պահանջներից կարելի է առանձնացնել հետևյալը՝

- խուսափել կրճատումներից (contractions): Օրինակ՝ don't, can't, won't, info, ad,
- խուսափել ոչ գրական/ժարգոն, բարբառ/ բառապաշարի գործածությունից (colloquialisms): Օրինակ՝ wanna, gonna, outta, go bananas/go insane/, yonder, bamboozle /deceive/, ruckus /commotion/,
- խուսափել խոսակցական լեզվում գործածվող կաղապարային արտահայտությունների/կաղապարներ/(cliche's) կիրառումից: Օրինակ՝ above board-legitimate, to reach a happy medium-to reach an acceptable compromise, to get through-to survive, part and parcel-intrinsic to, easier said than done-more difficult in practice, beyond a shadow of doubt-definitely, in recent years-recently, to pay lip service to - to support through words but not through actions, to get out of hand - to be no longer under control, a stumbling block - point of contention, to explore every avenue - to investigate alternatives, with regard to/with respect to - about, all things considered - after considering, to a certain extent-partially, we beg to acknowledge-we acknowledge.
- խուսափել հուզական բառերից/emphatic words/: Օրինակ՝ *really, very, just, totally, deeply, utterly*, քանի որ դրանք խոսքին հաղորդում են անպատեհ հուզականություն: Օրինակ՝ It caused a *really* big reaction. It caused a considerable reaction. It caused a *dramatic* reaction. It caused an *explosive* reaction.
- խուսափել ճարտասանական բանադարձումներից /ճարտասանական դիմում, բացականչություն, հարց (rhetorical questions): Ճարտասանական հարցերը շարահյուսական այնպիսի բանադարձումներ են, որոնք թեև արտահայտությամբ հարցական են, բայց բովանդակությամբ հաստատական, հետևաբար հարցումը չի

ակնկալում որևէ պատասխան ունկնդրողից, քանի որ ունկնդիրը կա՛մ գիտի հարցի պատասխանը, կա՛մ այն արդեն իսկ ծանոթ ճշմարտություն է: Օրինակ՝ Industrial sites cause vast amounts of environmental pollution, so why do we still use them?

Ճարտասանական հարցի միջոցով շարադրանքին հաղորդվում է ավելորդ հուզականություն, խոսքը դառնում է աշխույժ, բազմազան, ցայտուն, հեղինակի տարբեր վերաբերմունքներ պարունակող:

Առաջարկվում է նաև մակբայները տեղադրել բայերի միջև և ոչ թե նախադասության սկզբում կամ վերջում: Օրինակ՝ Then the solution can be discarded. The solution can then be discarded. The blood is withdrawn slowly. The blood is slowly withdrawn. (<http://unilearning.uow.edu.au/academic/2e.html>):

Տվյալ պահանջը նույնական է նաև անորոշ դերբայով/ինֆինիտիվ/ կառույցների պարագայում, երբ մակբայները «ճեղքում», «զատում», «տարանջատում» են անորոշ դերբայով լիակազմ կապակցությունները (split infinitives): Օրինակ՝ Neural networks have the ability to classify correctly new patterns. Neural networks have the ability to correctly classify new pattern. The size of the container could be modified to adjust the portion size and amount of consumption downwardly. The container could be modified to downwardly adjust the portion size and amount of consumption (Swales, Freak 2012).

➤ խուսափել ավելադրություններից (redundancy), երբ խոսքի մեջ ավելացվում են անհարկի բառեր, քերականական մասնիկներ: Օրինակ՝ The printer is *located adjacent* to the computer. The printer is *adjacent to* the computer. He wore a shirt that was *blue in colour*. He wore a *blue* shirt. Անգլերենում ավելադրության մեկ այլ տեսակ է որոշիչ բառերի/modifying words/ անտեղի կիրառումը: Գերադաս անդամը՝ որոշյալը, կարող է արտահայտվել գոյականով, ածականով, որը կարող է ունենալ ածականով, մակբայով արտահայտված ստորադաս անդամ՝ որոշիչ: Դրանք են՝ appreciable, approximate(ly), reasonable(ly), definite, evident, negligible, excessive, fair, relative, sufficient, suitable, utter, undue/ absolute nonsense, absolutely critical, considerably difficult, totally committed, utterly rejected, perfectly clear, entirely finished, radically new, quite precise/. John left the building *in suitable haste*. John left the building *in haste*.

➤ խուսափել անճիշտ, անորոշ (imprecise) բառերի գործադրումից: Օրինակ՝ quite, some, considerable, a great deal և այլն: (Apresyan, Badeyan, Gasparyan 2010): Մակարույծ բառերը ևս կարող են խոչընդոտել շարադրանքի կանոնավորությանն ու մաքրությանը: Անգլերենում մակարույծ բառեր են վերացական հասկացություն մատնանշող այնպիսի բառային միավորներ, ինչպիսիք են՝ nature, position, character, condition, situation, approach, area, location, concept, environment, type. The product is not of a satisfactory nature/character- The product is unsatisfactory. After specification we are in a position to begin detailed design- After specification we can begin detailed design. We are now in the situation of being able to begin detailed design - We can now begin detailed design.

➤ խուսափել անորոշ պնդումներ անելուց, ինչպես ‘Many researchers...’ : Անհրաժեշտ է նշել տվյալ հետազոտողներին, ինչպես նաև նախադասությունները չսկսել but և and շաղկապներով (Apresyan, Badeyan, Gasparyan 2010):

➤ խուսափել ստացական հոլովի գործադրումից, փոխարենը կիրառել of կապակցություններով կառույցեր:

➤ խուսափել դարձավաճքային բայերի գործածումից՝ get up, put into, find out և այլն, որոնք հաճախադեպ գործածավում են խոսակցական անգլերենում: Անհրաժեշտ է դրանք փոխարինել միակազմ համարժեքներով՝ rise, contribute, discover:

Ինչպես արդեն վերը նշվեց, նպատակահարմար է առավելագույնս գործածել կրավորական սեռ: Սրա պատճառն այն է, որ ակադեմիական գրավոր խոսքը շատ հաճախ նկարագրում է գործընթացներ և փաստեր, և այդ է պատճառը, որ հեղինակը ձգտում է ընթերցողների ուշադրությունը սևեռել հենց այս գործընթացներին և փաստերին: Ըստ Կրիստալի՝ կրավորական սեռի կիրառումը հնարավորություն է տալիս հեղինակին ընտրել շարադրման օբյեկտիվ (impersonal) ոճ (Crystal 1995): Իսկ Պոսպելովան նշում է, որ գիտական խոսքում կրավորական սեռի կիրառումը անդեմ նախադասությունների տեսքով առավել ընդունելի է: Օրինակ՝ հնարավոր է..., արդեն ասվել է, որ..., it is possible..., it is known that.. (Поспелова 2012): Օրինակ՝ Scientists classify glasses as a solid. Glass is classified as a solid. Four members of the nursing staff observed the handwashing practices of staff during rostered shifts. The handwashing

practices of staff were observed by four members of the nursing staff during rostered shifts.

Կրավորական սեռի կառույցներում գործողության կատարողին նշելն երբեմն կարող է ասույթին հաղորդել սադրիչ, հուզական երանգավորում (Jagtenberg & D'Alton 1989)

Ակադեմիական գրագրության կարևոր հատկանիշներից է «նրբանկատ» լեզուն կամ հեջինգը ‘hedging’ or ‘vague language’, որը հայ լեզվաբանների կողմից դեռևս հավուր պատշաճի թարգմանված չէ: Խոսքը մեղմ, ոչ վիրավորական, ոչ հավակնոտ, ոչ խիստ դարձնելու համար կիրառվում են տարբեր լեզվաարտահայտչամիջոցներ: Հեջինգին կամ զգուշավոր լեզվին են վերաբերում՝

1. ներածական բայերը՝ seem, tend, look like, appear, to be, think, believe, doubt, be sure, indicate, suggest և այլն,
2. բառապաշարային բառերը՝ believe, assume, suggest և այլն,
3. եղանակավորող բայերը՝ will, must, would, may, might, could և այլն,
4. հաճախականություն արտահայտող մակբայները՝ often, sometimes, usually և այլն,
5. եղանակավորող ածականները՝ certain, definite, clear, probable, possible և այլն,
6. եղանակավորող գոյականները՝ assumption, possibility, probability,
7. that նախադասությունները՝ It could be the case that... ., It might be suggested that... .,
8. ածական+ to + նախադասություն՝ It is important to develop... ., It is useful to study... .

Օրինակ՝

1. It may be said that the commitment to some of the social and economic concepts was less strong than it is now (<http://www.uefap.com/writing/feature/hedge.htm>):

Այս հնարի կամ ռազմավարության կիրառմամբ խոսքին հաղորդվում է համեստություն, մեղմություն, նրբանկատություն: Անգլերենի ակադեմիական գրավոր խոսքին հատուկ է լեզվական արտահայտամիջոցների տնտեսում: Օրինակ՝ նախընտրելի է գործածել «տնտեսող» բայեր (economical verbs). դրանք այն բայերն են, որոնք միակազմ են (Hairston 1998): Օրինակ՝ grant permission to - allow, be cognizant of - recognize, have an understanding of - understand, do an inspection - inspect, conduct an

analysis - analyze, reach a conclusion - conclude, give an answer - answer, raise an objection - object, form a plan - plan և այլն: Բայական կապակցությունների գործադրումը ևս մերժելի չէ, սակայն դրանք շարադրանքին երբեմն հաղորդում են ավելորդ կատեգորիկություն:

Ակադեմիական գրավոր խոսքին հատուկ է նաև զուգադիր շաղկապների առատ կիրառությունը/ both...and, either...or, not only...but also, as...as/: Thereby, therewith, hereby բարդ շաղկապները, թեև գեղարվեստական ոճում արդեն հնաբանություններ են, սակայն ակադեմիական գրավոր խոսքում դեռևս կիրառելի են: Ակադեմիական գրավոր խոսքում հանդիպում են նաև հապավումներ: Խիստ հանրահայտ հապավումները գործածվում են այնպես, ինչպես գրվում են (the USA, BBC, IBM, AIDS, NATO), քիչ հայտնի կամ երկիմաստ (PC=personal computer, politically correct, police constable; PM=prime minister, post meridian) հապավումներն առաջին անգամ գործածելիս նշվում են ամբողջությամբ, իսկ հապավումը փակագծում, որից հետո միայն՝ հապավման տեսքով: Օրինակ՝ The heating ventilating and air conditioning (HVAC) distributor has designed a software program for its HVAC engineers (Kent & Associates 2002).

Ակադեմիական գրավոր խոսքի շարադրանքը կազմվում է հեղինակային-անդեմ ձևով: Հեղինակը ձգտում է մեկուսանալ տեքստից՝ խուսափելով անձնական դերանունների գործածությունից: Ասելիքը ծանրակշիռ դարձնելու համար հեղինակը հաճախ թաքնվում է համեստ «մենք»-ի ետևում կամ բացառում է կապն իր անձի հետ՝ օգտագործելով ներկայացման անդեմ ձևը/Արդյունքն ամփոփելով՝ պետք է նշել.../: Ակադեմիական գրավոր խոսքում գործադրվող «մենք»-ը ունի երկակի իմաստ: Այն, մի կողմից՝ ընդգծում է տվյալ աշխատանքի ստեղծման գործում գիտնականների մեծ խմբի ներգրավածությունը, իսկ մյուս կողմից՝ այն գրավում է ընթերցողների (ունկնդիրների) ուշադրությունը (Арнольд 2002):

Ընդունված է համարել, որ ակադեմիական ոճով գրված ցանկացած տեքստում պետք է պահպանվեն կանոնավորության/ ոչ գրական ձևերի գործածություն/, ճշգրտության/ բառերն իրենց ուղիղ անվանողական իմաստներով գործածելը/, սեղմության/ անհարկի կրկնություններ, ոչ էական մանրամասների նկարագրություն/,

պատեհության/ լսարանի պահանջների հաշվի առնում/, պարզության/ պարզ ու հստակ լեզվական կառույցների կիրառում/ և մաքրության/ ժարգոնի, գոեհկաբանության, մակաբույծ բառերի գործածություն/ սկզբունքները: Ակադեմիական գրավոր խոսքում հոմանիշ, հականիշների միջոցով կրկնություններից խուսափելը անընդունելի է, քանի որ սրանով խախտվում է ակադեմիական ոճի ճշգրտության և հստակության սկզբունքը՝ խոսքին հաղորդելով ավելորդ գունագեղություն և հուզականություն, որը, որպես կանոն, հատուկ է գեղարվեստական ոճին: Ակադեմիական գրավոր խոսքում գոյականների կիրառության բարձր ցուցանիշը բացատրվում է հասկացություններ և երևույթներ անվանելու նրանց հատկությամբ: Օրինակ՝ Acid rain accounts for the destruction of ancient stone-work. Measurement of static software properties was performed by the tool. Այստեղ կիրառական մեծ հաճախականություն ունեն վերացական իմաստ արտահայտող գոյականները: Տվյալ գոյականն ակադեմիական գրավոր խոսքում անգամ եթե գործածվում է որոշյալ առումով միևնույն է արտահայտում է ընդհանուր հասկացություն: Օրինակ՝ Մարդը առաջին անգամ կատարեց տիեզերական ճանապարհորդություն.....: Տարբեր խոսքի մասերի առարկայացումը կամ գոյականացումը (nominalization) ևս ընդունելի է/ when we arrived-at the time of our arrival ; This paper analyses and solves the problem- This paper gives an analysis of the problem and offers a solution./: Սակայն, այսպիսի գոյականների առատ կիրառությունը կարող է հանգեցնել շարադրանքի խրթինության և անհասկանալիության: Ուստի, անհրաժեշտ է հնարավորինս խուսափել -ness, -ance, -ment, -ism, -ity վերջավորությամբ գոյականացված խոսքի մասերից: Անգլերեն ակադեմիական գրավոր խոսքում կարող է երբեմն բացակայել հոդը, մասնավորապես որոշյալը/ general view is..., first uranium mine/:

Չնայած այն համընդհանուր գիտելիքի, որ ակադեմիական գրավոր խոսքը խրթին ու անհասկանալի է և ուղղված է լսարանի որոշակի հատվածի՝ այնուհանդերձ, ակադեմիական տեքստի պարզությունն ու հստակությունը գիտական աշխատանքի որակի կարևորագույն ցուցիչ պետք է լինի: Սակայն այստեղ պարզությունը չպետք է ենթադրի պարզունակություն: Ակադեմիական գրավոր խոսքում անհասկանալիություն կարող է և պետք է առաջանա միայն տեղեկույթի գերհագեցած լինելու պատճառով

/չբացված անձանոթ հապավումներ, նեղ մասնագիտական եզրույթներ, դրանց բացատրման բացակայություններ և այլն/:

Ակադեմիական գրավոր խոսքն, ունենալով ապացուցողական բնույթ, մեծապես առնչվում է գիտական հասկացություններ և դատողություններ նշանակող եզրույթների հետ, որոնք, ըստ էության, ակադեմիական գրագրության ոճակազմիչներն են: Եվ հենց եզրույթներից և գիտական հասկացություններից է կախված ցանկացած հետազոտության արդյունավետությունը: Ակադեմիական գրավոր խոսքում, հատկապես, ոճակազմիչ նշանակություն ունեն եզրույթները, որոնց գործառույթը հենց գիտական խոսք կազմելն է: Ըստ Արնոլդի՝ ակադեմիական ոճի առավել ակնառու, բայց ոչ միակ առանձնահատկությունը հատուկ տերմինաբանության կիրառումն է (Арнольд 2002): Անշուշտ, գիտության յուրաքանչյուր բնագավառ ունի իր տերմինային կազմը: Սակայն գիտության տարբեր բնագավառների տերմինային կազմի տարբերությունները չեն խանգարում, որ գիտական տերմինաբանությամբ հագեցածությունն ընդհանրապես համարվի գիտական ոճի բնորոշ հատկանիշ, քանի որ տերմինաբանությունն առհասարակ գիտական խոսքի անհրաժեշտ ու պարտադիր բաղադրիչ է, և դա բխում է այդ ոճի էությունից (Աբրահամյան 1982): Այնուամենայնիվ, ակադեմիական գրավոր խոսքն որոշակի առումով մեկուսացված է խոսքի մյուս դրսևորումներից և իր բառային, քերականական հատկանիշներով զանազանվում է մյուս ոճերից: Սակայն այն, որքան էլ բառային կամ քերականական կաղապարների առանձնահատկություններ ունենա, միևնույն է հենվում է տվյալ լեզվի լեզվամիավորների գործածության ընդհանուր նորմերի վրա՝ դառնալով լեզվի իրական դրսևորումներից մեկը: Ակադեմիական գրավոր խոսքում շատ հաճախ հանդիպում են այնպիսի եզրույթներ, որոնք միանշանակ չեն ընկալվում, դրանք ստեղծվում են որևէ անհատի կողմից հետազոտական գործունեության ընթացքում: Այսպիսի եզրույթներն, որպես կանոն, սահմանվում և բնութագրվում են հենց գիտական տեքստի հեղինակի կողմից: Նման դեպքերում մենք գործ ունենք հեղինակային եզրույթների հետ (Bolshakova 2001):

Գիտության և առհասարակ հասարակության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը, գլոբալացմամբ պայմանավորված գիտատեխնիկական առաջընթացը զարկ է տվել

տերմինաբանության զարգացմանը, որը, հիրավի, կարելի է համարել ցանկացած լեզվի բառապաշարի հարստացման ամենաէական ուղիներից մեկը: Հետևաբար, տերմինաբանությունը դառնում է գիտության, տեխնիկայի, մշակույթի, լեզուների զարգացման ցուցիչ: Շնորհիվ համացանցի՝ ցանկացած գիտելիք դադարել է որևէ ազգի մենաշնորհը լինել, և տերմինաբանության տեսքով ներթափանցում է տարբեր լեզուների մեջ: Ուստի, դրանց իմացությունը անհրաժեշտ է ցանկացած մասնագետի համար՝ մասնավորապես ակադեմիական գրավոր խոսք «կերտողների» համար:

Ակադեմիական գրագրության մեջ ընդունված են բազում ցուցումներ, հուշող պահանջներ, որոնց կատարումը ձերբազատում է գիտական տեքստեր ստեղծող մարդկանց բազում դժվարություններից և սխալներից: Այդ ցուցումներին ուսանողները պետք է ծանոթանում են անգլերենի ուսուցման տեսական և գործնական դասաժամերին: Սակայն դասախոսները երբեմն դրանք համակարգված, ակադեմիական գրագրության ուսուցման համատեքստում չեն ներմուծում: Այսպես, քննության առնելով «Ակադեմիական գրագրություն» դասընթացի առանձնահատկությունները՝ մենք ատենախոսության հիմնախնդրի մեթոդաբանության հարցերի լուծումը պայմանավորել ենք մի շարք մանկավարժական սկզբունքներով՝

- *մադչելիության սկզբունքը*, որի գործադրմամբ հաշվի են առնվում սովորողների իրական ուսումնական հնարավորությունները, օրինակ՝ ակադեմիական գրավոր խոսք ուսուցանելիս այն պետք է սկսել նախ նրա լեզվական առանձնահատկությունների յուրացումով, քանի որ սովորողները դպրոցից քիչ թե շատ ծանոթ են անգլերենի բառաքերականական նորմերին, ուստի չեն կրի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր ծանրաբեռնվածություն,
- *հաջորդականության, փուլայնության սկզբունքը*. այս սկզբունքը հարաբերվում է նախորդ սկզբունքի հետ այնքանով, որ ակադեմիական գրավոր խոսք ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել համակարգված, որոշակի հաջորդականությամբ՝ ծանոթից դեպի անծանոթը, հեշտից դեպի դժվարը: Օրինակ ուսուցման նախնական փուլում սովորեցնել ռեֆերատ գրել և եզրափակել հոդված գրել սովորեցնելով: Բացի սրանից, ակադեմիական

գրագրությունը ինքնին շրջափոխային խոսքային գործունեության տեսակ է, որն ունի հստակ սահմանված փուլեր՝ նախագրային, բուն գրային, հետգրային: Ակնհայտ է, որ չյուրացնելով նախագրային փուլի հմտությունները՝ սովորողները չեն կարողանա յուրացնել հաջորդ փուլի առանձնահատկությունները,

- *տեսության և պրակտիկայի հետ կապի սկզբունքը*. սրանք պետք է չլինեն տարանջատ իրողություններ, այլ պետք է փոխլրացնեն միմյանց: Այս սկզբունքի գործադրմամբ իրականացնում են ակադեմիական գրագրության լեզվաոճական, բովանդակային-կառուցվածքային հատկանիշների ուսումնասիրման միջոցով սովորողների բառապաշարի հարստացումը, գիտական մտածողության զարգացումը ու գիտական խոսք կառուցելու ունակությունը,
- *գիտականության սկզբունքը*. այս սկզբունքը ակադեմիական գրավոր խոսքում դրված է առավել խստությամբ, քանզի գիտելիքի նկարագրումը պահանջում է լեզվամտածողության միջոցների՝ գիտականությանը բնորոշ ձևերի գործադրում: Այսինքն՝ գիտական պետք է լինի ոչ միայն հաղորդվող տեղեկույթը, այլ նաև այդ տեղեկույթի հաղորդման լեզուն,
- *անձի գործունեության ակտիվության՝ սովորողակենտրոնության սկզբունքը*. սա ենթադրում է զարգացնել սովորողների ակտիվությունը այնպես, որ սովորողները ինքնուրույնաբար ձեռք բերեն գիտելիքներ՝ որոնումների, հետազոտությունների, հիմնահարցերին քննադատաբար մոտելալու արդյունքում
- *գործնականության սկզբունքը*, որը ենթադրում է գիտելիքների ձեռքբերման խթանում-իմաստավորում-կշռադատում ուղին և նպաստում ինքնուրույն գործունեության ճանապարհով գիտելիքների յուրացմանը՝ բացառելով պատրաստի գիտելիքի փոխանցումն ու ուսուցչակենտրոն ուսումնական գործընթացը (Ամիրջանյան 2005):

1.2. Ակադեմիական գրավոր խոսույթի առանձնահատկությունները

Գրավոր խոսույթի շուրջ աշխատանք կազմակերպելիս անհրաժեշտ է ուսումնասիրել հաղորդակցական նպատակներով գործադրվող լեզվաարտահայտչամիջոցները: Ուսանողները հստակ պատկերացում պետք է ունենան անգլերենի ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական առանձնահատկությունների մասին: Գրավոր խոսքի ուսուցման գործընթացում նրանք պետք է կարողանան ճշգրտորեն կիրառել կապակցող միջոցները, որոնք էլ կազմում են գրավոր խոսույթի ատաղձը:

Փաստորեն, սովորողների մոտ խոսույթային իրազեկության ձևավորումն ու զարգացումը պետք է համարել առաջնահերթ նպատակ և խնդիր: Խոսույթային իրազեկությունը սովորողի կարողությունն է դասակարգել նախադասությունները այն հաջորդականությամբ, որպեսզի արտահայտվեն իմաստային կապակցված մտքեր: Այն ներառում է խոսույթի ձևակերպելու կարողություններ, ինչը վերաբերում է.

- թեմատիկ կազմակերպմանը,
- կապակցվածությանը,
- տրամաբանական հաջորդականությանը,
- ոճին և ռեգիստրին,
- հռետորական արդյունավետությանը (Լեզուների

իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ 2005:141):

Այս բաղադրիչների յուրացումն ակադեմիական գրագրության կարողության ձևավորման համար էական է: Այնուհանդերձ, ոչ պակաս առանցքային է անգլերենի ակադեմիական գրավոր խոսքում բառերի շարադասությունը: Առհասարակ ակադեմիական գրավոր խոսքում շատ կարևոր է առանձնացնել հիմնական միտքը մյուսներից: Սրան կարելի է հասնել՝ օգտագործելով բառերի հատուկ շարադասություն և հատուկ տարբերակիչ կառույցներ: Օրինակ՝ անգլերենի ակադեմիական գրավոր խոսքում անորոշ դերբայը/ինֆինիտիվ/ և նրա կառույցները լայն կիրառություն ունեն: Անորոշ դերբայի տարբեր ձևերը նախադասության մեջ ունեն տարբեր շարահյուսական գործառույթներ: Օրինակ՝ To determine the magnitude of anything requires to carry out measurements. Որևէ բանի մեծությունը որոշելը պահանջում է չափումներ կատարել/ենթակայի պաշտոն/: To find the value of that parameter many experiments

should be carried out. Այդ պարամետրերի արժեքը գտնելու համար, շատ փորձեր պետք է իրականացվեն/նպատակի պարագայի պաշտոն/: Molecules are too small to be seen with the most powerful microscope. Մոլեկուլները չափազանց փոքր են, որպեսզի կարողանանք տեսնել ամենահզոր մանրադիտակով/հետևանքի պարագայի պաշտոն/: The other phenomena to be considered are the most complicated phenomena. Մյուս երևույթները, որոնք պետք է դիտարկվեն, ամենաբարդ երևույթներն են/որոշի պաշտոն/: Heat was thought to be a material substance. Համարվում էր, որ ջերմությունը նյութի տեսակներից մեկն էր/ստորոգյալի մաս/: The early discoveries in nuclear science showed the atomic nucleus to be a vast source of energy. Միջուկային գիտության մեջ վաղ հայտնագործությունները ցույց տվեցին, որ միջուկը էներգիայի հսկայական աղբյուր է/բարդ խնդրի մաս/: Ակադեմիական գրավոր խոսքում for+գոյական+անորոշ դերբայ կառույցը կատարում է նպատակի կամ հետևանքի պարագայի դեր և կարող է գործածվել ինչպես նախադասության սկզբում, այնպես էլ նրա վերջում: Օրինակ՝ For combustion to be rapid, the fuel and the oxident must be quickly mixed. Որպեսզի այրումն արագ ընթանա, վառելիքն ու օքսիդացնող նյութը պետք է արագ խառնվեն: That star is too far away for its size to be determined accurately. Այդ աստղը չափազանց հեռու է, որպեսզի հնարավոր լինի որոշել նրա չափը: Գերունդը և նրա կառույցները: Գերունդ ենթական դրվում է նախադասության սկզբում: Օրինակ՝ Heating the gas increases the speed of the molecules. Գազի տաքացումը մեծացնում է մոլեկուլների արագությունը: The boiling temperature of water is 100°C. Ջրի եռման ջերմաստիճանը 100°C է/որոշիչ/: In rotating the magnet, we also rotate its magnetic field. Մագնիսի պտտման ժամանակ, մենք պտտում ենք նաև մրա մագնիսական դաշտը/ժամանակի պարագա/: He kept on making experiments until he achieved the desired result. Նա շարունակեց փորձեր անել մինչև հասավ ցանկալի արդյունքին/խնդիր/: Անգլերեն ակադեմիական գրավոր խոսքում անցյալ/past participle/ և ներկա/present participle/ ածական դերբայները և դրանց կառույցները մեծ կիրառություն ունեն: Օրինակ՝ The acceleration of all falling bodies is the same regardless of their size, shape or mass. Բոլոր ընկնող մարմինների արագացումը նույնն է՝ անկախ դրանց չափից, ձևից կամ զանգվածից/որոշիչ/: Two reflected rays are needed to locate any image formed by a mirror. Անհրաժեշտ է երկու

արտացոլվող ճառագայթներ, որպեսզի տեղայնացվի ցանկացած պատկեր՝ ձևավորված հայելու միջոցով/որոշիչ/: When/while comparing the elements, one notices the outstanding stability of some electronic structures. ա. Համեմատելով տարրերը՝ նկատում ենք որոշ էլեկտրոնային կառույցների ակնառու կայունությունը: բ. Տարրերը համեմատելիս.... գ. Երբ/մինչ համեմատում ենք տարրերը...../ժամանակի պարագա/: Տրոհվող դերբայական դարձված: Չնայած այս կառույցը կարող է տեղ գտնել նախադասության թե՛ սկզբում, թե՛ վերջում՝ ակադեմիական գրավոր խոսքում այն հիմնականում լինում է վերջում: Օրինակ՝ Stars differ tremendously in size, the largest ones being several times the size of the Sun. Աստղերը մեծապես տարբերվում են չափերով, ընդ որում մեծերը արևից մեծ են մի քանի անգամ: Ակադեմիական գրավոր խոսքում հանդիպում են տրոհվող կառույցներ՝ with/հետ/ կապով: Օրինակ՝ With the aeroplanes flying higher and faster.... Այժմ, երբ ինքնաթիռները թռչում են ավելի բարձր և ավելի արագ.....: Անցյալ ածական դերբայ+անորոշ դերբայ կառույց; Օրինակ՝ Out of 31 satellites existing in our solar system, the only one known to have an atmosphere is Saturn's Titan. Մեր արեգակնային համակարգում գոյություն ունեցող 31 արբանյակներից միակը, որը, ինչպես հայտնի է ունի մթնոլորտ, Սատուրնի Տիտանն է: Ինչպես հայտնի է, անգլերենն ունի կայուն շարադասություն, սակայն ակադեմիական գրավոր խոսքում հանդիպում են շրջադասություն/inversion/ պարունակող նախադասություններ: Սա արվում է նախադասության որևէ անդամ շեշտադրելու, առանձնացնելու համար: Օրինակ՝ Of special interest is the gravitational situation. Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ձգողության վիճակը: It is....that, it was not until....that/when, where/ կառույցները կարող է շեշտել նախադասության բոլոր անդամները, բացի ստորոգյալից: Օրինակ՝ It was this very experiment that explained the phenomenon completely. Հենց այս փորձն էր, որ բացատրեց երևույթն ամբողջությամբ: It was not until the 17th century that man began to understand pressure. Միայն 17-րդ դարում էր, որ մարդը հասկացավ, թե ինչ է ճնշումը: Էլիպտիկ/զեղչված/ կառույցներ: Ակադեմիական գրավոր խոսքի առանձնահատկություններից մեկն այն է, որ այստեղ հանդիպում են նաև զեղչված կառույցներ՝ ի հեճուկս այն հանգամանքի, որ ակադեմիական խոսքը պետք է լինի ամբողջական, քերականական և լեզվական

առումով կատարյալ: Օրինակ՝ although, though, if, once when while շաղկապներով բնութագրվում են ենթակայի և բայ-հանգույցի բացակայությունը: Օրինակ՝ When at its greatest distance from the Earth, Mars is about half as bright as the Polar star. Երբ Մարսը գտնվում է երկրից իր ամենամեծ հեռավորության վրա, այն երկու անգամ ավելի աղոտ է, քան Բևեռային աստղը: If/any/aything/ զեղչված կառույցով բնութագրվում է there is/are արտահայտության բացակայությունը: Օրինակ՝ The nucleus determines the radioactive properties, if any of the atom. Միջուկը որոշում է ատոմի ռադիոակտիվ հատկությունները, եթե այն ունի այդպիսիք:

Ակնհայտ է, որ կան գրավոր և բանավոր խոսույթների միջև հստակ, առանցքային տարբերություններ: Ինչպես նշում է Բայբերը. «Գրի առած բանավոր խոսքը դեռևս գրավոր խոսք չէ» (Biber 2006): Դա ենթադրում է, որ գրավոր խոսքը կամ խոսույթը տրամաբանական առումով ավելի կանոնակարգված, ոճական առումով ավելի պաշտոնական, ավելի բարդ է, քան բանավոր խոսույթը: Գրելուն հատուկ է շարադրման խիստ հաջորդականությունը և կուռ տրամաբանությունը: Ակադեմիական գրավոր խոսույթը ունենալով ապացուցողական բնույթ՝ ենթադրում է գրավոր խոսույթի կուռ կառուցվածք (սկիզբ, հիմնական մաս, վերջ): Հաշվի առնելով գրավոր և բանավոր խոսույթների ոճաժանրային, տրամախոսական, տրամաբանական տարբերությունները՝ կարելի է պնդել, որ բանավոր խոսույթի վերլուծությունը վերաբերում է բովանդակային-կառուցվածքային առանձնահատկություններին և դրույթներին, իսկ գրավոր խոսույթը հաշվի է առնում տեքստի, ինչպես արտաքին բովանդակային - կառուցվածքային, այնպես էլ ներքին լեզվաոճական հատկանիշները:

Ու.Գրեյթն ու Ռ.Կապլանն ակադեմիական գրավոր խոսքն անվանում են 'writing from resources', այսինքն՝ «գրագրություն սկզբնաղբյուրներից» և դրա նպատակը սահմանում որպես «տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության վերլուծություն, համադրում և մեկնաբանություն» (Grabe & Kaplan 1996): Այսինքն, ակադեմիական գրավոր խոսույթի սերման գործընթացն ուղեկցվում է գիտելիքի փոխակերպմամբ/knowledge transforming/ (Bereiter, Scardamalia 1987): Ի տարբերություն գիտելիքի գծային շարադրման՝ (knowledge telling), այսինքն, առանց որևէ մշակման սեփական մտային հոսքի պարզ գրաֆիկական կողավորման,

գիտելիքի փոխակերպումն ենթադրում է նոր գիտելիքի առաջացում: Գիտելիքի փոխակերպումն ենթադրում է խնդիրների վերլուծություն և նպատակի առաջադրում, ինչը հանգեցնում է ինչպես բովանդակային (content problem), այնպես էլ ռճական (rhetoric problem) խնդիրների լուծման: Գիտելիքի փոխակերպումն ենթադրում է նաև առաջնային տեղեկատվության վերամշակման բարդ խոսքամտածողական գործունեություն, ինչպես նաև սեփական խոսույթի բազմակի խմբագրում, որի շնորհիվ գրավոր խոսույթի առաջացման եռափուլ գործընթացում միավորվում են նրա ընկալողական, վերարտադրողական և արտադրողական հայեցակերպերը:

Այսպիսով, ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման նպատակը սովորողներին գիտելիքի գծային շարադրումից դրա շրջափուլային փոխակերպման անցնել օգնելն է, ինչը Ս.Վիգլի կարծիքով գրողի հասունության ցուցանիշը է (Weigle 2002):


Անգլերենի ակադեմիական գրագրության կարողություն ձևավորելու գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ակադեմիական գրավոր խոսքի կապակցվածությունը և ամբողջականությունը պետք է լինեն առաջնային: Այսպես, անգլալեզու ակադեմիական գրավոր խոսույթի հասցեատերն ակնկալում է, որ խոսույթը աստիճանակարգված կերպով է կազմակերպված լինելու, ունենալու է կապերի հստակ և տրամաբանական համակարգ, ինչպես նաև յուրահատուկ բովանդակություն (Leki 1992): Սրանով պայմանավորված՝ անգլերեն լեզուն հաճախ անվանում են «պատասխանատվությունը հեղինակի վրա դնող»/writer-responsible/ (Hinds 1987), երբ ի նկատի ունեն, որ հեղինակը պետք է հստակ ու տրամաբանված կերպով ցույց տա տեքստի իմաստային հատվածների միջև կապերը, որպեսզի ապահովվի տեքստի ամբողջականությունն ու կապակցվածությունը: Տեքստի կապակցվածությունը լինում է տեղային (cohesion) և համընդհանրական (coherence): Տեղային կապակցվածությունը նախադասությունների հաջորդական կապն է, որն ապահովվում է այսպես կոչված կապակցող բառերի օգնությամբ, իսկ համընդհանրական կապակցվածությունն ապահովվում է տեքստի առավել մեծ հատվածների՝ գլուխների, ենթագլուխների, բաժինների իմաստային ներքին ամբողջականության պահպանմամբ: Այսինքն՝ սա տեքստի իմաստային կապակցվածությունն է: Տեքստը կայացած է, եթե պահպանված են նրա այս

հատկանիշները, այլապես նախադասությունների շարքը կդառնա անիմաստ, այսինքն՝ տեքստ չի կազմվի: Տեքստում իրար հետ կապակցված հարևան նախադասությունների կապը կոչվում է *կոնտրակտային*, իսկ երբ նախադասությունները բաժանված են այլ նախադասություններով, նրանց կապը *դիստանտային* է: Այս վերջինով կապվում են տեքստի տեղեկատվական մասերը, որոնք սկսվում են նոր տողից: Օրինակ՝ There are three large spiral galaxies: Andromeda, the Milky Way and the Triangulum Spiral. Our galaxy, the Milky Way, is part of a galactic cluster called the Local Group./ կոնտակտային/

There are three large spiral galaxies: Andromeda, the Milky Way and the Triangulum Spiral. Galaxies are not evenly distributed throughout the universe./դիստանտային/

Այսպիսով, հեղինակը պետք է գործածի տարբեր հնարներ, ոճաժանրային միջոցներ՝ գրավոր խոսույթի ամբողջականությունը պահպանելու, նրա բովանդակությունը հաղորդելու համար: Դրանցից կարելի է առանձնացնել հղումը, փոխատեղումը, սղումը, կապակցումը և բառային կապերը (Hatch 1992):

Գրավոր խոսույթի ամբողջականությունը պահպանելու ոճաժանրային միջոցները



Գծապատկեր 1.

Ինչպես հայտնի է, հղումը ցանկացած գիտական աշխատանքի բաղկացուցիչ մաս է, և դրա նորմերի աղավաղումը կարող է բերել գիտական աշխատանքի ամբողջականության և գիտականության սկզբունքի կորստի: Հղումն օգտագործվող

տեղեկության, տվյալ (փաստարկման, վիճակագրական աղբյուրներ, այլ հեղինակի միտք և այլն) աղբյուրի հիշատակումն է /մատենագիտական կամ արտաքին հղում/ կամ աշխատանքի տարբեր մասերը (գլուխ, ենթագլուխ, նկար, աղյուսակ, հավելված և այլն) միմյանց կապող գրառումը /ներքին հղում/(Հովհաննիսյան, Գալստյան, Սողոմոնյան, Մալխասյան 2014): Ներտքստային հղումը կարող է վերաբերել որևէ անձի, առարկայի, որոնց մասին խոսք է գնում նախորդ (anaphoric) կամ հաջորդող (catophoric) ենթատեքստերում: Այս դեպքում հղումը հիմնականում իրականացվում է անձնական, ցուցական, հարաբերական դերանունների միջոցով:

Հղումները տարբեր նպատակներ են հետապնդում: Դրանք են՝

- ✚ գրագողությունից խուսափելու,
- ✚ օգտագործված տվյալների հավաստիությունը ստուգելու,
- ✚ տվյալ բնագավառում նախկինում կատարած ուսումնասիրություններին քաջաձանոթ լինելու փաստը վկայելու,
- ✚ օգտագործված աղբյուրների հեղինակների կատարած աշխատանքի նկատմամբ հարգանքի նշան լինելու,
- ✚ ակադեմիական գրագիտության ցուցիչ լինելու:

Հեղինակները հղումների միջոցով շեշտադրում են այս կամ այն գաղափարը, հիմնավորում են առաջադրված դրույթների հավաստիությունը, բացահայտում են ուսումնասիրվող երևույթի օրինաչափությունները: Այդուհանդերձ, կան դեպքեր, երբ հղում կատարելն անհրաժեշտ չէ: Հղում չի կատարվում սեփական տեսակետը, դիրքորոշումը, եզրահանգումը շարադրելիս և այսպես կոչված «հանրահայտ փաստ կամ տեղեկություն» վկայակոչելիս: Գոյություն ունի այսպիսի «հանրահայտ տեղեկությունների» երկու տեսակ՝ համընդհանուր և նեղ մասնագիտական: Համընդհանուր հանրահայտ են այն տեղեկությունները, որոնք ազատորեն շրջանառվում են հանրության մեջ, քաջաձանոթ են հասարակության մեծ մասին, հասանելի են տեղեկագրքերում, հանրամատչելի հանրագիտարաններում և, որպես կանոն, համարվում են անվիճելի իրողություններ: Նեղ մասնագիտական շրջանակներում հանրահայտ փաստերն առանձնահատուկ են նրանով, որ դրանց քաջաձանոթ են միայն մասնագիտական տվյալ խմբի անդամները (Հովհաննիսյան և

ուրիշներ 2014): Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր մասնագիտական խորհուրդ, գիտական ընկերակցություն, բուհ, ֆակուլտետ, հրատարակչություն ունեն իրենց նախընտրելի հղման ոճը: Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն հղման մեկ տասնյակից ավելի համակարգեր: Այդուհանդերձ, այս տարատեսակ համակարգերը ներառված են երեք ոճային խմբերի մեջ՝ *ներտեքստային, շարունակվող համարակալմամբ և կրկնվող համարակալմամբ*: Ներտեքստային հղման ոճեր են Հարվարդի համալսարանի (Harvard style) կամ միջանկյալ հղման համակարգ (Parenthetical referencing system), Չիկագոյի համալսարանի Տուրաբյան (Chicago/Turabian style), Գիտական խմբագիրների խորհրդի (CSE style), Ժամանակակից լեզուների ընկերակցության (MLA), Ամերիկյան հոգեբանական ընկերակցության (APA) և այլն: Այստեղ օգտագործված աղբյուրներն ուղղակիորեն տրվում են տեքստում կամ փակագծերում, որոնք այբբենական կարգով գրառվում են գրականության ցանկում: Շարունակական համարակալմամբ ոճեր են Օքսֆորդի համալսարանի Օսկոլա (Oxford/Oscola), Ժամանակակից հասարակագիտական հետազոտությունների (MHRA) և այլն: Սա նախկինում առավել տարածված ոճ էր: Այս համակարգում կիրառվում է վերտողային և տողատակային համարակալումը՝ շարունակականության սկզբունքով և տեքստի վերջում օգտագործված աղբյուրների արձանագրմամբ ^{1 2 3/} (Հովհաննիսյան և ուրիշներ 2014): Կրկնվող ոճի տարատեսակներ են Վանկոլվերի (the Vancouver style), միջանկյալ հղման համակարգը (Parenthetical referencing system) էլեկտրականության և էլեկտրոնիկայի ինժեներների ինստիտուտի (IEEE style), Բրիտանական ստանդարտի թվային (British Standard numeric): Այս ոճի դեպքում կիրառվում են վերտողային կամ փակագծերի մեջ առնված կրկնվող համարակալում⁵ կամ (5), որը կապակցված է աշխատանքի վերջում տրված օգտագործված գրականության ցանկի հետ: Այսինքն, եթե ինչ-որ մի աղբյուրի հղման համարը [5]-ն է, ապա ողջ տեքստում այդ աղբյուրին հղում կատարելիս կկիրառվի նույն համարը: Ավելին, աղբյուրների ցուցակը կազմվում է ոչ թե այբբենական կարգով, այլ աշխատանքում աղբյուրներին հղման հաջորդականությամբ:

Այսօր գիտական տեքստերում բավական տարածված է MLA և APA ոճերի գործադրումը: MLA ոճի օրինակ՝ *Labov William. "The Study of Language in its Social Context", New-York, 2003.*

Մեկից ավելի հեղինակների դեպքում կամ նշվում են բոլոր հեղինակների անունները, կամ առաջին հեղինակի անվանից հետո դրվում է *et al.* կապակցությունը: Օրինակ՝ *Quirk, R., Greenbaum, S., and Leech, G. "A Grammar of Contemporary English", London, Longman, 1999. կամ Quirk, R., et al. "A Grammar of Contemporary English", London, Longman, 1999.*(*Apresyan, Badeyan, Gasparyan, 2010*):

Ինչ վերաբերում է ներտեքստային հղումներին, ապա այն ունի հետևյալ տեսքը՝

This approach corresponds to the frequently cited theory that scientific revolutions come through paradigm shifts (Kuhn 79): (Շարունակությունը տե՛ս հավելված 2):

Ի տարբերություն MLA ոճի՝ APA ոճում ներտեքստային հղումների ժամանակ արձանագրվում է հեղինակի ազգանունը, աշխատանքի հրատարակման տարեթիվը՝ առանց էջի համարը նշելու: Համացանցից վերցված է հետևյալ օրինակը՝

Pollock (1994) has shown that a disturbance in the mother's initial contact with the infant can affect her decision or capacity to breast-feed her infant. կամ One study has shown that a disturbance in the mother's initial contact with the infant can affect her decision or capacity to breast-feed her infant (Pollock,1994)

Այս դեպքում անհրաժեշտություն չկա նշել մեջբերվող նյութի էջը: Սակայն, երբ շարադրանքը պարունակում է ուղիղ, անմիջական հղում բնագրին (a direct quote), ապա այս դեպքում նշվում է էջի համարը: Օրինակ՝

The psychological response to defeat was often more dramatically expressed by the women of the South than by the men. Evidence of that comes from Mary Chestnut, who in her diary tells the story of a woman who "raved and dashed herself finally on the ground" when she heard about the fall of New Orleans (Vann Woodward 1981, p.640).

Գրականության ցանկում աշխատությունը արձանագրվում է հետևյալ կերպ՝

Vann Woodward, C. (1981). Mary Chestnut's Civil War. New Haven: Yale University Press. (Շարունակությունը տե՛ս հավելված 3):

Ըստ Սպարքի՝ այլ տեքստին հղում անելն ապահովում է ուսանողի ներգրավվածությունն ուսումնական տեքստի շուրջ աշխատանքի ընթացքում (Spark 1988): Դրանք նաև հեշտացնում են տեքստում այս կամ այն փաստի ընկալումը, առաջնային գաղափարի բացահայտումը, միաժամանակ վկայում են հեղինակի բազմազգիտության մասին:

Ակադեմիական գրագրության կարևոր հնարներից է շրջասելը: Արդյունավետ է ուսանողներին շարունակաբար ծանոթացնել անգլերենում ընդունված հետևյալ արտահայտությունները.

Հեղինակի հետ համակարծիք լինելու դեպքում կիրառվում են հետևյալ արտահայտությունները՝

The work of X indicates that The work of X reveals that The work of X shows that Turning to X, one finds that Reference to X reveals that In a study of Y, X found that As X points out, As X perceptively states, As X has indicated, A study by X shows that X has drawn attention to the fact that X correctly argues that X rightly points out that ... X makes clear that

Հեղինակի հետ տարակարծիք լինելու դեպքում կիրառվում են հետևյալ արտահայտությունները՝

X claims that X states erroneously that The work of X asserts that X feels that However, Y does not support X's argument that

Սեփական տեսակետը արտահայտելու համար կիրառվում են հետևյալ արտահայտությունները՝

According to X... . It is the view of X that The opinion of X is that In an article by X, Research by X suggests that X has expressed a similar view... . X reports that X notes that .. . X states that X observes that X concludes that X argues that X found that X discovered that

Մեջբերում անելիս անհրաժեշտ է հետևյալ արտահայտություններից հետո դնել *չակերտներ՝* As X said/says, "... ..." . As X stated/states, "... ..." . As X wrote/writes, "... ..." . As X commented/comments, "... ..." . As X observed/observes, "... ..." . As X pointed/points out, "... ..." To quote from X, "... ..." . It was X who said that "... ..." . This example is given

by X: "... ...". According to X, "... ...". X claims that, "... ...". X found that, "... ...". The opinion of X is that, "... ...".

Եզրահանգում կատարելիս անհրաժեշտ է ներմուծել հետևյալ արտահայտությունները՝

The evidence seems to indicate that... . It must therefore be recognised that... . The indications are therefore that... . It is clear therefore that Thus it could be concluded that... . The evidence seems to be strong that... . On this basis it may be inferred that... . Given this evidence, it can be seen that... .

(<http://www.uefap.com/writing/citation/citefram.htm>):

Ի հակադրություն հղման՝ *փոխադրումը* նախադասության մի բաղադրիչի փոխարինումն է մյուսով: Մի անգամ արդեն հիշատակված բառը կարող է փոխարինվել ցուցական դերանուններով, *one (s)* փոխարինող բառով կամ *it* դերանունով՝ կրկնությունից խուսափելու համար:

Սղումը, զեղչումը կամ էլիպսիսը փոխատեղման նման կիրառվում է լեզվի միավորները տնտեսելու համար: Սղման ժամանակ կապակցման միջոցներ չեն կիրառվում: Սա, ըստ էության, բառերի կանխամտածված բացթողումն է, որոնց իմաստը մտքով հեշտությամբ կարելի է վերականգնել: Օրինակ՝

According to a 1997 article in *Sports Illustrated*, “The use of steroids ... has spread to almost every sport from major league baseball to college basketball to high school football” (Oshima & Hogue 2007).

Կապակցման կարևոր միջոց է շաղկապները և շաղկապական կապակցությունները /*besides, yet, therefore, then* և այլն/, դրանք կիրառվում են կապական հարաբերություններ ցույց տալու համար՝ հավելում, պատճառականություն, ժամանակ:

Ակադեմիական գրագրության մշակույթի կարևոր բաղադրիչ է գրագողության դեմ պայքարելու կամ գրագողությունից խուսափելու ռազմավարությունը: Երբեմն աննկատելի սխալները, վրիպումները հանգեցնում են գրագողության: Արևմտյան բուհերում գրագողության համար կարող են գրագողության մեջ մեղադրվող, հանցանքն ընդունած անձանց զրկել աշխատանքից, հեռացնել համալսարանից: Այսօր գրագողությունը մեծ մարտահրավեր է ժամանակակից կրթական համակարգի համար:

Այն, իրավամբ, կարելի է համարել մարդու իրավունքների խախտում, գիտական էթիկայի և նորմերի ոտնահարում: Ըստ Նեվայի՝ գիտական և ուսումնական աշխատանքներում հանդիպում են գրագողության հետևյալ ձևերը.

❖ Դիտավորյալ խաբեություն. երբ ուսանողն այլ մարդու կողմից ամբողջությամբ կամ մասամբ պատրաստած աշխատանքը ներկայացնում է որպես իր սեփական աշխատանք: Հայաստանյան իրականության մեջ առավել տարածված է գրագողության այս տեսակը, երբ ուսանողը գնում է պատրաստի աշխատանք կամ էլ վճարում է այլ մարդու, որպեսզի նա պատրաստի աշխատանքը:

❖ Արտատպում կամ պատճենում. երբ ուսանողը բնօրինակի տեքստը, այլ անձանց մտքերը, գաղափարները մեջբերում է նույնությամբ՝ առանց դրանց աղբյուրների պատշաճ հիշատակման:

❖ Այլ հեղինակի միտքը սեփական բառերով վերաձևակերպելու անկարողություն. երբ ուսանողը զարգացնում է բնագրում արձանագրված միտքը, ընդունված կարգով աղբյուրի հիշատակմամբ, սակայն արդյունքում անհնար է դառնում տարանջատել ուսանողի և բնագրի հեղինակի միտքը: Այս պարագայում խորհուրդ է տրվում կիրառել «որոշ հեղինակներ կարծում են, որ...», «...հեղինակի կարծիքով...» արտահատություններ, իսկ սեփական դիրքորոշումները ներկայացնելու դեպքում՝ «մենք գտնում ենք, որ...», «մեր կարծիքով...» և այլ արտահայտություններ:

❖ Աղբյուրներին չափից շատ հղում կատարելը. երբ ուսանողի աշխատանքը կատարված է նորմերին համապատասխան, սակայն բացակայում է փաստերի վերաբերյալ սեփական դիրքորոշումները:

❖ Գրագողություն ինքն իրենից. երբ ուսանողը դիմում է ինքնագողության՝ ներկայացնելով իր նախկինում գնահատված կամ ստուգված աշխատանքը (Neville 2010): Գրագողության ձևերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Դիտավորյալ խաբեություն	Արտատպում կամ պատճենում
Աղբյուրներին չափազանց շատ հղում կատարելը	Այլ հեղինակի միտքը սեփական բառերով վերաձևակերպելու անկարողություն

Աղյուսակ 1.

Գրագողություն ինքն իրենից

Գրագողությունից խուսափելն ենթադրում է մի շարք քայլերի իրականացում: Առաջին, յուրաքանչյուր ուսումնական հաստատություն (ներառյալ դպրոցները) պետք է սահմանի գիտական էթիկայի պահպանման նորմեր, որոնք զետեղված կլինեն մեթոդական ուղեցույցներում, գրքույկներում, ուսումնական գրքերի հավելվածներում և որոնք հասանելի կլինեն սովորողների համար: Երկրորդ, դասավանդողներն իրենք պետք է հետևողական լինեն և աջակցեն սովորողներին հավուր պատշաճի պլանավորել և իրականացնել հետազոտական աշխատանք, ինչպես նաև նպաստեն սովորողների մոտ քննադատական ու վերլուծական մտածողության զարգացմանը: Երրորդ, սովորողն ինքը պետք է գիտակցի և պահպանի ակադեմիական ազնվության վարքն ու կանոնները: Երբեմն սովորողներին գրագողության կարող է մղել այսպես ասած «գրագողության նկատմամբ վախը»: Շատ ուսանողներ խուսափում են հաճախակի մեջբերելուց, պատճառաբանելով, որ աղբյուրներին չափից շատ հղում կատարելը կարող է դիտվել որպես գրագողություն: Սա այն դեպքն է, երբ սովորողն ընդհանուր գծերով պահպանում է հղման էթիկան, սակայն չի ներկայացնում մեջբերված նյութի վերաբերյալ սեփական դիրքորոշումը, կամ էլ անհարկի կատարում է մեծածավալ ուղղակի մեջբերումներ՝ հիմնականում շարադրանքին «ծավալ հաղորդելու»: Տեղին և ճիշտ արված մեջբերումները, հղումներն օգնում են հիմնավորել ասածը, ցույց տալ ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարանջատելու, նոր միտք հայտնելու ունակությունները: Կարևոր է մեջբերելով վեր հանել տեքստի հիմնական գաղափարը:

Այսպես՝ գրագողությունից խուսափելու ուղիներից են՝

1. *Շրջաստելը -Paraphrase:* Սա ընթերցածը սեփական բառերով վերաշարադրելն է: Օրինակ՝

“Children spend a very large proportion of their daily lives in school. They go there to learn not only in a narrow academic sense, but in the widest possible interpretation of the word- about themselves, about being a person within a group of others, about the community in which they live, and about the world around them. Schools provide the setting in which such learning takes place” Leyden, S. (1985). *Helping the child of exceptional ability*. London: Croom Helm.

Շրջասված տարբերակ՝

As Leyden (1985) points out, schools are places where children spend a significant amount of time. Beyond merely going to school to learn academic information, Leyden argues that learning occurs within a far wider context as children also learn about who they are, by being in groups, their local community, as well as the wider world which surrounds them. Hence, schools offer the settings to facilitate children’s learning about a great many things. կամ Schools are places where children spend a significant amount of time (Leyden,1985). Beyond merely going to school to learn academic information, learning occurs within a far wider context as children also learn about who they are, by being in groups, their local community, as well as the wider world which surrounds them (Leyden). Hence, schools offer the setting to facilitate children’s learning about great many things.

Շրջասման համար անհրաժեշտ է մի շարք բայերի իմացություն, որոնք առավել դյուրին կդարձնեն շրջասելը: Դրանք են՝ agree, assert, claim, believe, comment, concede, define, delve deeper, echo, focus, go further, observe, point out/to, qualify, recount, refer to, summerise, support, tell, touch on, verify, writes that և այլն: Օրինակ՝ McDonald (1992) says..... . Anderson (2003) states..... .

2. Ցիտելը (*Citing/Indirect quotation*)/գրագողությունից խուսափելու արդյունավետ եղանակներից է: Անհրաժեշտ է հստակորեն հետևել ցիտման ընդունված համակարգերից մեկին (Օրինակ՝ APA, MLA, Chicago և այլն): Ցիտման կանոններից ցանկացած շեղում կարող է գրագողության փորձ ընկալվել: Անհրաժեշտ է ցիտել նաև ոչ միայն այլ աղբյուրներից վերցրած տեքստերը, այլև նախկինում ստեղծած սեփական ստեղծագործությունները:

3. Մեջբերումը (*Quoting*) բնօրինակի հեղինակի խոսքի անմիջական, ուղղակի, անփոփոխ, բառացի վկայակոչումն է: Մեջբերելիս որևէ սկզբնաղբյուր՝ անհրաժեշտ է պահպանել մեջբերման կանոնները: Մեջբերվող հատվածը, որպես կանոն, պետք է լինի առանց կրճատումների, սակայն ընդգրկուն մեջբերումներ կատարելիս՝ կամայական կրճատումներ անելն թույլատրելի է: Այս դեպքում կրճատումը նշվում է բազմակետով: Բառացի մեջբերումներն երբեմն անվանում են «տեքստ տեքստի մեջ», քանի որ հեղինակային տեքստում հանդիպում է մեկ այլ հեղինակի «օտար» տեքստ: Բառացի մեջբերումներն առնվում են չակերտների մեջ: Օրինակ՝ According to Jones (1998), “Students often had difficulty using APA style, especially when it was their first time” (p.199). Մեջբերումների օգտագործումն արդարացվում է հետևյալ դեպքերում.

ա. երբ անհրաժեշտ է հաստատել սեփական միտքը՝ հենվելով առկա դատողությունների, դիրքորոշումների վրա,

բ. երբ անհրաժեշտ է համադրել միևնույն հարցի մասին տարբեր հեղինակների կարծիքները կամ վեր հանել դրանցում եղած հակասությունները,

գ. երբ անհրաժեշտ է հերքել մեջբերված կարծիքը:

4. Հղումները (*Reference*) կատարվում են գրականության ցանկին: Գրագողությունից խուսափելու լավագույն ուղիներից է աշխատանքի վերջում ներկայանցել գրականության ցանկը՝ նշելով հեղինակի կամ հեղինակների անուն/ները/, աշխատության տպագրման տարեթիվը, վերնագիրը և սկզբնաղբյուրը: Այսինքն՝ հղումն օգտագործված մատենագիտական տվյալների արձանագրումն է: Այն նաև տեքստի օբյեկտիվության, հուսալիության, ստուգելիության ապահովման հիմնական միջոցներից է: Օրինակ՝

When testing the usability of a website, it is necessary to gather demographic information about the users (Lazar, 2006).

Հղումը գրականության ցանկին՝

Lazar, J. (2006). *Web usability: A user-centered design approach*. Boston, MA: Pearson Addison Wesley.

6. Համառոտագրման (*Summarising*) դեպքում ընտրվում են շարադրանքի հիմնական, առանցքային բառերն ու գաղափարներն՝ որպես համառոտագրման

հենք: Շարադրանքի համառոտագրումն ապահովվում է ընտրված գաղափարներն ավելի պարզ ձևերով արտահայտելու, բնագրից տարբեր լեզվական կառույցներ կիրառելու շնորհիվ: Օրինակ՝ “Children spend a very large proportion of their daily lives in school. They go there to learn not only in a narrow academic sense, but in the widest possible interpretation of the word- about themselves, about being a person within a group of others, about the community in which they live, and about the world around them. Schools provide the setting in which such learning takes place” Համառոտագրված տարբերակ՝ As Leyden (1985) points out, schools are places for children to learn about life, themselves, other people, as well as academic information. Schools are places for children to learn about life, themselves, other people, as well as academic information (Leyden, 1985).

Ինչպես ակնհայտ է, համառոտագրման արդյունքում ստեղծվում է երկրորդային տեքստ: Առանձնացվում են համառոտագրման հետևյալ ռազմավարությունները՝ (Trzeciak, Mackay 1994).

- տեքստի տեղեկատվություն պարունակող հատվածների ընտրություն: Այս դեպքում գիտական շարադրանքի հեղինակն ընտրողաբար է մոտենում տեքստ-աղբյուրներում առկա տեղեկատվությանը և համառոտագրում է միայն տեքստի որոշակի հատվածներ, այլ ոչ թե տեքստն ամբողջությամբ,


- տեքստի նպատակների և գործառույթների սահմանում՝ ըստ խորագրի և ներածական մասի: Որպես կանոն, ակադեմիական տեքստերի խորագրերն ու ներածական մասերը պարունակում են բավականաչափ տեղեկատվություն, որպեսզի սահմանվեն ամբողջ տեքստի համապատասխանությունը ակադեմիական գրավոր խոսույթի հեղինակի նպատակներին,

- տեքստում գլխավոր և երկրորդական տեղեկատվության սահմանում: Սովորաբար առավել էական տեղեկատվությունը տեքստի մեջ ներմուծվում է այնպիսի նշույթների կամ մարկերների օգնությամբ, ինչպիսիք են First..., Secondly..., Next..., Finally...,

- խորհրդանիշերի ու հապավումների օգտագործում: Այս ռազմավարության կիրառումը զգալիորեն արագացնում է համառոտագրման ընթացքը,

- տեղեկատվության ներկայացում գծապատկերի տեսքով՝ այն հաջորդաբար համալրելով մանրամասներով:

Համառոտագրման ռազմավարությունները



Գծապատկեր 2.

Որպես կանոն, գծապատկերը նպաստում է տեքստի ընկալմանը, հատկապես եթե տեղեկատվությունը ներկայացված է այնպես, որ հեշտությամբ կարելի է ավելացնել անհրաժեշտ մանրամասներ: Այնուհետ ենթադրվում է գծապատկերի համալրում մանրամասներով կամ մեջբերումներով: Լրացված գծապատկերը հանդիսանում է երկրորդական տեքստի հիմքը: Վերաշարադրված և տրամաբանորեն վերակառուցված երկրորդային տեքստը, որն ըստ անհրաժեշտության համալրված է առաջնային աղբյուրից մեջբերումներով հանդիսանում է սովորողի հետագա սեփական ակադեմիական գրավոր խոսույթի հիմքը, որը նման է մարդու երկարատև հիշողության մեջ պահպանվող հենքային գիտելիքներին և հանդիսանում է ցանկացած գրավոր կամ բանավոր հաղորդակցության բովանդակային հենքը: Գրագողության ակնհայտ դրսևորումներից է այն, երբ թարգմանվում է օտարալեզու գիտական տեքստը՝ առանց հաշվի առնելու գիտական եզրույթների թարգմանության առանձնահատկությունները: Տերմինակերտման մի շարք սկզբունքների պահպանմամբ հնարավոր է խուսափել անհաջող եզրույթների «ստեղծումից»:



Աղյուսակ 2.

Գրավոր խոսույթի առաջացման մեխանիզմն իրենից ներկայացնում է հաջորդական քայլերի շարք, որը տանում է ներքին խոսքից մինչև արտաքին խոսքը: Խոսքասերման այսպիսի գործընթացը պայմանականորեն հոգելեզվաբանների կողմից ստորաբաժանվում է երեք հիմնական փուլի՝ (նախապատրաստական կամ նախագրային-rehearsing, գրային- writing և խմբագրման – revising, գաղափար – գաղափարի իրագործում – գրվածի խմբագրում) (Леонтьев 1969, 1997, Brookes & Grundy 1991, Hamp-Lyons & Heasley 1993, Hedge 1988, White & Arndt 1994, Johnson 1996, Jordan 1997):

Գրավոր խոսքասերման հոգելեզվաբանական տեսությունն արտացոլում է գրաֆիկական կողով մտքերի ձևավորման ու ձևակերպման գործողությունների հավաքածուն ու հաջորդականությունը:

Առաջին փուլում տեղի է ունենում հաղորդագրության ծրագրավորում, որի ընթացքում հստակեցվում են գործողությունների շարժառիթներն ու խնդիրները, ձևավորվում է հաղորդագրության բովանդակությունը կերպարներով, գծապատկերներով և հասկացություններով: Այս փուլում տեղի է ունենում արտաքին

աշխարհի առարկայական իրավիճակի իմաստավորում և առարկաների, հարաբերությունների և հատկանիշների բազմությունից առավել էականների ու յուրաքանչյուր կոնկրետ դեպքին համապատասխանողների դուրս բերում: Այստեղ է նաև տեղի ունենում առարկայական իրավիճակի տրամաբանական վերամշակում համեմատության, համադրության, գլխավորի առանձնացման, ընդհանրացման գործողությունների միջոցով: Այնուհետ իրականացվում է իմաստների, բառերի, բառաձևերի ընտրություն ըստ իմաստաբանական հատկանիշի:

Երկրորդ փուլում տեղի է ունենում հաղորդագրության վերբալացում ներքին խոսքում, ընդ որում՝ միտքը «տեղավորվում է» քերականական կառուցվածքի մեջ (նախադասություն), իսկ բառերն ընդունում են համապատասխան ձևաբանական տեսք: Կառուցվածքի (ձևի) ընտրությունն իրականացվում է՝ հաշվի առնելով հասցեատիրոջ գործոնն ու արտահայտության նպատակները: Շարահյուսական կառուցվածքը կանխատեսվում է որպես ամբողջական: Այնուհետ, ներքին ծրագրավորման գործընթացում տեղի է ունենում ներքին խոսքում ձևավորված կառուցվածքի կամ դրա մի մասի միաձուլում նախադասության կառուցվածքային նմուշի հետ, որը պահպանվում է գրողի երկարատև հիշողության մեջ: Դրանց համընկնման դեպքում, կառուցվածքը լրացվում է բառաձևերով, իսկ եթե այն չի համապատասխանում նշված բովանդակությանը, ապա տեղի է ունենում նրա վերակառուցում կամ երկարատև հիշողությունից առավել համապատասխան նմուշի դուրս բերում: Այլ խոսքերով, արտահայտության քերականական կառուցումը, ինչպես նաև իմաստաբանական ձևակերպումն իրականացվում է որոնման, վերահսկման և ընտրության փուլերում: Հաղորդագրության վերբալացումը կապված է ընտրության, միաձուլման, փոխակերպման, առանձին մասերից ամբողջականի կազմման, հավաքագրման, կառուցման ու փոփոխման գործողությունների կատարման հետ:

Երրորդ փուլում ձևավորված հաղորդագրությունը «մարմնավորվում է» արտաքին խոսքում գրաֆիկական նշանների տեսքով:

Գրավոր խոսքասերման հոգեբեզվարանական տեսություն



Գծապատկեր 3.

Ինչպես գիտենք, ՀՀ պետական լեզուն հայերենն է, հետևաբար ատենախոսությունների ճնշող մեծամասնության շարադրանքը և պաշտպանությունը կատարվում է հայոց լեզվով/բացառությամբ ուսերենի/: Ասվածից հետևում է, որ գիտական գրավոր խոսք գործադրող ցանկացած անհատ այս կամ այն չափով բախվում է մասնագիտական գրականության, եզրույթների, օտարալեզու բազմաբնույթ տեքստեր թարգմանելու խնդրի հետ: Ուստի, հարկ է օտարալեզու ակադեմիական գրագրության դասընթացի շրջանակներում սովորողներին ընդհանուր գծերով ծանոթացնել թարգմանության գործընթացի առանձնահատկություններին, թարգմանության տեխնիկային և գիտական տեքստի թարգմանության հիմնական պահանջներին: Գիտական ոճով թարգմանությանը ներկայացվող պահանջներից կարելի է առանձնացնել հետևյալը՝

- շարադրանքի տեղեկութացվածություն, այսինքն՝ այն, թե թարգմանողն ինչքանով է ծանոթ խոսքի առարկային և բովանդակությանը,
- շարադրանքի ամբողջականություն, այսինքն՝ ինչքանով են մտքերը հաջորդական ու փոխկապակցված, ինչքանով են առկա ամբողջի և մասերի միջև պատճառահետևանքային կապեր,

➤ օբյեկտիվություն, այսինքն՝ սուբյեկտիվիզմի բացակայություն, բացառությամբ սեփական տեսակետի, դիրքորոշման, եզրահանգման արտահայտման պարագայում,

➤ մատչելիություն, այսինքն՝ ինչքանով են կիրառված լեզվական հասկանալի, պարզ միավորներ և կառույցներ,

➤ եզրույթների ճշգրտություն, այսինքն՝ ինչքանով է թարգմանված տվյալ եզրույթն արտահայտում հասկացության ստույգությունը և հաղորդում այդ հասկացության ամբողջական իմաստային ծավալը (Պետրոսյան 2014): Հետևապես, գիտական տեքստ թարգմանելիս սովորողները պետք է՝

✓ առավելագույն չափով տիրապետեն թարգմանող լեզվի նորմերը,

✓ որքան հնարավոր է խուսափեն լայնորեն կիրառական կայուն դարձվածներից, որոնք միայն առաջին հայացքից կարող են ճիշտ թվալ,

✓ անհարկի չփոխակերպեն շարահյուսական «անհարազատ» կառույցները. անհրաժեշտ է որքան հնարավոր է հարազատ մնալ բնագրին,

✓ միանշանակորեն չտրվեն տառացի թարգմանությանը, ընդունելի է բնագրի խոսքային արտահայտությունների ծավալի սեղմում,

✓ չխուսափեն փոխառությունների կիրառությունից: Փոխառությունների գործադրումն արդարացված է, երբ մայրենի բառային համարժեքը գործածական չէ, կամ էլ լեզվական տեսանկյունից սխալ է,

✓ թարգմանելիս գրի առնեն առաջին հայացքից անհամարժեք թվացող մտքերը, որոնք, սեփական թարգմանածը խմբագրելիս, կօժանդակեն՝ գտնելու բառային ու կառուցվածքային ճիշտ ձևերը:

Ինչպես տեսնում ենք, վերը նշված կետերը բովանդակային այն պահանջներն են, որոնք առհասարակ ներկայացվում են գիտական տեքստին: Սակայն, սա խնդրի միայն մեկ կողմն է: Գիտական տեքստեր թարգմանելիս ոչ պակաս կարևոր են բառային, քերականական, մասնագիտական եզրույթաբանության առանձնահատկությունների հաշվի առնումը և գործադրումը: Ինչպես արդեն նշել ենք, ակադեմիական գրավոր տեքստեր թարգմանելիս պետք է ընտրել մայրենի լեզվում առկա այնպիսի կառույցներ, լեզվական միավորներ, որոնք կլինեն հասկանալի, օբյեկտիվ, ճշգրիտ, տրամաբանված, զուրկ հուզաարտահայտչական նրբերանգներից և երկդիմությունից:

Այսպես՝ ակադեմիական գրավոր խոսքի պատշաճ թարգմանության համար սովորողներին անհրաժեշտ է ծանոթացնել թարգմանագիտության մեջ հայտնի մի շարք տեխնոլոգիաների և հնարների հետ: Բարխուդարովն (1975) և Կոմիսսարովը (1990) առանձնացնում են թարգմանական բառաձևի փոխարինման հնարը:

Շատ հաճախ թարգմանիչը բախվում է մի շարք հասկացությունների, որոնք գոյություն չունեն թիրախ լեզվում (untranslatable notion), ուստի այս պարագայում փոխարինումներն անխուսափելի են: Սա վերաբերում է հիմնականում տեղայնաբանություններին, որոնք բնորոշ են միայն տվյալ իրականությանը: Լեզվաբանական գրականության մեջ այս հասկացությունները կոչվում են իրոյթներ ամ ռեալիաներ: Իրոյթի թարգմանության հիմնական դժվարություններն են՝ ա. համարժեքի բացակայությունը, բ. իրոյթի առարկայական նշանակության հետ մեկտեղ ազգայի և պատմական կոլորիտի փոխանցման անհրաժեշտությունը (Հակոբյան 2003): Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ թարգմանող լեզվում առկա են համարժեքներ, սակայն թարգմանիչը տվյալ համատեքստում նպատակահարմար է գտնում փոխարինել բնագրային տարբերակը առավել տեղին լեզվական միավորով: Այսպիսի փոխարինումներն երբեմն անվանում են իրավիճակային համարժեքներ, քանի որ այս կամ այն բառային միավորի ընտրությունը թելադրում է տվյալ համատեքստը, իրավիճակը: Օրինակ՝ A measuring system for direct sales **shall be provided** with means for resetting the display to zero. Ուղիղ առևտրի համար նախատեսված չափիչ համակարգը **պետք է ունենա** ցուցմունքները զրոյացնելու միջոց (Սահակյան 2014):

Մենք համակարծիք ենք հեղինակի հետ այն հարցում, որ տվյալ օրինակում բառացի թարգմանությունը, այն է՝ **պետք է ապահովված լինի** արհեստական և հայոց լեզվում չհնչող կառույց է: Անգլերենից հայերեն թարգմանելիս շատ հաճախ կրավորական կառույցը փոխարինվում է ներգործականով: Օրինակ՝ These new methods of work must be used in all branches of our industry. Մեր տնտեսության բոլոր ճյուղերը պետք է կիրառեն աշխատանքի այս նոր մեթոդները: The rate of chemical reaction is influenced by many factors. Քիմիական ռեակցիայի արագության վրա ազդում են շատ գործոններ:

Կարևոր հնար է բառերի բացթողումը, որը կատարվում է այն ժամանակ, երբ բաց թողնված միավորը չի խաթարում բնագրի իմաստաբովանդակային արժեքը: Օրինակ՝
The effect of an electromagnetic disturbance on a gas meter or volume conversion device shall be such that:

—the change in the measurement result in no greater than the critical change value as defined in 3.1.3, or

—the indication of the measurement result **is such that** it cannot be interpreted as a valid result, such as a momentary variation that cannot be interpreted, memorized or transmitted as a measuring result.

Գազի հաշվիչի և ծավալի մեծության վերափոխման սարքի վրա էլեկտրամագնիսական աղմուկի ազդեցությունը պետք է լինի այնպես, որ՝

— չափման արդյունքի փոփոխությունը չգերազանցի փոփոխության կրիտիկական արժեքը, ինչպես սահմանված է 3.1.3 կետում, կամ

— չափման արդյունքի ցուցմունքը չմեկնաբանվի որպես ճշգրիտ արդյունք, օրինակ՝ վայրկենական շեղումը, որը չի կարող մեկնաբանվել, հիշվել կամ փոխանցվել որպես չափման արդյունք (Սահակյան 2014):

Strange though it **may** seem, these systems have similar tactical duties **to perform**. Որքան էլ տարօրինակ թվա, այս համակարգերն ունեն նույնական մարտավարական կարողություններ:

Առանցքային է համարվում տեղափոխման կամ շրջադարձության հնարը: Այս հնարը կիրառելու ընթացքում պետք է հաշվի առնել այն փաստը, որ առանձնացնում են լեզուների չորս խումբեր՝ թեքական, կցական, անջատական և բազմահամադրական: Ըստ այս խմբերի դասակարգվում են լեզուների երկու տեսակ՝ վերլուծական/քերականական իմաստներն արտահայտվում են բառերի դասավորությամբ, հնչերանգով, օժանդակ բառերով և մասնիկներով/ և համադրական/գործում է և՛ ներքին թեքումը, և՛ մասնիկավորումը, և՛ շարահյուսական բարդությունը/: Ի տարբերություն հայերենի, որը համադրական տիպի կցական լեզու է՝ անգլերենը վերլուծական տիպի անջատական լեզու է: Հետևապես, անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ կարող են առաջանալ շարահյուսական կարգի

դժվարություններ: Անգլերենին հատուկ է բառերի կայուն դասավորությունը/կայուն շարահասություն/, իսկ հայերենն ունի բառերի շրջուն դասավորություն/շրջուն շարահասություն/, ուստի այս առանձնահատկությամբ պայմանավորված՝ տեղափոխումները դառնում են անխուսափելի: Օրինակ՝

The fundamental principles of alternating current are presented in this chapter.

Այս գլխում ներկայացված են փոփոխվող էլեկտրական հոսանքի հիմնարար սկզբունքները:

Ավելացման հնարը ենթադրում է ավելացնել այս կամ այն լեզվական միավորը, որը բացակայում է բնագրում, որպեսզի ապահովվի թարգմանվող նյութի ամբողջականությունն ու տրամաբանվածությունը: Ավելացում կատարում են նաև հաղորդվող տեղեկությունն առավել ըմբռնելի դարձնելու նպատակով, հատկապես հապավումների, տեղայնաբանությունների լուսաբանման ժամանակ: Օրինակ՝

This new branch of science, **young as it is**, touches on many important practical applications. Գիտության այս նոր ճյուղը, չնայած որ ի հայտ է եկել ոչ վաղ անցյալում, գործ ունի շատ կարևոր գործնական առաջադրանքների հետ: Other experiments employ a large number of anchor-buoy stations which allow hundreds of instruments to be simultaneously operated for collecting data on the state of water masses over extensive areas. Of these one may mention the **MODE (Mid-Oceanic Dynamic Experiment)** whose first stage is now being carried out by American scientists together with representatives of other countries including those of Russia.

Նախադասությունների միավորում հնարը կիրառում են, հաշվի առնելով այն փաստը, որ շատ հաճախ անգլերենից հայերեն թարգմանելիս պարզ նախադասությունները միավորվում են մեկ բարդ նախադասության մեջ: Օրինակ՝

We have succeeded in accomplishing this task ahead of time. By accomplishing this task ahead of time we helped our desighning bureau in obtaining the necessary data for their work.

Մեզ հաջողվեց նախօրոք իրականացնել այս առաջադրանքը և օգնել մեր նախագծային բյուրոյին ստանալ անհրաժեշտ տվյալներ աշխատանքի համար:

Պատճենում հնարը կիրառվում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ելակետային տեքստի և թարգմանվածքի լիակատար համարժեքությունն է, ինչը ենթադրում է թարգմանող և թիրախ լեզուների նորմերի լիակատար նույնություն: Օրինակ՝ *In the following analysis, this method was applied to define the new nontraditional technology. Տվյալ վերլուծության մեջ այս մեթոդը կիրառվել է սահմանելու նոր ոչ ավանդական տեխնոլոգիան:*


Սրանք այն թարգմանական ընդհանուր հնարներն են, որոնք անհրաժեշտ են սովորողներին գիտական գրավոր խոսք գործադրելու համար: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ գիտական տեքստը, ներառյալ նաև եզրույթները, որքան մասնագիտական, նույնքան լեզվական իրողություններ են: Այս հանգամանքը պետք է հաշվի առնի ակադեմիական գրավոր խոսք գործադրող յուրաքանչյուր անհատ օտարալեզու բնագիր աղբյուրներից օգտվելու և համապատասխան նյութեր թարգմանելու գործընթացը կազմակերպելու ժամանակ: Թարգմանություն կատարելու տեխնիկական հնարների տիրապետումը մեծապես կարող է նպաստել լիակատար և հաջողված թարգմանություն իրականացնելու համար:

1.3. Ակադեմիական գրագրության ուսուցման հիմնական մոտեցումները

Օտար լեզվով գրավոր խոսքի իրականացումը, ինչպես հայտնի է, լեզվի իմացության բաղադրիչներից է և դրա ինացությունն, իրավամբ, կարևոր նախապայման է օտար լեզու դասավանդելու համար: Սակայն, հանուն արդարության, պետք է նշել, որ լեզվական հմտությունների շարքից (խոսել, լսել, գրել, կարդալ) գրավոր խոսքի հմտություններն իրենց առաջնահերթության աստիճանով որոշ չափով զիջում են, օրինակ, բանավոր խոսքի հմտություններին: Եվ այս պատկերը, բնավ, էլ պատահական չէ: Չ՞է որ լեզվի իմացության բարձր մակարդակի ցուցիչ կարելի է համարել բանավոր անբռնագրոս, հանպատրաստից խոսքը: Նշվածը դույզն անգամ չի անտեսում կամ փորձում ոչ համալիր մոտեցում ցուցաբերել գրավոր խոսքի հմտությունների ուսուցմանը: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր անհատի գրագիտության, զարգացվածության աստիճանը չափվում է նաև նրա գրելու, մտքերը ճշգրիտ շարադրելու, դրանք տրամաբանորեն իրար կապելու, բառային ձևերի, ոճաժանրային իրողությունների, քերականական կառույցների և, ի վերջո, ուղղագրական կանոնների իմացությամբ: Պատահական չէ նաև, որ գրելու հմտությունները ստուգվում են այնպիսի լեզվի միջազգային ճանաչում վայելող քննությունների շրջանակներում, ինչպիսիք են՝ TOEFL, IELTS և այլն: Դեռ ավելին, նշված քննություններում պարտադիր կերպով ստուգվում են քննվողների էսսե գրելու հմտությունները, որը, ինչպես հայտնի է, ակադեմիական գրագրության ամենատարածված տարատեսակն է: Նման մոտեցում է դրսևորվում նաև Բոլոնիայի գործընթացի շրջանակներում օտար լեզվին վերաբերող փաստաթղթերում, որտեղ գրավոր խոսքի հմտությունների ուսուցումը դասավանդման կարևոր մաս է կազմում: Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացը կազմակերպելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ ուսուցումն ավանդաբար հիմնվում է երեք հիմնական մոտեցումների վրա՝ դեպի տեքստ-արդյունքը կողմնորոշված մոտեցում/*the product approach*/, գործընթացային մոտեցում/*the process approach*/ և ժանրային մոտեցում/*the genre approach*/ (Tribble 1996):

Ի.Լ.Կոլեսնիկովան և Օ.Ա.Դոլգինան նշում են, որ դեպի տեքստ - արդյունքը կողմնորոշված մոտեցման ժամանակ կարևորագույն նշանակություն ունի խոսքային

գործունեության արդյունքը՝ գրավոր հաղորդագրությունը, տեքստը, գրավոր «ստեղծագործությունը» (Колесникова, Долгина 2001): Այս գործոնն առաջնային է հոգեկենտրոնական, սոցիալական ու այլ գործոնների համեմատությամբ, քանի որ դեպի տեքստ-արդյունքը կողմնորոշված մոտեցման մեթոդաբանական հիմքը վարքաբանական տեսությունն է: Այս մոտեցումն ենթադրում է տեքստ - նմուշների առատ կիրառություն ուսումնական գործընթացում՝ առանց որևէ սահմանափակումների: Գրավոր խոսքի հմտությունների ձևավորումն ու զարգացումը մեծապես հիմնվում է տեքստ - նմուշների կառուցվածքաբանական դասակարգման, լեզվական տարրերի ճշգրիտ կրկնօրինակման, նմանակման հնարների վրա: Առաջին հայացքից, դատապարտելի ոչինչ չկա կրկնօրինակման միջոցով սովորողների մոտ որոշակի լեզվական հմտությունների ձևավորման մեջ: Սակայն, տեքստ - նմուշների «կուրորեն» նմանակումը հղի է սովորողների ինքնուրույն մտածողության ու ստեղծագործական ներուժի անտեսման վտանգով: Այդուհանդերձ, գրավոր խոսքը, մասնավորապես ակադեմիական գրագրությունն, ենթադրում է գիտական ոճի, տեքստի արտաքին ու ներքին կառուցվածքային առանձնահատկությունների, բառային ու քերականական հատկանիշների հաշվի առնում ու յուրացում: Հավանաբար, այս տարրերի առկայությունն է արդարացնում սույն մոտեցման գործադրումն ուսումնական գործընթացում: Ակնհայտ է, որ այդ մոտեցումը գերիշխում է շատ բուհերում, որտեղ գերակայում է ակադեմիական գրագրության քերականացված ուսուցումը: Ընդ որում տեքստ-նմուշի վերլուծությունից դեպի ինքնուրույն գրավոր հաղորդագրության ստեղծման ընթացակարգը խիստ կանոնակարգված է: Գրավոր խոսքի հմտությունների յուրացման գործողությունների հաջորդականությունը ներկայացված է հետևյալ սխեմայում:



Գծապատկեր 4.

Այս հաջորդականությունն արտացոլում է «կարդա – վերլուծիր – գրիր» հայտնի կաղապարը /read – analyze - write model/, համաձայն որի՝ աշխատանքի առաջին փուլը տեքստի հատվածների ընթերցումը, իմաստավորումն ու վերլուծությունն է, որոնք փոխառված են տարբեր ժանրերի ստեղծագործություններից (Zamel 1987):

Աշխատանքի հաջորդ փուլն արտահայտությունների կառուցումն է տեքստ - նմուշում առկա տարբեր կառուցվածքային միավորների օրինակով: Այս փուլում կատարվող տիպային վարժություններն են *բացթողումների լրացումը (gap-filling)*, *նախադասությունների լրացումը (completion)*, *վերաձևակերպում (rewriting)*, *նախադասությունների, պարբերությունների տրամաբանական վերախմբավորում (unscrambling)*, *պարբերության կառուցում ենթահիմքի հիման վրա, տեքստի ստեղծում պարբերության հիման վրա, այսինքն՝ ընդլայնում (expansion)* (Колесникова, Долгина 2001): (Տե՛ս հավելված 4):

Աշխատանքի եզրափակիչ փուլը սովորողների կողմից ինքնուրույն գրավոր հաղորդագրություններ կառուցելն է: Գրավոր աշխատանքների խմբագրումը, լեզվական, կառուցվածքային, ոճական ճշգրտությունը սովորաբար ստուգվում է

դասավանդողի կողմից (Колесникова, Долгина 2001): Այսպիսով, դեպի տեքստ - արդյունքը կողմնորոշված մոտեցման շրջանակներում գրագրությունն ընկալվում է՝ որպես արդեն գոյություն ունեցող, պատրաստի նախադասությունների, պարբերությունների հիման վրա սեփական գրավոր հաղորդագրության կազմակերպման, «կառուցման» գործընթաց, իսկ գրագրության ուսուցումը, համապատասխանաբար, հանգեցնում է այդ մոդելներով հմտությունների յուրացմանը (Silva 1993): Այսինքն՝ գրավոր հմտության տիրապետման բարձր ցուցիչ կարելի է համարել անթերի տեքստեր ստեղծելու ընդունակությունը (Johns 1997): Այդուհանդերձ, այս մոտեցումն ենթարկվում է քննադատության այն պատճառով, որ սովորողները, ստեղծելով տեքստն ըստ նմուշ - օրինակի, հաճախ չեն գիտակցում դրա գործառույթները, հեղինակի և հասցեատիրոջ դերերը, համատեքստն ու այլ գործոնները, որոնք ունեն անմիջական ազդեցություն գրավոր հաղորդագրության «ստեղծման» վրա (Johns 1997):

Ինչպես հայտնի է, գրելու գործընթացը, ստեղծագործական գործընթաց է՝ որպես պրոդուկտիվ, ոչ գծային, փորձարարական գործընթաց, որի ընթացքում գրողը ձևակերպում և բազմիցս վերաձևակերպում, փոխակերպում է իր միտքը՝ ընթերցողին այն առավել ճշգրիտ փոխանցելու համար (Zamel 1983): Սա նախադրյալներ է ստեղծում մեկ այլ՝ դեպի գրելու գործընթացը կողմնորոշված կամ գործընթացային մոտեցման առաջացման համար (process-oriented approach):

Համաձայն գործընթացային մոտեցման՝ առաջին պլան է մղվում ոչ թե վերջնարդյունքը՝ տեքստը, այլ գրավոր խոսքի ստեղծման բարդ, ստեղծագործական գործընթացը: Ուշադրության կենտրոնում են հայտնվում սովորողի անձը, նրա հաղորդակցական և ճանաչողական պահանջմունքները, հետաքրքրությունները, ինքնարտահայտվելու, ինքնիրացվելու հնարավորությունները, ինչպես նաև կարևորվում է սովորողի կողմից իրականացվող մի շարք տարաբնույթ մտավոր գործողությունները/մտքերի սերումից/գեներացիայից, տեղեկույթի հավաքագրումից մինչև տեքստի խմբագրում և տպագրում/: Սա բացատրվում է նրանով, որ գործընթացային մոտեցումն ձևավորվել է ճանաչողական տեսության հիման վրա: Ասվածից ակնհայտ է, որ գործընթացային մոտեցման անառարկելի առավելություն

կարելի է դիտարկել մոտեցման անձնակողմնորոշիչ լինելը, քանի որ առաջնային գործոնն ոչ միայն վերջնարդյունքն է /էսսե, ռեֆերատ, հոդված, մենագրություն/ և գրավոր խոսքի կազմակերպման փուլային հաջորդականությունն, այլ նաև սովորողների ազատ կամքի, ինքնակողմնորոշման, ինքնադրսևորման պահանջմունքները հաշվի առնելը: Համաձայն այս մոտեցման՝ գրավոր խոսույթի ուսուցումն անհրաժեշտ է կառուցել՝ մոդելավորելով այս գործընթացը: Սովորողները, ինչպես նաև փորձառու գրողները, պետք է անցնեն պլանավորման, կազմակերպման, խմբագրման փուլերը: Սա ենթադրում է գրագրության կազմակերպման հետևյալ հաջորդականությունը՝ նախագրային փուլ, բուն գրավոր փուլ, հետգրային կամ գրվածի խմբագրման փուլ:

Ըստ արտասահմանյան մեթոդիստների՝ (J. Harmer, C. Tribble) գրավոր խոսքասերման փուլերի հաջորդականությունը ներկայանում է պլանավորում - սևագրում - խմբագրում - վերջնարդյունք /planning-drafting-editing-final version/ ցիկլային սխեմայով, ընդ որում՝ ուսումնառողը ցանկացած փուլում կարող է անդրադառնալ շարադրանքին՝ մտքի վերաձևակերպումներ, շտկումներ կատարելու նպատակով: Այստեղ կիրառվում են մի շարք տեխնոլոգիաներ, որոնք կքննվեն հաջորդ ենթագլխում:

Գրագրությունը չի կարող լինել բացարձակ «ազատ», քանի որ միշտ սահմանափակվում է դասավանդողների և կրթության այլ շահագրգիռ անձանց կողմից և որ առավել առանցքային է՝ սոցիալ-մշակութային համատեքստով: Այս առիթով Ա. Մ. Ջոնսը նշում է, որ անձնակողմնորոշիչ ուսուցումն ոչ միշտ է համապատասխանում այն սովորողների պահանջմունքներին, որոնք ծանոթ չեն անգլալեզու խոսույթի մշակութային, սոցիալական և լեզվաբանական պահանջներին, քանի դեռ նրանց չի տրվել համապատասխան լեզվական և տեքստային «աջակցություն» (Johns 1997):

Այսպիսով, առաջանում է նոր մոտեցման անհրաժեշտություն, որը պետք է փոխհատուցի այս թերությունը: Այդպիսինն է ժանրային մոտեցումը: Այս մոտեցման գաղափարական հենքը համապատասխան լեզվական ու կառուցվածքաբովանդակային չափանիշներով կոնկրետ ժանրով տեքստերի ստեղծումն է: Բազերմանը գրում է, որ այստեղ նպատակն ոչ թե ուսանողներին ժանրերի

ձևական հատկանիշներին ուսուցանելն է, այլ «...բարձրացնել ուսանողների կողմից այն «կյանքի» ընկալումը, որն առկա է տեքստում» (Bazerman 1988): Նա պնդում է, որ սոցիալական համատեքստի իմացությունը գրողին կօգնի ընտրել ճշգրիտ ճարտասանական մոդելներ, որոնք կիրառական են յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում (Bazerman 1988):


Կանոնավոր գործառական լեզվաբանության ավստրալիական դպրոցը լայնորեն հայտնի է ժանրային ուսուցման ավստրալիական մոդելով (Australian model of genre instruction): Այս մոդելն իրենից ներկայացնում է եռաստիճան շրջափուլ՝ նմանակում, խմբային քննարկում և տեքստի ինքնուրույն կառուցում (Cope & Kalantzis 1993):

Նմանակման փուլում դասավանդողը ցուցադրում է տեքստի որոշակի տեսակ(ներ)՝ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելով տեքստի գործառույթների, նրա կառուցվածքի և բառաքերականական յուրահատկությունների վրա (Cope & Kalantzis 1993): Խմբային *քննարկման* փուլն ենթադրում է մի շարք վարժություններ /դիտարկում, հետազոտություն, համառոտագրում, քննարկում, դերային խաղ և այլն/ (Callaghan & Rottery 1988): *Վերջին* փուլը, ինչպես հետևում է անվանումից, ենթադրում է որոշակի ժանրի տեքստի ինքնուրույն ստեղծում ուսանողների կողմից: Շեշտադրվում է, որ ժանրի ուսուցումն ոչ թե գծային, այլ ցիկլային կամ շրջափուլային գործընթաց է, իսկ ուսուցումը կարելի է սկսել ցանկացած փուլից, որը համապատասխանում է ուսանողների պահանջմունքներին (Callagan, Knapp & Noble 1993):

Ինչպես նշում են Խ.Քեյն ու Տ.Դադլի-Իվանսը, ժանրային մոտեցումը թույլ է տալիս ուսանողներին հասկանալ, որ գրավոր խոսքն աշխարհի իմաստավորման և դրա գործընթացներին մասնակցություն ունենալու գործիք է (Kay, Dudley-Evans 1998): Այս մոտեցումն ուսանողներին հնարավորություն է տալիս մտնել որոշակի խոսույթային միավորի մեջ և բացահայտել, թե ինչպես են գրողները կառուցում (կազմակերպում) տեքստերը: Ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման ժանրային մոտեցման դեպքում մեծ նշանակություն ունի սոցիալական իրավիճակը: Ա.Մ.Ջոնսը նշում է, որ խոսույթի կառուցումը սահմանվում է սոցիումի կողմից, որտեղ ուսանողների գրավոր ստեղծագործությունները ստեղծվում և գնահատվում են, ինչպես իրենց մայրենի լեզվի ու մշակույթի ազդեցությամբ, այնպես էլ ուսումնասիրվող լեզվի ու մշակույթի

տեսանկյունից (Johns 1997): Այս պարագայում առաջին պլան են մղվում գործաբանական, մշակութային, խոսույթային փոխներթափանցման հարցերը: Այդ պատճառով ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման ժանրային մոտեցման դեպքում ուշադրության են արժանանում գրավոր խոսույթի ուսուցման տեսություններն որպես հանրամշակութային երևույթ՝ սոցիոկոնստրուկտիվիզմ (Cook-Gumperz 1986, մեջբերվում է ըստ Johns 1997) և սոցիալական ճանաչողականություն (Geisler 1991, մեջբերվում է ըստ Johns 1997):

Ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման մոտեցումների մեթոդաբանական հիմքերը



Գծապատկեր 5.

Ակադեմիական գրավոր խոսույթի ուսուցման ժանրային մոտեցման շրջանակներում սովորողին վերագրվում է ակտիվ դերակատարություն: Դասավանդողին վերապահվում է պասիվ դերակատարություն: Նա խորհրդատու է, գործընկեր, միջնորդ, հատկապես, երբ խոսք է գնում ակադեմիական համատեքստը բացահայտելուն (Johns 1997):

Դրա հետ մեկտեղ, հետազոտողները առանձնացնում են ժանրային մոտեցման թերությունները: Ըստ Ռ.Բեջերի ու Գ.Ուայթի՝ ժանրային մոտեցման բացասական

կողմն այն հմտությունների թերագնահատումն է, որոնք անհրաժեշտ են խոսույթի կառուցման համար (Badger, White 2000): Ժանրային մոտեցման կիրառման մյուս թերությունը ակադեմիական գրագրության գործընթացը նորմատիվ սկզբունքների կիրառման համակարգ վերածելու վտանգն է: Ինչպես նշում են այդ առումով Խ.Քեյն ու Տ.Դադլի-Իվանսը. «գոյություն ունի տեքստեր գրելու նորմատիվ /պրեսկրիպտիվ/ մոտեցման կիրառման վտանգ, որը սահմանափակվում է տվյալ ժանրի որոշակի շրջանակներով: Հետևաբար, դա կարող է հանգեցնել ստեղծագործական մտքի ծավալման սահմանափակման, դարձնել այն կարծրատիպային, որը կողմնորոշված է միայն դեպի արդյունքը, տեքստ-նմուշը, այլ ոչ թե դեպի այն տեքստը, որը ստեղծվել է հենց սովորողների կողմից» (Kay, Dudley-Evans 1998): Այստեղ խոսք է գնում տեքստերը վերատադրելու և նոր տեքստեր ստեղծելու մասին: Ժանրային սահմանափակումները չպետք է խոչընդոտեն նոր տեքստեր ստեղծելու, նոր խոսք սերելու գործընթացին:

Ա.Մ.Ջոնսը նույնպես մատնանշում է ժանրային մոտեցման ռեդուկցիոնիստական ընկալման վտանգի մասին: Ըստ նրա՝ դա կարող է հանգեցնել գրագրության ավանդական ուսուցման սկզբունքների վերարտադրմանը, երբ առաջնային ռազմավարություն է դիտարկվում տեքստ- նմուշի նմանակումը, որը հետին պլան է մղում սոցիալ - մշակութային բաղադրիչը: Ըստ այդ մոտեցման՝ ուսանողներին պետք է սովորեցնել հասկանալ ժանրային պայմանականությունները ոչ թե որպես ընդմիջտ սահմանված կանոններ (ինչպես դեպի արդյունքը կողմնորոշված մոտեցման ժամանակ), այլ որպես գործոններ, որոնք իրադրային, համատեքստային բնույթ ունեն: Այդուհանդերձ, ուսումնական գործընթացում ժանրային մոտեցման գործադրման պարագայում նկատելի է մասնակի վերադարձ տեքստ - նմուշին, քանի որ այստեղ ևս կարևորվում է որոշակի ժանրի տեքստերի կառուցվածքային և քերականական առանձնահատկությունների յուրացումը, բայց միաժամանակ շեշտադրվում են ժանրերի սոցիալական գործառույթներն ու այն համատեքստերը, որոնցում դրանք կիրառվում են:

Ժանրային մոտեցման սխալ մեկնաբանությունից և կիրառումից խուսափելու համար, Բ.Նյունանը, Խ.Քեյը, ինչպես նաև Մ.Կալազանը առաջարկում են՝

- ուսանողներին տալ ոչ թե մեկ, այլ մի քանի կոնկրետ ժանրի տեքստեր, որոնք տարբեր են իրենց գաղափարախոսական և մշակութային բնութագրերով,
- ուսուցման համար ընտրել այնպիսի տեքստեր, որոնք սովորողների համար կլինեն բնական և հասանելի,
- ժանրային մոտեցումն կիրառել այլ մոտեցումների հետ (Nunan 1991, Kay 1994, Callaghan et al. 1993):

Տարբեր մոտեցումների համադրումը, ինտեգրումն օտարալեզու գրավոր խոսույթի ուսուցման կարևոր պայման և նախապայման է համարվում տարբեր հետազոտողների կողմից արդի փուլում (Nunan 1991, Kay 1994, White 2000): Գրավոր ակադեմիական խոսույթի ուսուցման արդի փուլում առկա է բոլոր վերոնշյալ մոտեցումների տարրերի ինտեգրման միտում: Բառաքերականական և տրամաբանականուցվածքային նորմերի ուսուցման համակցումը գրավոր խոսույթի առաջացման եռափուլ գործընթացում կարող է լինել արդյունավետ: Կարևորվում է նաև գրավոր խոսույթի սոցիալ-մշակութային ասպեկտը, ինչպես նաև դրա հասցեականությունը որոշակի լսարանին: Մենք ևս համակարծիք ենք այն հեղինակների տեսակետների հետ, որոնք ընդունում են բոլոր մոտեցումների տարրերի ինտեգրման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը ակադեմիական գրավոր հմտությունների ձևավորման ու զարգացման նպատակով:

Առաջին գլխի եզրակացություն

Այսպիսով՝ գիտական ոճի և նրա ենթաոճերի վերը նշված առանձնահատկությունների ընդհանրացմամբ կարելի է ամփոփ ներկայացնել ոճի դրսևորման հետևյալ հատկանիշները՝

- գիտական տեղեկատվության ներկայացում հասկացությունների, դատողությունների, մտահանգումների միջոցով,
- տրամաբանվածություն, իմաստային կապերի պահպանում,

- շարադրանքի ապացուցողական դրսևորում, պատճառահետևանքային կապերի ապահովում,
- շարադրանքի կառուցում եզրույթների գործադրմամբ,
- շարադրանքի օբյեկտիվություն, անհատական վերաբերմունքի բացառում,
- պատեհություն, կանոնավորություն, անհարկի մանրամասների բացառում,
- գրական լեզվի նորմերի պահպանում,
- լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների բացառում, չեզոք կամ պաշտոնական բառապաշարի գործածություն,
- գոյականների, ինչպես նաև վերացական նշանակությամբ և գոյականաբար գործածվող տարբեր խոսքի մասերի առատ կիրառություն,
- հեղինակային «մենք»-ի կիրառում,
- պատճառահետևանքային կապ ապահովող տարաբնույթ կապակցող միավորների կիրառություն,
- կայուն շարադասությամբ բարդ նախադասությունների գործածություն:

Ակադեմիական գրագրության ուսուցումը բարդագույն խնդիր է, որը ծառայած է ժամանակակից համալսարանական հանրության առջև: Այն, խոսքային գործունեության առանձին տեսակ լինելով, կատարում է կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթներ: Ավանդաբար օտար լեզու ուսումնասիրողների համար կարևորվում են ընթերցանական, խոսքային և ունկնդրողական հմտությունների ձեռք բերումը: Ակադեմիական գրագրությունը պետք է իր արժանի տեղը գտնի նշված լեզվական հմտությունների շարքում:

Ակադեմիական գրավոր խոսքում տեքստի կապակցման եղանակներն անգլերենում և հայերենում լեզվաբանական տիպաբանության մակարդակում տարբեր են թե՛ շարադասության, ոճական միջոցների և հնարների, թե՛ շաղկապների և շաղկապական կապակցությունների, թե՛ հեղինակի խոսքի կիրառման տեսանկյունից: Ակադեմիական ոճով գրված ցանկացած տեքստ պետք է ունենա կանոնավորություն, ճշգրտություն, սեղմություն, պատեհություն, պարզություն, տրամաբանվածություն: Ակադեմիական գրավոր խոսքն, ունենալով ապացուցողական բնույթ, պայմանավորված է գիտական

հասկացությունների, եզրույթների կիրառմամբ, որոնց վերագրվում է ոճակազմիչ գործառույթ:

Ուսանողները պետք է հստակորեն տարբերակեն անգլերենի ակադեմիական գրագրության մեջ կիրառվող ներկա անորոշ, անցյալ անորոշ, ներկա վաղակատար ժամանակների գործառույթները, կիրառման ենթատեքստերը և իրադրությունները:

Ակադեմիական գրագրություն ուսուցանելիս՝ դասավանդողը պետք է հաշվի առնի ակադեմիական տեքստի շարադրանքի հաջորդականությունը, պատճառահետևանքային կապերի դրսևորումները, օբյեկտիվ իրականության վերաբերյալ գիտելիքի մշակումներն ու ձևակերպումները, որոնք ապահովում են այս տեքստերի վերացականությունն, տրամաբանականությունն ու օբյեկտիվությունը:

Ակադեմիական գրագրության ուսուցման կարևոր պայման է նաև տեքստերի ներքին և արտաքին բովանդակային կառուցվածքների ապահովումը: Ուսանողները պետք է տրամաբանական հաջորդականությամբ կարողանան տեքստը բաժանել նպատակային հատվածների, պարբերությունների: Շատ հաճախ ակադեմիական գրավոր խոսք գործադրելու դեպքում /իսկ դա անխուսափելի է/ սովորողները ստիպված են կատարել տարաբնույթ թարգմանություններ: Թարգմանության տեխնիկայի հիմունքների յուրացումն ակադեմիական գրագրության դասընթացի շրջանակներում պարտադիր է, քանի որ թարգմանական հնարքների չտիրապետելը կամ մակերեսայնորեն տիրապետելը կարող է խաթարել թարգմանության գործընթացը և արդյունքում կստացվի ոչ ստույգ, անհամարժեք թարգմանություն: Ակադեմիական գրագրության մշակույթի կարևոր բաղադրիչ է գրագողության դեմ պայքարելու և գրագողությունից խուսափելու միջոցների յուրացումը:

ԳԼՈՒԽ 2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

2.1. Ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները

Աշխարհում տեղի ունեցող քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային և այլ փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում կրթական համակարգի վրա: Արդի փուլում Բոլոնիայի գործընթացի համատեքստում ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետ պատրաստելու գործընթացում անընդհատ շեշտադրվում է սովորողակենտրոն կրթության դերը: Ուսուցչակենտրոն ուսուցումից սովորողակենտրոն ուսուցման անցման գործընթացը ենթադրում է, որ դասագործընթացը պետք է կառուցվի այնպես, որ սովորողը ձեռք բերի ակնկալվող վերջնարդյունքները: Սովորողակենտրոն ուսուցում իրականացնելու համար անհրաժեշտ է դասի գործընթացը կազմակերպել այնպես, որ սովորողը հայտնվի գործընթացի կենտրոնում, ձգտի ինքնուրույն ձեռք բերել ուսումնասիրվող հարցերի պատասխանները: Հետևաբար, ժամանակակից ուսուցումը պահանջում է կիրառել առանցքայնորեն նախկինում կիրառվող մեթոդներից տարբեր մեթոդներ և տեխնոլոգիաներ: Ավանդաբար մանկավարժության մեջ ընդունված է առանձնացնել ուսուցման մի քանի մոդելներ՝

1. պասիվ՝ սովորողը հանդես է գալիս որպես ուսումնական գործընթացի օբյեկտ,
2. ակտիվ՝ սովորողը հանդես է գալիս որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ,
3. ինտերակտիվ՝ /փոխներգործուն/ սովորողն ինքն է ակտիվորեն մասնակցում կրթության գործընթացին՝ հետևելով իր անհատական ուղուն: Սովորողն անմիջական մասնակցություն ունի առաջադրված խնդրի լուծմանն ու բացահայտմանը, յուրօրինակ, նորարարական մոտեցում է ցուցաբերում ուսումնասիրվող նյութի վերաբերյալ, ինչն էլ հանգեցնում է սովորողների ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացմանը: Մտածողության այս տեսակները ակադեմիական գրագրության հմտությունների զարգացման կարևոր գործոններ են. այն, նախ և առաջ, ստեղծագործական գործընթաց է, երկրորդ՝ այն պահանջում է քննադատական, գնահատողական մոտեցում գրագրության գործընթացին: Այսօր օտար լեզուների

ուսուցման գործընթացում առաջնային կարևորություն է ստանում գրավոր խոսքի ուսուցումը, մասնավորապես ակադեմիական գրագրության ուսուցումը՝ որպես ակադեմիական հաղորդակցության գլխավոր նախապայման: Վերջին տարիներին ակադեմիական գրագրության ուսուցմանը մեծ տեղ է հատկացվում զարգացած կրթական ավանդույթներ ունեցող համալսարաններում: Նույնը սխալական չէ ՀՀ-ի բուհերի համար, քանի որ ուսանողները պետք է կարողանան գրել ակնարկ, հոդված, ատենախոսություն: Ինչպես հայտնի է, ակադեմիական գրագրությունը մեր համալսարաններում պարտադիր դասընթաց չէ: Դա է պատճառը, որ շատ ուսանողներ թերի պատկերացում ունեն ակադեմիական գրագրության մասին, թեև մի շարք դասընթացներում մասնակիորեն կամ հպանցիկ կերպով ուսուցանվում են ակադեմիական գրագրության տարրեր: Ակնհայտ է, որ գրավոր խոսքի, ոճաբանության, տեսական քերականության ուսուցման շրջանակներում ուսանողները ձեռք են բերում ակադեմիական գրագրության որոշակի գիտելիքները: Սակայն, վստահ չենք, որ նրանք յուրացնում են ակադեմիական գրագրության ռազմավարությունները ու տեխնոլոգիաները:

Այսպիսով, արդի փուլում առաջին պլան է մղվում ակադեմիական գրագրության ուսուցման հիմնախնդիրը, այդ ուղղությամբ առկա ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, որոնք կօգնեն ուսանողներին քայլ առ քայլ յուրացնել ակադեմիական գրագրության հիմնադրույթները և տարրերը: Ակադեմիական գրագրության ուսուցումն արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել մի շարք տեխնոլոգիաներ ու մեթոդներ, որոնք դասընթացը կդարձնեն առավել հետաքրքիր, նպատակային, ուղղորդված դեպի սովորողները: Տեխնոլոգիա բառն ունի հունական ծագում, որ նշանակում է գիտություն արվեստի, վարպետության մասին: Առաջին հայացքից թվում է, թե այն պիտի չառնչվի մանկավարժական ոլորտին, սակայն այս եզրույթի նշանակությունը, բնավ, էլ չի հակասում մանկավարժական մի շարք գործընթացների՝ կանխատեսում, ծրագրում, պլանավորում, նկարագրություն, բացատրություն և այլն: Դեռ ավելին, ժամանակակից մանկավարժության մեջ ներկայացվում են տարաբնույթ տեխնոլոգիաներ, որոնք անվանվում են անձին ուղղված, խթանող, զարգացնող, ակտիվ ուսուցման տեխնոլոգիաներ: Այս

տեխնոլոգիաների ճիշտ և տեղին կիրառմամբ էլ պայմանավորված է ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Գրագրական տեխնոլոգիաները, որպես կանոն, մշակվում կամ ընտրվում են ըստ գրելու պլանավորման, գրավոր հաղորդակցության կառուցման, վերանայման փուլերի:

Ինչպես հայտնի է, ակադեմիական գրավոր խոսքը գրագրություն է ուսումնագիտական նպատակներով: Ուստի այն արմատապես տարբերվում է այլ գրավոր տեսակներից՝ անձնական, գեղարվեստական, գործարարական: Գլխավորապես դրա տարբերությունն ակնհայտ է լսարան-ոճ-նպատակ եռամիասնության մեջ: Լսարանն ուսումնական գործընթացի շահագրգիռ այն անձիք են, որոնց անմիջականորեն ուղղված է տվյալ գիտական աշխատությունը /մանկավարժներ, դասավանդողներ, տվյալ բնագավառով հետաքրքրվող ցանկացած անձնավորություն/: Նպատակն ենթադրում է այս կամ այն գրավոր տեսակի կառուցվածքաբովանդակային առանձնահատկությունները: Օրինակ, ակնհայտ է, որ գիտական հոդվածն ու հրապարակախոսական ելույթն ունեն տարբեր գործառույթներ, կառուցվածքային նորմեր ու կազմակերպչական ստանդարտներ, ինչպես նաև ընթերցողի/ունկնդրի վրա ներազդելու տարբեր միջոցներ և միանգամայն ծառայում են տարբեր նպատակների: Ակադեմիական գրագրությունը ստեղծագործակազմակերպչական բարդագույն գործընթաց է, որն ենթադրում է իրականացման որոշակի հաջորդականություն: Ռոբերտ Թոդ Բերրոլլը գրագրական հմտությունների ձևավորման ու զարգացման համար առաջարկում է կիրառել SLOWER մեթոդը, որն մեկնաբանվում է հետևյալ կերպ՝

Select a topic

List your ideas

Organize your ideas

Outline your writing

Write your first draft

Edit your first draft

Rewrite your writing (Carroll 1990):

Գործողությունների նման հաջորդականությունը ճիշտ է նաև ակադեմիական գրագրության հմտությունների զարգացման համար: Սույն մեթոդը նպատակահարմար է կիրառել էսսեներ, հոդվածներ, զեկույցներ գրելու ժամանակ, իսկ գիտական աշխատանքներում այն առավել նպատակահարմար է կիրառել աշխատանքի փորձարարական մասում, որտեղ առավել լսելի պետք է լինի հեղինակի «ձայնը»: Մեկ այլ հեղինակ՝ Մ. Հեյրստոնը, առաջարկում է ակադեմիական գրավոր խոսք ստեղծելուն միտված գործողությունների հետևյալ հաջորդականությունը.

- *Selecting a topic*

Defining your purpose

Identifying your audience

Formulating a research question

- *Researching*

Setting up research strategies

Reading, collecting material, taking notes

Evaluating sources

- *Writing*

Organizing your material

Writing your draft

Mastering the conventions of format and documentation (Hairston 1998).

Ըստ էության, գործողությունների տվյալ հաջորդականությունը համապատասխանում է գրելու եռաստիճան փուլերի հետ/նախագրային, բուն գրագրական, հետգրագրական փուլեր/:

Ինչպես հայտնի է, օտար լեզուների ուսուցման գլխավոր նպատակն օտար լեզվով հաղորդակցական կարողությունների ձևավորումն է: Այսինքն՝ ուսումնական գործընթացում իրականացվող բոլոր մոտեցումները պետք է ուղղված լինեն սովորողների մոտ հաղորդակցական կոմպետենցիայի ձևավորմանն ու զարգացմանը: Հաղորդակցական կոմպետենցիան ներառում է հետևյալ հիմնարար բաղադրիչները՝

- լեզվական-խոսքային կարողություններ,
- հանրամշակութային կարողություններ,

- գործաբանական կարողություններ,
- փոխհատուցման կարողություններ,
- ուսումնաճանաչողական կարողություններ (Լեզուների

իմացության/իրագրելության համաեվրոպական համակարգ, 2005):

Ըստ էության, ակադեմիական գրագրության ուսուցումը սերտորեն առնչվում է այս բոլոր բաղադրիչների հետ:

Կրթության նոր անձնակենտրոն հարացույցը պահանջում է դասավանդման ընթացքում կիրառել անձին ուղղորդված, փոխներգործուն մեթոդներ ու տեխնոլոգիաներ: Այսօր ընդունված է դասապրոցեսի ընթացքում կիրառել *ԽԻԿ* համակարգը, որը, ինչպես հայտնի է, ժամանակակից ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների համակարգ է: Ըստ *ԽԻԿ* համակարգի՝ ուսուցման գործընթացը բաժանվում է խթանման, իմաստավորման, կշռադատման փուլերի: *ԽԻԿ*-ը, նախ և առաջ, առաջ է քաշում մի շարք մեթոդներ ու տեխնոլոգիաներ՝ տվյալ փուլում անհրաժեշտ արդյունքի հասնելու համար: Եթե զուգահեռներ տանենք *ԽԻԿ* համակարգի և ակադեմիական գրագրության եռափուլ/նախագրային, բուն գրային, հետգրային/ գործընթացի միջև, ապա պարզ կլինի, որ *ԽԻԿ* համակարգը կազմող փուլերն ու դրանցում կիրառվող տեխնոլոգիաները մեծ հաշվով համընկնում են ակադեմիական գրավոր խոսք կառուցելու փուլերի ու կիրառվող տեխնոլոգիաների հետ: Որպես կանոն, առաջին փուլում «ստեղծվում» են գաղափարներ, նոր նյութի վերաբերյալ բացահայտվում են սովորողների գիտելիքները, այսինքն՝ սա սովորողների նախնական գիտելիքների խթանման փուլն է, երկրորդում՝ այդ գիտելիքները կազմակերպվում են, տեղի է ունենում նոր և հին տեղեկատվության շաղկապում՝ իմացության նոր կառույցի ստեղծմամբ, սովորողները նոր ստացած տեղեկատվությունը արտահայտում է իր բառերով և ձևակերպումներով. սա իմաստի ընկալման փուլն է, վերջին փուլը տվյալ գաղափարների վերանայման, խմբագրման փուլն է/*ԽԻԿ* համակարգում համընկնում է կշռադատման փուլին/: Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում տեխնոլոգիաների ու մեթոդների հիմնական մասնաբաժինը սովորաբար կիրառվում է նախագրային փուլում: Ա. Օշիման և Ա. Հոգը առաջարկում են նախագրային փուլը սկսել թեմայի ընտրությամբ և

կոնկրետացմամբ/*choosing and narrowing the topic*/ (Oshima & Hogue 2007): Օրինակ՝ *Environment-Pollution-Ocean Pollution- Oil Spills- Effects on Sea Life- Sea Birds*. Թեմայի վերնագիրը պետք է արտահայտի որոշակիություն, քանի որ խրթին ներկայացված վերնագիրը նույնիսկ տվյալ ոլորտի մասնագետի մոտ կարող է շփոթ առաջացնել: Որպես կանոն, ճիշտ ձևակերպված վերնագիրը հստակ նախանշում է հետագա շարադրանքի բովանդակությունը: Վերնագրերում առանցքային բառերի առկայությունն առավել կանոնակարգված կդարձնի շարադրանքը (օրինակ՝ *The development of primary education in Armenia and the issues facing this sector*): Աշխատանքի հաջորդ փուլը տվյալ թեմայի վերաբերյալ մտքերի սերումն է, որի իրականացման համար կիրառվում են մի շարք տեխնոլոգիաներ: Ակադեմիական գրագրության ուսուցման տեսանկյունից առավել կարևորվում են այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են անձնական գրառումների */journal writing/*, թվարկման */listing/*, խմբավորման */clustering/*, տարերայնորեն իրականացվող կամ ազատ գրառման */freewriting/* տեխնոլոգիաները: Ըստ էության, այս տեխնոլոգիաները մեկ ընդհանուր՝ «մտագրոհ» կամ «մտքերի տարափ» տեխնոլոգիայի տարատեսակներն են:

Անձնական գրառումներ */journal writing/*: Այս տեխնոլոգիան կրում է բացառապես անձնական բնույթ: Առաջարկվում է գրի առնել որոշակի թեմայի վերաբերյալ ցանկացած միտք կամ գաղափար՝ առանց մտահոգվելու շարադրանքի կառուցվածքաբովանդակային և լեզվական առանձնահատկությունների վերաբերյալ: Քանի որ այս տեխնոլոգիան ունի խիստ անհատական կողմնորոշվածություն, ուստի ընդունելի է նույնիսկ ցանկացած, այսպես կոչված «անհեթեթ» մտքի գրառում:

Թվարկում */listing/*: Այս տեխնոլոգիան ընդհանուր գծերով առավել նույնական է մտագրոհ տեխնոլոգիայի հետ: Այստեղ խրախուսվում է ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառերի թվարկումն ու գաղափարների արտահայտումը: Առաջադրված խնդրի լուծման համար գրի են առնվում բոլոր գաղափարները՝ առանց խտրականության, ստեղծվում է «գաղափարների բանկ»: Օրինակ՝

Religious Art in Ancient Greece and Ancient Egypt

religion

hardship

rigidity

goddesses

the Parthenon	sculpture	architecture	music
moderation	pylons	life after death	idealism
art	statues	softness	Sophocles
temple of Athena Nike	poems	philosophy	tragedies
ostentatious	Horus	mass	power
Greece	tombs	gods	suffering
temple of Karnak	painting	friezes	restraint
individualism	Athena	colossal size	pharaoh
Egypt	lightness	change	hubris
pyramids	vases	metops	order
wealth and luxury	animals	stylized	democracy
temples	heaviness	stability	autocracy
columns/pillars	Iliad	capitals	freedom
poverty	fate	realism	Oedipus Rex.

Առաջարկվում է մեկտեղել նույնատիպ գաղափարները: Օրինակ՝

ORGANIZING PRINCIPLE

Types of architecture

Karnak,
pyramids, tombs

Parts of temple

pylons

Qualities of Greek art

softness,
lightness

Qualities of Egyptian art

power,

Characteristics of Greek society

hard- ship

ITEMS

temples, the Parthenon, temple of
temple of Athena Nike,

friezes, metopes, capitals, columns,

realism, idealism, order, restraint,
individualism, moderation,

rigidity, mass, stylized, colossal size,
stability, ostentatious, heaviness

change, democracy, poverty, freedom,

Characteristics of Egyptian society	pharaoh, autocracy, wealth, rigidity, luxury
Themes in Greek tragedies and epic poems	hubris, fate, life after death, suffering
Gods and Goddesses	Horus, Athena (Carroll 1990)

Տարերայնորեն իրականացվող կամ ազատ գրառում/*freewriting*/: «Մտագրոհ» տեխնոլոգիայի տարատեսակ է: Սովորողներից պահանջվում է առանց սահմանափակումների գրի առնել գաղափարներն ու մտքերը: Ե՛վ թվարկման, և՛ տարերայնորեն իրականացվող գրառման տեխնոլոգիաները միտված են նոր գաղափարների ի հայտ գալուն: Առաջարկվում է գրի առնել մտքերն ու գաղափարներն այնքան ժամանակ, մինչև կսպառվի գաղափարների հոսքը: Ենթադրվում է, որ գրելու ընթացքում նմանատիպ գաղափարները «կկառչեն» միմյանց: Օրինակ՝

Problems at Evergreen College

What is the biggest problem at Evergreen College? Well, I don't know. In fact, I can't think of one particular problem although I know there are many problems. For one thing, **classrooms are usually overcrowded.** Besides, **the classrooms are poorly maintained.** In several of my classes, there are broken chairs and litter on the floor. Students even leave their dirty cups and other garbage on the desks. So the rooms are messy.


Oh yes, I think that **another problem is parking near the campus.** The college has a big parking lot across from the west side of campus, but it is always full. So many times students have to park their cars in the residential areas, which can be so far away from the campus that they have to run to class to make it.

Շարադրանքն ընթերցելուց հետո սովորողներն ընդգծում են այն գաղափարները, որոնք կցանկանային առավել հանգամանորեն զարգացնել, օրինակ՝ the parking problem at Evergreen College (Oshima & Hogue 2007):

«Խմբավորում»/*clustering*/: «Խմբավորումը» գաղափարներ գեներացնելու ևս մեկ արդյունավետ տեխնոլոգիա է: Սա վերընշված տեխնոլոգիաներից տարբերվում է իրականացման սխեմատիկ բնույթով: Այս տեխնոլոգիայի կիրառման պարագայում


առաջարկվում է թեմայի վերնագիրը վերցնել շրջանակի մեջ, իսկ դրանից ածանցյալ գաղափարներն ու մտքերը այլ շրջանակների մեջ: Օրինակ՝

Գծապատկեր 6.



(Oshima & Hogue 2007)

Նախագրային փուլում կիրառվող մեկ այլ տեխնոլոգիա է «Պրիզման»: Այն ուղղված է ս քննվող երևույթի, հասկացության վերաբերյալ սովորողների ենթագիտակցական ոլորտում զուգորդական կապերի բացահայտմանն ու արձանագրմանը: Առաջարկվում է նախ արձանագրել սկզբնաբառն ու վերջնաբառը, ապա սկզբնաբառից բխեցնել համապատասխան գաղափարներ և մտքեր, այնպես որ սկզբնաբառի և վերջնաբառի միջև ստեղծվի իմաստային կապ: Օրինակ՝




Գծապատկեր 7.

Academic writing follows a particular *tone* and adheres to traditional conventions of grammar, spelling and punctuation.


Կարևոր տեխնոլոգիա է մտքերի քարտեզագրումը (mind-mapping): Այս տեխնոլոգիան առավել նպատակահարմար է կիրառել ակադեմիական բառապաշարի ներմուծման և յուրացման գործընթացում: Օրինակ՝

Գծապատկեր 8.



(Hewing 2012)

Մեկ այլ՝ պատճառահետևանքային շղթա (cause and effect chain) տեխնոլոգիան կիրառվում է շարահերթի պատճառահետևանքային կապի բացահայտման և ճիշտ կառուցման համար: Օրինակ՝



Նախագրային փուլում կիրառվող կարևոր տեխնոլոգիա է, ըստ Ստեպան Չուդիի, *ամենօրյա գրելու սովորությունն ձևավորելը* (Tchudi 1986): Ամենօրյա գրելն ուսուցողական նպատակ է հետապնդում: Գրառում կատարելն ինտերակտիվ ուղղվածություն կարող է ունենալ այն առումով, որ սովորողներն ոչ միայն գրառում են, այլև քննադատորեն անդրադառնում են այն ամենին, ինչ կարդում, լսում կամ ընթերցում են: Հետաքրքիր գործառույթներ է կատարում այսպես կոչված «բաշխվող ճանաչողական ռազմավարությունը», երբ ուսանողներն ամենօրյա գրելու ընթացքում գրում են միմյանց (Brown et al 1993): Ամենօրյա գրելու ընթացքում ուսանողներն իրար փոխանցում են հաղորդագրություններ, գրում են նամակ, ինչպես նաև ելույթներ, համառոտագրություններ կամ ամփոփումներ: Բինն առաջարկում է մի շարք գրավոր խոսքի ուսուցման ռազմավարություններ (Bean 2001): Օրինակ՝ ուսանողները դասի սկզբում պատասխանում են դասախոսի հարցերին և գրի են առնում այն ամենը, ինչ

լում են բուռն քննարկումների ընթացքում (Bean 2001): Արդյունավետ է նաև, երբ ուսանողները ընթերցում են քննարկման արդյունքները (Angelo & Cross 1993): Տարբեր հարցերի շուրջ քննարկումներ հասկանալը և գրի առնելն օգնում է ուսանողներին տարանջատել գլխավորը երկրորդականից, առանձնացնել հիմնական գաղափարը, առանցքային բառերը կամ հիմնաբառերը, հասկացություններն և գրավոր խոսքով ի մի բերել հասկացածը: Ինչ խոսք, տարբեր տեխնոլոգիաների ու հնարների յուրացումն ու գործադրումը կարող են բարձրացնել ակադեմիական գրագրության ուսուցման արդյունավետությունը, սակայն որևէ ոլորտում որակյալ հետազոտություն իրականացնելու համար տեղեկատվական աղբյուրների ընտրությունն ունի առանցքային նշանակություն: Այսօր համացանցային հսկայական տիրույթում մի կողմից, զետեղված են ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ հսկայածավալ տեղեկատվություն, բազմապիսի հրապարակումներ, հոդվածներ, գրքեր, իսկ մյուս կողմից, անհրաժեշտ է այդ տեղեկույթի «շտեմարաններից» ընտրել պետքականը, որակյալը, ուսումնասիրվող երևույթին անմիջական առնչություն ունեցող տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ, տեղեկատվական աղբյուրներն ըստ բնույթի լինում են

- առաջնային/primary/- երբ տեղեկատվությունն ստացվում է «առաջին ձեռքից», այսինքն՝ իրադարձություններում անմիջականորեն ներգրավված անձանցից,
- երկրորդային/secondary/- երբ տեղեկատվությունն ստացվում է «երկրորդ ձեռքից»՝ միջնորդավորված այսինքն՝ տեղեկատվություն, որը զետեղված է գրքերում, բառարաններում, ամսագրերում, թերթերում և այլն (Hairston 1998):

Տեղեկատվության հսկայածավալ քանակության հետ ճիշտ աշխատելու համար՝ պարտադիր հրամայական է սովորողների մոտ զարգացնել տեղեկույթին քննադատաբար մոտենալու ռազմավարությունները: Սակայն, տվյալ նյութին քննադատաբար մոտենալ չի նշանակում պարսավել կամ արժեզրկել մեկ այլ անհատի աշխատանքը: Քննադատական մոտեցում որդեգրել նշանակում է առավել հանգամանորեն ուսումնասիրել տվյալ աշխատանքում առկա գաղափարները, եզրահանգումները, փաստերն ու փաստարկները, նորույթը: Քննադատական մոտեցումն ենթադրում է նպատակաուղղված հարցադրումներ, որոնք հարգանքի

նշան պետք է լինեն այլոց կատարածի ու ներդրածի հանդեպ (Kamler & Thomson 2006):

Ակադեմիական գրագրության մեկ այլ կարևոր հմտություն է ճիշտ փաստարկումներ կառուցելու կարողությունը /constructing argument/: Այս հմտության զարգացման համար պարտադիր և անհրաժեշտ պայման է տարբեր տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական բազմաբնույթ գրականության ընթերցում՝ քննադատական և/կամ օբյեկտիվ վերաբերմունք ձևավորելու համար: Տրամաբանական ու ճշգրիտ փաստարկներ կառուցելու համար Լեկին նպատակահարմար է համարում խուսափել հետևյալ իրողություններից՝

- չափազանցում, չհիմնավորված փաստարկներ,
- տրամաբանական աղավաղումներ,
- հուզազգայական բառերի կիրառում, հնացած փաստերի վկայակոչում և այլն (Leki 1998): Ակադեմիական գրավոր խոսքում փաստարկներ ներմուծող արտահայտություններն են՝

X suggests that

X contends that

X makes a case that

X develops the argument further by suggesting that

Կրավորական կառույցի գործադրմամբ՝

The paper argues that

The findings indicate that

This seems to imply that

The evidence suggests that


Հակափաստարկային արտահայտություններ՝

Some assert that..... but this underestimates the influence of

While a lot of evidence points to this conclusion..... there is another aspect to be considered


On the contrary և այլն:

Այսպիսով՝ ակադեմիական գրավոր խոսքի ուսուցումն ենթադրում է բարդ մտավոր գործունեություն, քանի որ ուսանողները պետք է հասկանան, առանձնացնեն գլխավոր գաղափարն և գտնեն համապատասխան բառեր և արտահայտություններ այն ներկայացնելու համար: Օտար լեզուների ուսուցման համատեքստում գործն ավելի է դժվարանում, քանի որ նրանք պետք է հաշվի առնեն տվյալ լեզուն տիրապետող մարդկանց հոգեկերտվածքը, լեզվամտածողությունը, նրանց խոսքի ոճաժանրային առանձնանահատկությունները: Դա հաշվի առնելով՝ Զ. Մ. Սուեյսը և Բ. Բ. Ֆրիքը ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում առանձնացնում են հետևյալ նախադրյալները՝



(Swales & Freak 2009):

Ըստ Հեյրստոնի՝ առաջնային են հետևյալ գործոնները՝



Ակնհայտ է, որ նշված նախադրյալներն ենթադրում են համագործակցություն գիտական տեքստի սուբյեկտների՝ հեղինակի (խոսք կառուցողը) և հասցեատիրոջ (խոսքը ընկալողը) միջև: Ակադեմիական գրավոր խոսք ուսուցանելու պարագայում ժամանակավրեպ չէ Գրայսի կողմից առաջարկված «համագործակցային սկզբունքը»: Հեղինակն առաջարկում է կատարել ներդրում ըստ զրույցի նպատակի կամ ուղղության՝ դիտարկելով հետևյալ կանոնները՝

- որակ (փորձեք կատարել ձեր ճիշտ ներդրումը),
- քանակ (կատարեք ձեր ներդրումը անհրաժեշտ բավականաչափ բովանդակությամբ և ոչ ավելին),
- պատշաճություն (խուսափեք ոչ տեղին բաներ անելուց),
- ձև (եղեք հակիրճ և ճշգրիտ, խուսափեք աղտոտությունից և անորոշությունից) (Grice 1975, մեջբերվում է ըստ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի 2005):

Ակադեմիական գրագրության զարգացման մեկ այլ՝ «մտածել-այնուհետև-գրել» և «մտածել, երբ որ գրում ես» ռազմավարություններն արդյունավետ են, երբ համադրվում են (Hartley & Branthwaite 1989): Այն նպատակահարմար է կիրառել, երբ «մտածել-այնուհետև-գրել» ռազմավարությունը գրավոր առաջադրանքի բարդության պատճառով արդյունավետ չէ:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ գրավոր խոսքի և ակադեմիական գրավոր խոսքի ուսուցման ռազմավարությունները հիմնականում նույն են: Հետաքրքիր է, թե դրանք ինչ տարբերություններ ունեն: Ակադեմիական գրագրության պարագայում ուսանողները պետք է հստակ գիտակցեն, թե ինչ ոճով է շարադրվում միտքը: Համապատասխան ոճը կիրառելու առաջին դժվարությունն այն է, որ ուսանողները պետք է կարողանան բնութագրել ակադեմիական գրավոր խոսքի ոճը: Ընդ որում՝ ակադեմիական ոճը տարբեր գիտակարգերի շրջանակներում տարբեր է: Օրինակ՝ անգլերեն հոգեբանական ենթալեզվում կիրառվող հապավումները տարբերվում են մանկավարժության կամ փիլիսոփայության ենթալեզուներում շրջանառվող հապավումներից:

Այն ընդհանուր է նշված և այլ գիտական բնագավառներ ներակայացնող մասնագիտական լեզուների համար, քանի որ ակադեմիական գրավոր խոսքը պաշտոնական է, օբյեկտիվ, ճշգրիտ: Նրանում հազվադեպ են հանդիպում հապավումներ, ապաթարցներ, բացականչական նշաններ, խոսակցական լեզվաարտահայտչամիջոցներ, ծածկալեզու և դարձվածային միավորներ:

Անգլերեն գրավոր խոսքի ուսուցման անհրաժեշտ պայման է նաև այն, որ ուսանողները պետք է կարողանան տարանջատել այսպես կոչված առօրեական, պարզեցված գրավոր խոսքն ակադեմիական գրավոր խոսքից, որին բնորոշ է հունարեն և լատիներեն բառապաշարով պահունակված քերականությունը:

Բուն գրային փուլ: Այս փուլը, ըստ էության, գրավոր խոսքի առանցքային և գլխավոր մասն է, որի ընթացքում է ձևավորվում շարադրանքի հիմնական ասելիքը, տեքստի բուն բովանդակությունը, հեղինակի հիմնական փաստարկները, մտահաղացումները, եզրահանգումները: Յուրաքանչյուր գրավոր շարադրանք իմաստաբանական մակարդակում ունի/կամ պետք է ունենա/ հետևյալ տարրերը՝ ենթահիմք, ասույթ և միջֆրազային միասնություն: *Ենթահիմքը* շարադրանքի մեկնարկն է, այն ընդհանուր գծերով ներկայացնում է, թե ինչի մասին է հետագա շարադրանքը: Շատ հաճախ սովորողները դժվարություններ են ունենում ճշգրիտ և լիարժեք ենթահիմք կազմող նախադասություն կամ նախադասություններ շարադրելու ժամանակ: Յուրաքանչյուր ենթահիմքը պետք է պարունակի իմաստային կենտրոն (*controlling idea*): Վերջինս այն գլխավոր միտքն է, ասելիքի միջուկը, հաղորդակցական նորույթը, որը պետք է իր հետագա զարգացումը գտնի ասույթ նախադասությունների շրջանակում: *Ասույթը* շարադրանքի հիմնական բովանդակությունը կրող մասն է, ենթահիմք կազմող նախադասությունների բովանդակության մանրամասնումը, լուսաբանումը, ընդլայնումը: Այսինքն՝ պետք է լինի ենթահիմք-ասույթ երկմիասնություն, որտեղ ասույթը հաղորդակցական իմաստով կապված է իր ենթահիմքին: Հաղորդակցական տեսանկյունից կարելի է առանձնացնել ասույթի հետևյալ տեսակները՝ օրինակներ (*examples*), վիճակագրություն (*statistics*), մեջբերումներ (*quotations*) (Oshima & Hogue 2007): *Միջֆրազային միասնությունը* ենթահիմք-ասույթ նախադասություններից բաղկացած խումբ է, որին բնորոշ է խոսքը կազմող բաղադրամասերի

տրամաբանական դասավորությունը, պատճառահետևանքային կապը, կապակցության միջոցների և եղանակների կուռ համակարգը: Այսպես՝ բուն գրային փուլը պետք է սկսել ընդհանուր գծերով գրավոր խոսքի բովանդակության համառոտ շարադրմամբ՝ (outlining) պատշաճ ենթահիմք նախադասության առկայությամբ: Օրինակ՝

The Expression of Power in Ancient Egyptian and Greek Art

Ներածություն (Introduction)

Ենթահիմք (topic sentence) - **Ancient Greek religious art/topic/ expresses a restraint sense of power/controlling idea/**, whereas **ancient Egyptian religious art/topic/ expresses an oppressive sense of power/controlling idea/**.

Հիմնական մաս (body)

Ասույթ (supporting details, main points)- Egyptian temples, tombs and sculptures are massive, whereas Greek ones are moderate in size.

- a. examples of Egyptian buildings and sculptures;
- b. examples of Greek buildings and sculptures.

Egyptian art is unchanging and rigid, whereas Greek art changes and becomes naturalistic and realistic.

- a. Egyptian examples;
- b. Greek examples.

Egyptian art depicts a divine pharaoh, whereas Greek art depicts humanized gods.

- a. Egyptian examples;
- b. Greek examples.

There are even significant differences in painting.

- a. comment on Egyptian tomb and papyrus painting;
- b. comment on Greek vase painting.

Եզրակացություն (conclusion)

The Greek express power moderately and gracefully, whereas the Egyptians express power oppressively. The Greek view emphasizes man's dignity as a free and responsible creature doing the best he can in an unpredictable and harsh world. The Egyptian view


emphasizes man's dependence on the pharaoh and his need for continued obedience if he is to enjoy the good life made possible by his divine rules (Carroll 1990).

Սա ակադեմիական գրավոր խոսքի/էսսե/ համառոտ շարադրանքն է, որից սովորողը պետք է օգտվի հետագա ասելիքը զարգացնելու համար: Ինչպես գիտենք, գրավոր խոսքն անընդհատ «ծնվող» մտքերի ու գաղափարների գործընթաց է, ուստի այս փուլում ևս խրախուսվում է անհրաժեշտության դեպքում գործադրել նախագրային փուլում կիրառվող տեխնոլոգիաները՝ նոր գաղափարներ ու փաստարկներ գեներացնելու համար: Այս փուլում կիրառվող տեխնոլոգիաները բացառապես ուղղորդված են նյութի իմաստավորմանը, գաղափարների, երևույթների միջև ընդհանրությունների, տարբերությունների վերհանմանը: Առավել հայտնի և կիրառելի տեխնոլոգիա է *Վենի դիագրամը*: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են համեմատվող երևույթների ընդհանրությունները: Բուն գրային փուլում կիրառվող այլ տեխնոլոգիաներ են երկայուն T-աձև աղյուսակը, 10-րոպեանոց շարադրանքը, քառաբաժանը, հնգյակը: Արդյունավետ տեխնոլոգիա է փաստերի բուրգը, որտեղ ստեղծվելիք գրավոր շարադրանքում առկա փաստերը ներկայացվում են ստորակարգված՝ ըստ կարևորության աստիճանի: Օրինակ՝

The Moon has no atmosphere; without an atmosphere, the Moon has nothing to protect it from meteorite impacts, and thus the surface of the Moon is covered with impact craters, both large and small. /հիմնական գիտելիք/

The development of Earth is inextricably linked to the moon; The Moon's gravitational influence upon the Earth is the primary cause of ocean tides. In fact, the Moon has more than tw

ice the effect upon the tides than does the Sun. The Moon makes one rotation and completes a rotation around the Earth every 27 days, 7 hours, and 43 minutes. This synchronous rotation is caused by an uneven distribution of the mass in the Moon and has allowed the Earth's gravity to keep one side of the Moon permanently facing Earth. The



surface gravity of the Moon is about one-sixth that of the Earth's. Therefore, a man weighing 82 kilograms on Earth would only weigh 14 kilograms on the Moon/փասստեր/. The Moon also has no active tectonic or volcanic activity, so the erosive effects of atmospheric weathering, tectonic shifts, and volcanic upheavals that tend to erase and reform the Earth's surface features are not at work on the Moon. Even tiny surface features such as the footprint left by an astronaut in the lunar soil are likely to last for millions of years, unless obliterated by a chance meteorite strike. The geographical features of the Earth most like that of the Moon are, in fact places such as the Hawaiian volcanic craters and the huge meteor crater in Arizona/օժանդակ մանրամասներ/.

Հնգյակ: Անհրաժեշտ է որևէ գաղափարի կամ հասկացության վերաբերյալ կազմել հինգ տողանոց շարադրանք: Հնգյակ տեխնոլոգիայի շնորհիվ գրի առնված մտքերը հիմք կհանդիսանան հետագա շարադրանքի բովանդակության զարգացման համար: Հնգյակի

- ✓ առաջին տողում գործածվում է տվյալ գաղափարին վերաբերող մեկ գոյական կամ կապակցություն՝ plastic surgery;
- ✓ երկրորդում՝ երկու ածական՝ addictive, risky;
- ✓ երրորդում երեք մակբայ՝ considerably, slightly, respectively;
- ✓ չորրորդում չորս բայ՝ undergo, augment, reshape, improve;
- ✓ առաջին տողի գոյականի հոմանիշը՝ cosmetic surgery:

Ակադեմիական գրագրության համառոտ շարադրանքին պետք է հաջորդի գրելու բուն գործընթացը (writing), որի ընթացքում պիտի հանգամանալից շարադրվի գլխավոր ասելիքը՝ առանց ուղղագրական, կետադրական իրողությունների հաշվի առնելու (Տե՛ս հավելված 5):

Հետգրային փուլ: Սա ակադեմիական գրավոր խոսքի կառուցման վերջին և էական փուլն է, երբ հեղինակը ստուգում է շարադրանքը, կատարում ամփոփումներ, շտկումներ, ի մի է բերում բուն ասելիքը: Այսինքն՝ սա խմբագրման փուլն է: Խմբագրումը (editing) ենթադրում է տեքստի կառուցվածքաբովանդակային առանձնահատկությունների ճշգրտում (revising), ինչպես նաև լեզվական,

Կետադրական իրողությունների շտկում կամ սրբագրում (proof-reading): Հեյրստոնն առանձացում է խմբագրման հետևյալ ռազմավարությունները՝

- ✓ Adjust sentence length and variety
- ✓ Check sentence rhythms
- ✓ Review word choice
- ✓ Improve body language of the document
- ✓ Check usage
- ✓ Check spelling
- ✓ Review specifications
- ✓ Proofread (Hairston 1998).

Կրկնակի գրառումների օրագիր տեխնոլոգիան թույլ կտա կատարել համեմատություն, համադրում կամ եզրակացություն: Երկու ուղղահայաց սյունակներից մեկում գրվում է ըստ սովորողի ուշագրավ հատվածը, իսկ մյուսում՝ սովորողի մեկնաբանությունը: Օրինակ՝

1.Scientists say that in future people will live longer	with healthier lifestyle and better medical care we can live up to 90 or 100 instead of 70 and 75 like today
---	--

Այս փուլում կիրառվող տեխնոլոգիաներից են նաև խաթարված հերթականությունը, երբ սովորողները պետք է կարողանան խառը հերթականությամբ տեքստի հատվածները դասավորել իմաստային, ժամանակային ճիշտ հերթականությամբ: Մեկ այլ նպատակահարմար տեխնոլոգիա է ԳՈՍ-ը/գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ/:

Գիտեմ	Ուզում եմ սովորել	Սովորել եմ
Smoking can cause a number of diseases	Lung cancer, blood pressure oxygen supply	Tars, containing in cigareets cool inside the

		lungs
--	--	-------

Այսպիսով՝ դասագործը ընթացքում գործադրելով ակադեմիական գրավոր խոսքի ձևավորման արդյունավետությանը ուղղված ինտերակտիվ, նորարարական տեխնոլոգիաները նախագրային, բուն գրային, հետգրային փուլերում՝ կարելի է դյուրացնել ոչ միայն ակադեմիական գրագրության կառուցքաբովանդակային տարրերի յուրացումը, այլ նաև գրավոր խոսքի հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

2.2. Ակադեմիական գրագրության ուսուցման վարժությունների համակարգը

Ինչպես հայտնի է, ուսումնական գործընթացում պարտադիր պայմաններից մեկը վարժությունների միջոցով խոսքային գործունեության տարբեր տեսակների ձևավորումն է: Խոսքային գործունեության այս կամ այն տեսակի ձևավորումն ու զարգացումն ապահովող առաջնային գործոնի դերում հանդես են գալիս վարժությունները, որոնք կառուցվում են տարբեր գործոնների հենքի վրա/ըստ նպատակի, ըստ կատարման ձևի և տեղի և այլն/:

Որպես կանոն, մեթոդական աշխատություններում հանդիպում են վարժությունների տարաբնույթ դասակարգումներ: Ըստ Սկալկինի՝ վարժությունները լինում են լեզվական, խոսքային և հաղորդակցական (Скалкин 1983): Համաձայն Վոխմինայի դասակարգման՝ վարժությունները կարող են լինել լեզվական կամ նախապատրաստական, պայմանական-խոսքային կամ պայմանական-հաղորդակցական և խոսքային կամ բուն հաղորդակցական (Вохмина 1993): Շատիլովի կարծիքով՝ խոսքային վարժությունները միտված են սովորողների մոտ տարբեր իրադրություններում խոսքային հմտությունների զարգացմանը (Шатилов 1986): Ուստի, նպատակահարմար է այսպիսի վարժություններն անվանել բուն հաղորդակցական: Նմանատիպ վարժությունների վերջնանպատակը հաղորդակցական հմտությունների ձևավորումն ու զարգացումն է: Հետևաբար, վարժությունների այս տեսակի գլխավոր առանձնահատկությունը պետք է լինի իրադրայնությունը և դրդապատճառայնությունը: Մ.Գ. Աստվածատրյանը գտնում է, որ խոսքային կարողության ձևավորման հիմքը հաղորդակցական արժեք ներկայացնող բազմաթիվ վարժությունների կատարումն է: Հետևապես, իրադրական վարժությունների կիրառումը օտար լեզվի ուսուցումը մոտեցնում է հաղորդակցական բնական պայմաններին (Աստվածատրյան 1985):

Ինչ վերաբերում է գրավոր խոսքի ուսուցմանը, ապա ավանդաբար գրավոր խոսքի ուսուցման եղանակները կամ վարժությունները լինում են նախապատրաստական և խոսքային (Методика 1982, Աստվածատրյան 1985): Նախապատրաստական վարժություններն ուղղված են լեզվական միավորների և կառուցվածքների յուրացմանը:

Նախապատրաստական վարժությունների կազմի մեջ են մտնում լեզվական և՛ պրոդուկտիվ/արդյունարար/ և՛ ռեցեպտիվ/ընկալողական/ վարժությունները: Նախապատրաստական վարժությունների նպատակը լեզվական հմտությունների ձևավորումն է: Նախապատրաստական վարժությունների տեսակներ են լրացումը, կապակցումը, տարբերակումը, տեղադրումը, փոխակերպումը, կրճատումը, ընդլայնումը և այլն: Ա. Ա. Միրոյլուբովը նախապատրաստական վարժությունների շարքին է դասում նմուշ - վարժությունները (նմուշի փոխակերպում, դրանց ընդլայնում և այլն): Նախապատրաստական վարժությունների մեկ այլ տեսակն ուղղված է տեքստի վերաձևակերպմանը կամ շրջասմանը (paraphrase) և կրճատմանն (compression): (Տե՛ս հավելված 6):

Խոսքային վարժություններին Ա. Ա. Միրոյլուբովը վերագրում է շարադրությունը, պատմվածքը, նկարագրությունը, նամակ կամ բացիկ գրելը, այսինքն՝ որոշակի ժանրով տեքստի կառուցումը (Методика 1982): Այս տիպի վարժությունների նպատակն է զարգացնել սովորողների խոսքային կարողությունները: Խոսքային վարժությունների մի մասը կրում է ստեղծագործական բնույթ՝ բարձրացնելով սովորողների մտավոր ակտիվությունը և նյութի յուրացման արդյունավետությունը: Ա. Ա. Միրոյլուբովի դիրքորոշումը մոտ է արևմտյան մեթոդիստների դիրքորոշմանը, մասնավորապես՝ Բ. Էբբսին: Էբբսի հայեցակարգում նախապատրաստական և խոսքային վարժությունները ձևավորում են գրավոր կերպով որոշակի մտադրություններ արտահայտելու կարողություն, այսինքն՝ ստեղծել որոշակի ժանրով գրավոր խոսք (Abbs 1979): Նախապատրաստական վարժություններն այս դեպքում կարող են իրենցից ներկայացնել արդեն պատրաստի տեքստերի վերլուծություն, որը նպաստում է բառային և քերականական հմտությունների կատարելագործմանը: Որոշակի ժանրով գրված տեքստերի վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել այս կամ այն ժանրին հատուկ առանձնահատկությունները: Կարևոր է նշել, որ տեքստերի վերլուծությունը պետք է իրականացվի, հաշվի առնելով դրանց սոցիալ-մշակութային համատեքստը, ինչը թույլ կտա սեփական խոսույթի կառուցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են հաղորդակցման իրավիճակը, միջավայրը, մասնակիցները և այլն (Княжева 1999): Գալսկովան գրավոր խոսքի հմտությունների

զարգացման համար առաջարկում է ուսումնական գործընթացում գործադրել ընկալողական/ռեցեպտիվ/, վերարտադրողական/ռեպրոդուկտիվ/ և արտադրողական/պրոդուկտիվ/ վարժություններ (Галькова 2003): Առաջին խմբի մեջ են մտնում գրավոր խոսքի զարգացմանը նպաստող այնպիսի վարժությունները, որոնք ենթադրում են լեզվական իրողությունների նմանակման գործընթաց: Վարժությունների երկրորդ խումբը ենթադրում է սեփական գրավոր խոսքի կառուցում՝ տարաբնույթ լեզվական և իմաստային հենարանների գործադրմամբ /առանցքային բառեր, պլան, զննական միջոցներ/: Երրորդ խումբն ունի բացառապես արտադրողական բնույթ, ուստի ենթադրում է սովորողների ինքնուրույն գրավոր խոսքի կառուցում՝ առանց որևէ հենարանի կիրառությամբ: Խոսքային վարժությունները, Բ. Էբբսի կարծիքով, ուղղված են ըստ տիպանմուշի տեքստի կազմման կարողությունների զարգացմանը (Abbs 1979): Դրանք առավել ստույգ կարելի է սահմանել որպես սեփական տեքստի կառուցում՝ հաշվի առնելով տրված նմուշի (նմուշների) վերլուծությունը: Խոսքային վարժությունները մշակում են օտար լեզվով ինքնուրույն մտքեր արտահայտելու կարողությունները (Աստվածատրյան 1985): Նույն հեղինակն առաջարկում է կիրառել գրելու կարողություն ձևավորելու հետևյալ խոսքային վարժությունները՝

- գրավոր ներկայացնել նկարի կամ նկարների բովանդակությունը,
- ըստ տեքստի պլան գրել,
- ուսումնական գործընթացում ներգրավված ինչ-որ մեկին գրել շնորհավորական բացիկ կամ նամակ:

Սովորական բանաքաղությունից խուսափելու համար անհրաժեշտ է, որ սովորողները տիրապետեն որոշակի կարողությունների ու հմտությունների: Այս կարողություններն ու հմտություններն Ա. Օշիման և Ա. Հոգը դասակարգում են հետևյալ կերպ՝

- լայն թեմայի ընտրություն և որոշակիացում (compression),
- ստեղծագործական գաղափարների որոնում,
- թեմայի հետագա հստակեցում,
- յուրաքանչյուր պարբերության ենթահիմքի հստակեցում,

- տեքստի ծավալուն պլանի կազմում,
- ուրվագրում (սևագրում),
- բովանդակության և տրամաբանակառուցվածքային կազմակերպման ստուգում,
- ստուգում
- վերջնական տարբերակի ստեղծում (Oshima & Hogue 2007):

Խոսքային վարժությունների հետևյալ հաջորդականությունը կիրառվում է նաև գործընթացային մոտեցման ժամանակ (process approach): Սակայն այն հանգամանքը, որ սովորողները խոսքային վարժությունների կատարման ժամանակ անընդհատ «դիմում» են տեքստ - նմուշներին, չի նշանակում, որ նրանք զրկվում են ինքնուրույն, ստեղծագործական գաղափարներ առաջադրելուց: Տեքստ - նմուշներին անդրադառնալն անհրաժեշտ է թեմայի ընտրության, նեղացման և ստեղծագործական գաղափարների որոնման փուլում, քանի որ ակադեմիական գրավոր խոսքը գրագրություն է սկզբնաղբյուրներից(writing from resources), և հետևաբար գաղափարների մի մասը սովորողները քաղում են տեքստ-նմուշներից: Իսկ գրվածի շտկման փուլում սովորողները օգտվում են տեքստ-նմուշների վերլուծության արդյունքներից սեփական գրագրության սոցիալ-մշակութային համատեղելիության և տրամաբանակառուցվածքային ճշգրտության բացահայտման համար:

Ակադեմիական գրագրության ուսուցումը բավականին բարդ և ժամանակատար գործընթաց է, որը ներառում է երկու՝ միմյանց փոխլրացնող ճանաչողական և ստեղծագործական փուլեր:

Ճանաչողական փուլում իրականացվում է տարաբնույթ ակադեմիական տեքստերի վերլուծություն, որին հաջորդում է տեքստ - նմուշների հիման վրա սեփական տեքստերի ստեղծումը, այսինքն՝ սովորողները վերլուծական աշխատանքից անցնում են ստեղծագործականի: Ելնելով հետևյալ փուլերի հաջորդականությունից՝ առաջարկվում է վարժությունների համակարգ, որն ընդգրկում է ընկալողական /նեցեպտիվ/ և արդյունարար /պրոդուկտիվ/ վարժություններ:

Ակադեմիական գրագրության ուսուցման ընթացում ընկալողական վարժությունները նպաստում են սովորողների մոտ զարգացնել ակադեմիական գրավոր խոսքի

լեզվաոճական առանձնահատկությունները, գաղափար են տալիս տեքստի կառուցվածքի, կապակցվածության, տրամաբանական հաջորդականության, ոճի մասին: Այսպիսի վարժությունները ներառում են հետևյալ առաջադրանքները.

- Կարդալ տեքստը և ընդգծել դրանում կիրառված կապակցման նշաններ (Read the text and underline all the transitional signals used in it).

1. I am a very superstitious person. First of all, I have a lot of superstitions about school, especially tests. For example, always wear the pearl necklace that my grandmother has given me. I think it brings me good luck, and I am afraid that I will do poorly if I forget to wear it. When I get to school, I always find a seat right in the middle of the room, sit down, and then switch my watch to my right wrist before the test begins. In addition; I am very superstitious about travelling. I will never start a trip on a Friday because I am sure it will bring me bad luck.

2. The English language has some truly remarkable statistics. Out of the world's 6000 languages, English has the richest vocabulary, with over 500,000 words and an additional half million scientific and technical terms. It is the native language of over 400 million people scattered across every continent. In fact, English is used in some way by one out of seven human beings around the globe, making it the most widely spoken language in history. There are also some astonishing facts about written English. Approximately 50 percent of the world's books are published in English. In addition, three quarters of all mail, faxes and cables are written in English. Similarly, more than half of all scientific and technical journals are written in English, making it truly the international language of technology. Over 90 percent of all the information stored in computers around the world is English. Technology is not the only area where English is the dominant language. Over half of all business deals in Europe are conducted in English and many more are negotiated in English. English is also the language of sports and glamour. It is the official language of both the Olympics and the Miss Universe Pageant. Finally, English is the language of over 60 percent of the world's radio and TV programs.

- Կարդալ հետևյալ նախադասությունները և ընդգծել կրավորական կառույցները (Read the following sentences and underline the passive constructions).

1. Spartan children were taught by their parents to endure all hardships.
2. A composition was being written by 2 of the girls.
3. She said that the new time-table had not yet been hung up on the notice-board.
4. All the passengers in the bus were listening to the story of the boy who had been saved from drowning by the quickness of the driver.
5. After the facts had been thoroughly explained to her, she no longer felt worried.
6. Your plants will be looked after by me properly while you are away.
7. Large areas of forest are destroyed by people.

- Կարդալ տեքստը և նշել դրա կառուցվածքային դասավորվածությունը (Read the text and mark out its structural arrangement).

1. Behavioral scientists are interested in the complex navigational system of homing pigeons. Homing pigeons have been known to fly more than 1,600 km in two days. According to the most recent research, homing pigeons use a combination of several navigational cues. One cue they use is the position of the sun. Using the sun as their compass, they compensate for its apparent movement, see both ultraviolet and polarized light, and employ a backup compass for cloudy days. Another navigational cue homing pigeons use is based on their mental map of the landmarks in their home areas. Even if a pigeon is taken hundreds of kilometers from its loft in total darkness, it will depart almost directly for home when it is released. The most important cue homing pigeons use is the magnetic field of the earth. Their magnetic compass enables homing pigeons to navigate on cloudy and foggy days.

2. Water covers almost three-quarters of the earth's surface. Over 97 percent of all this water is stored in the earth's four huge oceans: the Pacific, Atlantic, Indian and Arctic Oceans. However, the earth has not always had oceans. Millions of years ago it was just a ball of hot rock. Its surface was covered with erupting volcanoes which released huge amounts of gas, including a gas made up of water particles, called water vapour. Eventually,

the Earth cooled, causing the water vapour to turn back into liquid water and fall from the skies as torrential rain. The rain lasted for thousands and thousands of years and gradually filled all the hollows around the earth's surface, forming oceans and seas.

- Լրացնել բաց թողած տեղերը՝ բառերը կիրառելով ճիշտ ժամանակաձևով (Fill in the gaps using words in correct form).

No sooner (1)... (I/start) working at Taylforth Nielsen, the computer company, than I realised it was the perfect opportunity for my hobby: hacking! Don't get me wrong. At no point (2)... (I/have) ever stolen anything. I do it for the challenge. Not only (3)... (I/like) proving I can it, but sometimes (4)... (it /help) a company to build a better security system. Rarely (5)... (they/see) it like that, of course. I decided I would see if I could break into the Grand Bank system. Little (6)...(I/realize) what was waiting for me. The second day of working there, hardly (7)...(everyone else/ leave) when I started to try simple passwords. Seldom (8)... (this/is) enough, though. You usually have to work much harder than that. Not until midnight (9)... (I/get) access to the Grand Bank system. Hardly (10)... (I/have) time to look around the system when the door to my office flew open and three men rushed in. Only when (11)...(they/show) me their ID (12)...(I/realize) that it was the police. They had been expecting something like this and had traced my computer. Not only (13)...(I/be fired), but (14)...(they/keep) all my computer records, too. Maybe it's time to find another hobby.

- Ընդգծել զուգահիշ կառույցները (Underline the parallel structures).

1. Many plants are pollinated by animals, such as bees, birds or bats.
2. Listening is as much a persuasive technique as speaking.
3. Music expresses at different moments serenity or exuberance, regret or triumph, fury or delight.
4. The earth's nearest neighbour has mountains taller than Everest, valleys deeper than the Deep Sea, and highlands bigger than Australia.
5. To say that some truths are simple is not to say that they are unimportant.

- Կետադրել հետևյալ հատվածը (Add punctuation to the following passage).

Are you often late for school or work Psychologists say that lateness is rarely an accident More likely it is connected to unconscious feelings about school or your job You may be

bored and lateness is your way of expressing your resistance to wasting your time Or if you feel insecure because of poor achievement lateness is your way of saying no to an unhappy situation Then again you may resent authority You want to feel free unhampered by rules regulations bells time clocks and ID cards Any one of those could account for your tardiness.

- Վերաշարադրել հետևյալ պարբերությունը: Ուղղել սխալ տեղադրված և անորոշ լրացումները (Rewire the following paragraph. Correct misplaced and dangling modifiers).

Washington Irving's stories often contain elements of fantasy. In one story, Rip van Winkle slept through the whole American Revolution that Irving wrote. Waking up, his rusted mesket should have indicated that something unusual had happened. Rip was greeted by other puzzling things strolling into town. The faces of the people were all strange that he met. Hanging over the door of the inn Rip noticed George Washington's portrait. King George's portrait had always hung there before. Rip then looked for his old friend, the innkeeper. Rip questioned an old man trying to find the innkeeper. The old man replied, " He is dead these eighteen years".

Արդյունաբար/պրոդուկտիվ/ վարժություններն ուղղված են սովորողների մոտ ստեղծագործական հմտությունների զարգացմանը: Այստեղ խնդիրը հաղորդակցական արժեք ներկայացնող բազմաթիվ վարժությունների կատարումն է, որը սովորողներին կմղի կիրառել օտար լեզուն որպես հաղորդակցության միջոց: Այսպիսի վարժություններն ներառում են՝

- Գրել էսսե տրված թեմաներից որևէ մեկով (Write an essay on one of the topics).
 - ✓ What a tangled web we weave when first we practise to deceive. /Walter Scott/
 - ✓ The chains of habit are too weak to be felt until they are too strong to be broken. /Samuel Johnson/
 - ✓ A man is known by the company he keeps.
 - ✓ After us the deluge.
 - ✓ Forbidden fruit is the sweetest.
- Գրել զեկույց՝ օգտագործելով հետևյալ պնդումները (Write a report using the following statements).

- Teenage smoking is on the rise.
- Smoking can cause lung cancer.
- Smoking is relaxing and, therefore, enjoyable.
- According to the recent New York Times article, cigarette smoking is increasing among adults in their forties as well as among the college educated and those earning more than 35,000 annually.

- Վերլուծել հետևյալ խնդիրը և առաջարկել լուծումներ (Analyze the following problem and suggest solutions).

Computer and the Internet have become the problem as well as the solution in education. Children spend too much time in front of computers, but some programs are helpful. They may have learned a lot from the Internet but they can't resist turning on the computer as soon as they get home. Certainly no educator would object to the proper use of the Internet. Still, is there any educational value in sitting in front of the "boob tube" for hours surfing the Internet? Computer is a coin with two sides and it's a toss-up whether it does more harm or good.

- Պարբերական հանդեսներից կամ ժողովածուներից ընտրել հոդվածներ և գրել ամփոփումներ/անոտացիա/ (Choose articles from periodicals or collected articles and write annotations to them)

- Գրել որևէ զեկուցման կամ գիտական հոդվածի դրույթները կամ շարադրանքն ամփոփող թեզիս (Write a summarizing thesis to a report or to a scientific article)

- Գրել կարճ հոդված՝ նվիրված որևէ թեմայի, գաղափարի, հիմնահարցի ուսումնասիրմանը (Write a space-saving article on any topic, idea or analysis of a problem)

Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում նախապատրաստական և խոսքային վարժությունները փոխադարձաբար կապված են միմյանց հետ, քանի որ նախապատրաստական վարժությունները հիմնականում ծառայում են լեզվական հմտությունների ձևավորմանը, իսկ խոսքային վարժությունները զարգացնում են սովորողների ստեղծագործական, մտքերն ինքնուրույն ձևակերպելու հմտությունները:

Ակադեմիական գրագրության ուսուցման գործընթացում այս վարժությունները գործադրվում են ոչ թե մեկուսացված ձևով, այլ ամբողջության մեջ:

2.3. Ակադեմիական գրագրության ուսուցման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը

Դրական փաստ է այն, որ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում դեռևս առաջին կուրսում համապատասխան ուշադրություն են դարձնում ակադեմիական գրագրության հիմնատարրերի ուսուցմանը: Ինչպես արդեն վերը նշվեց, ակադեմիական գրագրության կոմպետենցիան ձևավորվում է ուսանողների մոտ թե՛ բուն ակադեմիական գրագրության, թե՛ նրան հարակից առարկաների ուսուցման ժամանակ: Այդ առումով կարևորվում է «Անգլերենի հաղորդակցման և թարգմանության» ամբիոնի դերը: Սույն ամբիոնի դասախոս Բ.Գ.Թ. Ա. Զաքարյանի կողմից մշակվել է «Գրավոր հաղորդակցման հմտություններ» դասընթացի առարկայական նկարագիրը: Դասընթացը նախատեսված է բակալավրատի առաջին կուրսի ուսանողների համար: Այն տևում է մեկ կիսամյակ «Թարգմանական գործ» /ռուսերեն, անգլերեն, հայերեն/ մասնագիտական բաժնում: Դասընթացի նպատակն է ուսանողների քերականական կոմպետենցիայի զարգացնելը: Հեղինակը շեշտադրում է քերականության դերը գրավոր և բանավոր հմտությունների ձևավորման գործում: Ըստ այդմ՝ խնդիր է դրվում զարգացնել գրավոր հաղորդակցական հմտությունները՝ միտված պատվեր լրացնելուն, ճանապարհորդելուն, գրավոր ցուցումներ տալուն, անձնական բլոգը լրացնելուն, պատվածք, ներկայացում պատրաստելուն: Դասընթացի վերջում խնդիր է դրվում բարելավել հետևյալ մակարդակները՝ 1-ին կուրս 1-ին կիսամյակ – A2 (CEFR), 1-ին կուրս 2-րդ կիսամյակ – B1 (CEFR):

Այսպիսով, գրավոր հմտությունների զարգացումը դասընթացի խնդիրներից մեկն է համարվում: Ընդ որում՝ բանավոր և գրավոր կարողություններն ու հմտությունները հանդես են գալիս միասին: Գործնականում խնդիր է դրվում օգնել ուսանողներին առաջադրել գաղափարներ գրելու ընթացքում և կազմել նախադասություններ՝ ըստ պարբերության: Ուսուցման առաջարկվող մեթոդները փոխներգործուն են, ինչպիսիք են՝ իրադրություններ կազմելը (making up situations), քննարկումները (discussions), ներկայացումները (presentations), թիմային աշխատանք (team-work): Ինչ վերաբերում է

առաջադրանքներին, ապա դրանք իրենց բնույթով ավանդական են: Այստեղ ներառված են մի շարք վարժություններ, որոնք կազմված են՝ ելնելով բազմակի ընտրության սկզբունքից:

Դասընթացի կարևոր ընթացակարգերից մեկը ներառում է գրավոր թեստավորումը: Առանձնանում են մտագրոհի և թելադրության մեթոդները: Առարկայական նկարագրի կարևոր բաղկացուցիչ են ուսանողներին առաջադրվող պահանջները, որոնք վերաբերում են նրանց քերականական գիտելիքներին: Դրական է այն, որ բավականին լավ են ձևակերպված գրավոր խոսքին վերաբերող պահանջները: Այս պահանջները միտված են սովորողների մոտ ինքնուրույն գրավոր «արտադրանք» ստեղծելուն, ինչպիսիք են ընկերոջ, հյուրի համար հրահանգներ գրելը (writing instructions for a guest or friend), անձնական նամակներ, նորություններ գրելը և հարցնելը (writing personal letters, your own news and asking for other people's news), պատմվածք գրելը, բիզնես կամ որևէ գիտական գործընթացի նկարագրելը (writing a story, describing a business or scientific process), ներկայացում նախագծելը (planning a presentation) և այլն:

Նույն ամբիոնի դասախոս Բ.Գ.Թ. Կ. Աղաբեկյանի կողմից մշակվել է «Գրավոր հաղորդակցման հմտություններ» դասընթացի ևս մեկ առարկայական նկարագիր: Դասընթացը նախատեսված է բակալավրատի երկրորդ կուրսի ուսանողների համար: Այն տևում է մեկ կիսամյակ «Թարգմանչական գործ» /ռուսերեն, անգլերեն, հայերեն/ մասնագիտական բաժնում: Սույն դասընթացի նպատակը նույնպես ուսանողների քերականական կոմպետենցիայի զարգացումն է: Հեղինակը շեշտադրում է քերականության կիրառման դերը գործնականում գրավոր և բանավոր հմտությունների ձևավորման գործում: Մեթոդներն են՝ իրադրություններ կազմելը (making up situations), քննարկումները (discussions), թիմային աշխատանք (team-work), մտագրոհը (brainstorming), գիտության, պատմության, արվեստի բնագավառներին առնչվող բնագրերի վրա հիմնված վարժություններ (topic-based exercises from areas such as Science, History and the Arts) և այլն:

Կարևոր է այն, որ ամեն մի մոդուլի վերջում ուսանողների գիտելիքները ստուգվում են գրավոր թեստերի միջոցով:

‘Grammar-based Writing’ դասընթացի պատասխանատու Նաիրա Գասպարյանը ներկայացնում է առարկայական նկարագիր՝ նախատեսված 3-րդ կուրսի ուսանողների համար, ովքեր ընտրել են «Լեզվաբանություն» մասնագիտությունը: Ըստ այդ նկարագրի՝ դասընթացի նպատակն ակադեմիական գրագրության հմտությունների ձևավորումն է հետազոտական աշխատանք /կուրսային, ավարտական աշխատանք/ աշխատանք/ գրելու սկզբնական կամ տարրական մակարդակում: Մեթոդական մակարդակում առաջընթաց է այն, որ հեղինակը շեշտադրում է ակադեմիական գրագրության արդյունավետ ռազմավարությունների կիրառման հիմնախնդիրը: Դասընթացի առարկայական նկարագիրն աչքի է ընկնում իր ամբողջությամբ և համապատասխանում է ակադեմիական գրագրությանն առաջադրվող արդի պահանջներին: Ինչպես նշում է հեղինակը. «Դասընթացը ներառում է տիպական դժվարություններ, որոնք հանդիպում են ակադեմիական գրագրության ուսուցման ընթացքում, ինչպես նաև գրագրողությունից խուսափելու և փաստարկների համալիր գնահատման ռազմավարությունները»: Խնդիր է դրվում սովորեցնել ուսանողներին համոզիչ հաղորդակցության (persuasive communication) ընթացքում ձևավորել համոզիչ գրավոր խոսք, որի նպատակն է կարողանալ փաստարկված հարցադրումներ անել, վստահություն ներշնչել, համոզել փաստարկված, տարածայնությունները հարթել կամ բանակցել: Սույն առարկայական նկարագրում առաջին պլան են մղվում ոչ միայն քերականական հմտությունների ձևավորման և զարգացման հիմնահարցը, այլ նաև արդյունավետ գրավոր «արտադրանք» ստեղծելու հաջորդականությունը կամ փուլերը:

Առաջադրվող ուսումնառական խնդիրներից են արդյունավետ գրագրության տարրերի զատորոշումը (recognize specific elements of effective writing), տարբեր հետազոտական աշխատանքներում արդյունավետ գրագրության առաջնահերթության գիտակցումը (recognize the importance of effective writing in different research papers), քերականության կարևորության ընկալումը (recognize the importance of grammar in effective academic writing), գրելու փուլայնության ըմբռնումը (recognize the main stages of writing): (Շարունակայությունը տե՛ս հավելված 7):

Ինչ վերաբերում է մակարդակին, ապա նախանշվում է B2: Սա ենթադրում է հաշվի առնել հետևյալ չափանիշները՝

- զարգացնել քերականության պաշտոնական ոճը ակադեմիական գրագրություն ուսուցանելիս (develop formal grammar style in academic writing),
- զարգացնել հատուկ գրագրական հմտություններ ակադեմիական գրագրություն ուսուցանելիս (develop special writing skills in academic writing),
- կազմակերպել աշխատանքը՝ նախանշելով հատազոտական ռազմավարությունները (organize the work by setting up search strategies)

(Շարունակությունը տե՛ս հավելված 7 ա):

Հետաքրքրական է այն, որ հավուր պատշաճի չեն ներկայացված հետազոտության մեթոդները՝ դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ, բանավեճեր և ներկայացումներ: Խոսելով ակադեմիական ազնվության մասին՝ հեղինակը ներկայացնում է գրագողությունից, հուզական բառերից (loaded words), կաղապարային արտահայտություններից (cliches) խուսափելու ռազմավարությունները:

Նաիրա Գասպարյանը ներկայացնում է ևս մի ծրագիր, որը ուղղակիորեն վերաբերում է ակադեմիական գրագրության ուսուցմանը, սակայն՝ ասպիրանտուրայում: Այդ դասընթացն անվանվում է «Ակադեմիական գրագրություն օտար լեզվով (անգլերեն): Նախապայմանները ներկայացնելով՝ Նաիրա Գասպարյանը նշում է. « Այս դասընթացին մասնակցելու համար ուսանողները պետք է տիրապետեն հիմնական հմտություններին և գիտելիքներին, որոնք անհրաժեշտ են անգլերեն լեզվով գրավոր խոսք իրականացնելու ժամանակ: Այսինքն՝

- տիրապետեն ուղղագրության հիմնական տարրին,
- տիրապետեն գրավոր խոսքի հիմունքներին (fundamentals of effective writing),
- կարողանան միացնել, ճիշտ զարգացնել և կիրառել պարբերության հիմնական կառուցվածքի ընդհանուր մոդելը, որը կհանգեցնի թեմայի առավել խորը ընկալմանը՝ ի տարբերություն առանձին գրավոր խոսքի հմտությունների մեխանիկական ուսուցմանը: Հերթականությամբ օգտագործել նախադասությունները, որպեսզի իրենց արտահայտած մտքերը առավել հեշտ լինի կարդալ և ընկալել,
- պետք է ծանոթ լինեն(մասամբ) գիտական հետազոտության մեթոդներին և ռազմավարական պլանավորմանը»:

Կարևորվում է հատկապես այն բաժինը, որը վերաբերում է ակադեմիական գրագրության դասընթացի նպատակին: Հեղինակն առանձնացնում է հետևյալը. «Ուսուցանել ուսանողներին (ասպիրանտներին) արդյունավետ գիտական աշխատանք (հոդված, զեկույց և ատենախոսություն գրելու հիմունքները» (Constructing Research Paper, Articles in Academic Writing): Ծրագիրը հաջողված է, քանի որ ըստ հեղինակի, ուսանողը պետք է տիրապետի՝

- ❖ քաղվածքների և մեջբերումների առանձնահատկություններին,
- ❖ դրույթային /հակադրույթային նախադասության /մտքի/ ձևակերպման սկզբունքներին,
- ❖ տեքստի մասնիկների իմաստային կապին և կապակցությանը,
- ❖ գիտահետազոտական աշխատանքի առանձնահատկություններին:

(Շարունակությունը տե՛ս հավելված 8):

Համապատասխան տեսական և մեթոդաբանական գրականության, ինչպես նաև ակադեմիական գրագրության գործող դասընթացների վերլուծությունը հնարավորություն ընձեռեց հիմնավորել քառաստիճան՝ /ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանք, հոդված/ մոդելի արդյունավետությունը, որի նպատակն է փուլ առ փուլ ծանոթացնել ուսանողների գիտական աշխատանք գրելու տեխնոլոգիաներին՝ հաշվի առնելով ակադեմիական գրագրության հաղորդակցական ռազմավարությունները:

Մոդելը ենթադրում է թե՛ բակալավրատում, թե՛ մագիստրատուրայում առաջին պլան մղել գիտական աշխատանք գրելու կարողությունների ձևավորման հիմնախնդիրը: Ըստ այդմ՝ հստակեցվել են ակադեմիական գրագրության այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են գիտական հոդված գրելու համար: Առաջարկվող մոդելը նույնպես չի հրաժարվում արդյունք-տեքստի վրա հիմնվելու, գործընթացային և ժանրային մոտեցումներից համադրումից և ինտեգրումից:


Առաջարկվող ինտեգրատիվ կաղապարը ենթադրում է՝

1. Ուսումնասիրել ակադեմիական գրագրության կոմպետենցիան զարգացնող բոլոր դասընթացները՝ հաշվի առնելով դրանց ուղղվածությունը, ընդհանուր և տարբերակիչ կողմերը:

2. Շեշտը դնել այնպիսի գործնական առաջադրանքների կատարման վրա, որոնք նպաստում են նշված կոմպետենցիայի զարգացմանը:

3. Ցանկացած ոճական հնար յուրացնել ռեֆերատի, հոդվածի, զեկույցի, կուրսային կամ ավարտական աշխատանք աշխատանք իրականացնելիս:

Ակադեմիական գրագրության ուսուցման ինտեգրատիվ կադապարը



Սակայն ակադեմիական գրագրության կարողությունների ընտրությունը պայմանավորված է քառաստիճան մոդելի բովանդակային և գործառական բնութագրերով: Դա ենթադրում է առանձնացնել այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են ռեֆերատ, կուրսային, ավարտական աշխատանք, հոդված գրելու համար: Շեշտադրվում է այն գաղափարը, որ ակադեմիական գրագրության ուսուցանումը կարող է լինել արդյունավետ, եթե ուսուցման որոշակի փուլում առաջին պլան է մղվում այս կամ այն ժանրի տեքստերի ստեղծման պահանջը: Դա բխում է գիտական բնագավառում գործունեություն ծավալելու տրամաբանությունից: Արդյունավետ է, երբ ուսանողը կամ ուսանողներն ակադեմիական գրագրության կարողություններ են ձեռք բերում որևէ կոնկրետ ժանրում կամ ժանրերում: Դրա հետ

մեկտեղ՝ նշված մոդելը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ անհրաժեշտ է առանցքային համարել դիդակտիկական մատչելիության և հաջորդականության սկզբունքները: Ուսանողները կկարողանան գրել ինքնուրույն գիտական հոդվածներ, եթե ուսուցման տարբեր փուլերում հաղթահարել և յուրացրել են ռեֆերատ, կուրսային և ավարտական աշխատանք գրելու դժվարությունները և առանձնահատկությունները:

Փորձարարական ուսուցման նպատակն առաջարկվող, մշակված որևէ մեթոդական համակարգի, մոդելի կամ նախագծի արդյունավետության հիմնավորումն է: Հնարավոր է նաև, որ առաջադրվող նախնական վարկածը փորձարարական ուսուցման ընթացքում չհաստատվի: Փորձարարական թեստավորումը փորձարարական ուսուցման կարևոր բաղադրիչ է, որը կարելի է գործադրել և՛ ընթացիկ, և՛ ավարտական ստուգման ժամանակ: Ընդհանուր առմամբ, կիրառվել են թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից ուսուցման մեթոդներ՝ դասախոսություն, սեմինար, քննարկում, բանավեճ, ներկայացում, ակտիվ և փոխներգործուն մեթոդներ՝ փաստերի ցուցադրման և ապացուցման մեթոդը, SLOOWER մեթոդը, ինչպես նաև իրադրություններ կազմելու (making up situations), թիմային աշխատանքի (team-work), գրավոր թեստավորման, մտազրոհի, գիտության, պատմության, արվեստի բնագավառներին առնչվող բնագրերի վրա հիմնված վարժություններ կիրառման (topic-based exercises from areas such as Science, History and the Arts) և այլ մեթոդներ: Փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվել են բնագրեր՝ վերցրած թե՛ ակադեմիական գրագրության դասագրքերից, թե անգլալեզու ՋԼՄ-ներից: Փորձարարական ուսուցում իրականացնելու համար ընտրվում է փորձարարական խումբ: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի չորրորդ կուրսում իրականացվել է փորձարարական ուսուցում: Փորձարարական խմբի ուսանողների քանակը 34 է, իսկ ստուգողական խմբի ուսանողների քանակը՝ 35: Ուսանողների կարողությունները գնահատվել են 100 բալանոց սանդղակով: Բացի շրջանառության մեջ գտնվող անգլերենի քերականության և ակադեմիական գրագրության դասագրքերից, վերլուծվել են նաև ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված ուսանողների ռեֆերատները, կուրսայինները և ավարտական աշխատանքները:

Փորձարարական ուսուցման ընթացքում համապատասխան տեքստերի, վարժությունների և մեթոդների կիրառման արդյունքում փորձ է արվել ստուգել և զարգացնել ուսանողների ակադեմիական գրագրության հետևյալ կարողությունները՝

1. ընտրել և կոնկրետացնել թեման,
2. առաջադրել տեքստ գրելու նպատակը,
3. կազմել նոր տեքստի պլանը,
4. հավաքագրել փաստեր և փաստարկներ,
5. առաջ քաշել գաղափարներ, հստակեցնել հասցեատիրոջը,
6. շարադրել և քննադատաբար ընթերցել տեքստի սևագիրը,
7. վերլուծել գրավոր խոսույթը,
8. բացահայտել գրավոր և բանավոր խոսույթների ոճաժանրային, տրամախոսական, տրամաբանական տարբերությունները,
9. առանձնացնել ակադեմիական գրագրության տարրերը՝ ըստ ենթատեքստի, ժանրի և իրադրության,
10. ստեղծել որոշակի ժանրով գրավոր խոսք:

Փորձարարական և ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների ամփոփիչ տվյալներ

Աղյուսակ 3.

Կարողություններ	Փորձարարական խումբ N – 34		Ստուգողական խումբ N – 35	
	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում	Գիտափորձի սկզբում	Գիտափորձի վերջում
1.Ընտրել և կոնկրետացնել թեման	95	98	95	96

2.Առաջադրել տեքստ գրելու նպատակը	94	97	93	95
3.Կազմել նոր տեքստի պլանը	93	96	94	95
4. Հավաքագրել փաստեր և փաստարկներ	94	97	94	95
5. Առաջ քաշել գաղափարներ, հստակեցնել հասցեատիրոջը	91	96	91	94
6. Շարադրել և քննադատաբար ընթերցել տեքստի սևագիրը	92	96	91	94
7.Վերլուծել գրավոր խոսույթը	89	95	89	92
8. Բացահայտել գրավոր և բանավոր խոսույթների ոճաժանրային, տրամախոսական, տրամաբանական տարբերությունները	89	96	89	93
9.Առանձնացնել ակադեմիական գրագրության տարրերը ըստ ենթատեքստի, ժանրի և իրադրության	90	96	90	94

10. Ստեղծել որոշակի ժանրով գրավոր խոսք	90	96	90	94
--	----	----	----	----

Ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ փորձարարական, թե՛ ստուգողական խմբերում ուսանողները դեռևս ուսուցման նախնական փուլում զգալիորեն ճիշտ են ընտրում և որոշակիացնում թեման: Պատահական չէ, որ ուսուցման ավարտական փուլում ցույց տված արդյունքների տարբերությունը մեծ չէ, ընդամենը երկու միավոր:

Նույնը վերաբերում է «ստեղծվող տեքստի գրելու նպատակը առաջադրելուն»՝ երկու միավոր: Ինչ վերաբերում է նոր տեքստի պլանը կազմելուն, ապա փորձարարական և ստուգողական խմբերի տարբերությունն ընդամենը մեկ միավոր է: Այստեղ կարևորվում է այն, որ նպատակաուղղված ուսանողներն ավելի արագ են առաջադիմում:

Կարևոր է նաև այն, որ ուսանողները հստակորեն գիտակցեն «փաստեր և փաստարկներ հավաքագրելու» նպատակը, կարևորությունը նոր գրավոր տեքստեր ստեղծելու գործընթացում: Ստուգողական խմբերում շատ ուսանողներ լրջությամբ չեն մոտենում այդ խնդրին: Ուսանողների մեծամասնությունը հակված է այն մտքին, որ փաստերի հավաքագրումն ամենադժվարին բաղադրիչն է, և մեծ ջանքեր չի պահանջում: Սակայն այն, իրականում, ենթադրում է համալիր և գիտակցված մոտեցում:

Որպես կանոն, լեզվական բուհի ուսանողները դժվարանում են նոր գաղափարներ առաջադրելու, ասույթի հասցեատիրոջը հստակեցնելու առումով: Սակայն նախնական բացատրական աշխատանքը տալիս է ցանկալի արդյունք: Պատահական չէ, որ փորձարարական խումբն երկու միավորով գերազանցում է ստուգողական խմբին:

